ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ԱՊՐԻԼ 2013

Լիահոնա

Հիսուս Քրիստոս. Քավիչ և Օրինակ, էջեր 18, 26

Ընկերները նրանք են, ովքեր . . . , էջ 52

Արդյո՞ք դուք դարձի եք եկել: Իմանալու 10 եղանակ, էջ 56

Խոսել տաճարների մասին ձեր երեխաների հետ, էջեր 62, 64

«Քրիստոսի Լույսը այն աստվածային զորությունն է կամ ազդեցությունը, որը ճառագայթում է Աստծուց Քրիստոսի միջոցով: Այն լույս և կյանք է տալիս բոլոր բաներին»:

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ, Տասներկու Առաքյալների Քվորում, "Peace of Conscience and Peace of Mind," *Liahona,* Nov. 2004, 15:

Լիահոնա, Ապրիլ 2013

26

ՈՒՂԵՐՁՆԵՐ

4 **Առաջին Նախագահության Ուղերձ. Նա հարություն առավ**
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

7 **Այցելող Ուսուցիչների Ուղերձ. Տաճարային ուխտերը**

ԸՆՏՐՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

12 **Մահ և կյանք. Հարության վերաբերյալ պիոներների հեռանկարները**
Պիոներները և վաղ օրերի մարգարեները վկայում են հարության երևույթի մեջ հույս գտնելու մասին:

18 **Հիսուս Քրիստոսի առաքելությունը և ծառայությունը**
Երեց Ռասսել Մ. Նելսոն
Մենք կարող ենք հետևել Փրկչի կյանքի հինգ ուղղություններին, եթե ձգտենք հետևել Նրան և հավատալ Նրա Քավությունը:

26 **Զատկի շաբաթ**
Իր կյանքի վերջին շաբաթվա ընթացքում Փրկիչը գործեց ամենամեծ հրաշքը:

30 **Օգնել երեխաներին պատրաստվել մկրտությանը**
Ջեսիկա Լարսեն և Մարիսա Վիդիսոն
Ի՞նչ կարող են անել ծնողները իրենց երեխայի մկրտությունը ավելի իմաստալից դարձնելու համար:

34 **Մղում դեպի Տաճար**
Երեց Ջաիրո Մազագարդի
Տեսնենք, թե ինչպես տաճարը կարող է օգնել դարձի գալ:

ԲԱԺԻՆՆԵՐ

8 **Ապրիլի համաժողովի գրառումներ: Միասին ուսումնասիրենք համաժողովի ելույթները**
Գրեգ Բաթթի

9 ***Երիտասարդներին զորացնելու համար:* Լավ ընկերների կարևորությունը**

10 **Ինչին ենք մենք հավատում: Սուրբ Հոգին մխիթարում, ոգեշնչում և վկայում է**

36 **Վերջին Օրերի Սրբերի ձայները**

74 **Եկեղեցու նորությունները**

80 **Մինչև նոր հանդիպում: Խմել ցայտաղբյուրից**
Ահարոն Լ. Վեսթ

ԿԱՋՄԻ ՎՐԱ
Առջևում. Լուսանկարները՝ Թիմ Թագարտի © IRI: Ետևում. Լուսանկարը՝ Մեթյու Ռեյերի: Առջևի կազմի ներսում. Լուսանկարը՝ Քրիստին Շումկայի:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՉԱՓԱՀԱՍՆԵՐ



40 **Ընտրել ավելի լավ մասը**
Մեթյու Դ. Ֆլիթոն
Հիսուս Քրիստոսի ավետարանին լիարժեք ներգրավվելու համար Զոլտանը ստիպված էր հրաժարվել որոշ լավ բաներից:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

42 **Հարցեր և պատասխաններ**
«Ինչպե՞ս ես բացատրում իմ ընկերոջը, թե ինչու է վատ մաքրաբարոյության օրենքը խախտելը»:

44 **Ինչպե՞ս ծառայել քահանայության կոչումներում**
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն
Տվորեք գաղտնիքը հասնելու, ուսուցանելու և դիպչելու նրանց կյանքերին, ում ծառայում եք:

45 **Մեր տարածքը**

46 **Ինչո՞ւ մենք ունենք Մորմոնի Գրքի կարիքը**
Մորմոնի Գրքի կարևորության չորս պատճառները:

48 **Աճը պարարտ հողում՝ Ուգանդայի հավատարիմ երիտասարդները**
Սինդի Սմիթ
Երիտասարդ տղամարդիկ և կանայք ամրանում են ավետարանի համար իրենց կատարած զոհաբերությունների շնորհիվ:

52 **Երիտասարդներին զորացնելու համար: Ինչպիսի՞ն պետք է լինի հավատարիմ ընկերը**
Էլեյն Ս. Դալտոն

54 **Ինչպե՞ս իմանամ: Իմ հրավերն ի փրկություն**
Էմերսոն Խոսե դա Սիլվա
Երբ վերջապես ընդունեցի ընկերոջս հրավերը, հասկացա, որ գտել եմ ինչ-որ կարևոր բան:

56 **Տաս եղանակ, որոնք կօգնեն ձեզ իմանալ, որ դարձի եք եկել**
Թայլեր Օրթոն
Այն, ինչ ես սովորեցի դարձի մասին, օգնեց ինձ հետևել ավետարանում իմ առաջընթացին:

59 **Պաստառ: Արժե մեծ ջանքեր գործադրել**

Տեսեք, թե կարող եք գտնել այս համարում թաքնված Լիահոնան: Հուշում. Օգտագործեք սուպերհերոսի ձեր տեսողությունը:

ԵՐԵԽԱՆԵՐ

60 **Դենի տատիկի փոքրիկ միսիոները**
Էմիլիա Մարիա Գիմարես Կոռեյա
Ավետարանի հանդեպ Վիտորի սերը սկիզբ դրեց տատիկի դարձի գալուն:

61 **Հատուկ վկա: Ինչո՞ւ Եկեղեցին այդքան երկար անուն ունի**
Երեց Մ. Ռասսել Բալլարդ

62 **Տաճարների տոնակատարությունները**
Դարսի Ջենսեն
Ամբողջ աշխարհում երեխաները տոնում են իրենց մոտ գտնվող տաճարի առկայությունը:

64 **Տաճարի մասին հարցեր և պատասխաններ**
Պատասխաններ հարցերին, ինչպիսին են՝ Ինչո՞ւ մենք տաճարներ ունենք: Ի՞նչ է տեղի ունենում այնտեղ:

65 **Երաժշտություն: Ընտանիքները կարող են հավերժ միասին լինել**
Ռութ Մյուր Գարդներ և Վանյա Վոթկինս

66 **Տուն բերենք Երեխաների խմբի դասը: Հիսուս Քրիստոսը վերականգնեց Իր Եկեղեցին Վերջին Օրերում**

68 **Հետքերով: Որտեղ է կազմակերպվել Եկեղեցին**
Ջեն Փինբորո

70 **Փոքր երեխաների համար**

81 **Մարգարեի բնութագիր: Վիլֆորդ Վուդրուֆ**

ԱՊՐԻԼ 2013 ՀԱՏ. 14 Հ. 1
ԼԻԱՀՈՆԱ 10784 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Թոմաս Ս. Մոնսոն, Հեների Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Տասներկու Առաքյալների Քվորում. Բոյդ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն

Խմբագիր. Քրեյգ Ա. Քարդոն
Խորհրդատուներ. Շեյն Մ. Բոուեն, Բրեդլի Դ. Ֆոսթեր, Քրիսթոֆել Գոլդեն Կրտս., Էնթոնի Դ. Փերքինս

Գլխավոր տնօրեն. Դեյվիդ Տ. Ուորներ
Ընտանիքների և անդամների աջակցման տնօրեն. Վինսենթ Ա. Վոգն
Եկեղեցու Ամսագրերի տնօրեն. Ալլան Ռ. Լոյբորգ
Գործարար ղեկավար. Գարֆ Քենոն

Գլխավոր խմբագիր. Ռ. Վալ Ջոնսոն
Գլխավոր խմբագրի օգնական. Ռայան Քար, Լառեն Փորթեր Գանթ
Հրատարակչության օգնական. Մելիսա Ջենտեսո
Ստեղծագործական և խմբագրական կազմ. Այուզան Բարթ, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Մինդի Ռեյ Ֆրիդման, Գարի Հ. Գարֆ, Ջենիֆեր Գրեյս Ջոնս, Հիքարի Լոֆտուս, Մայքլ Ռ. Մորիս, Ռիչարդ Մ. Ռոմնի, Փոլ Վանդենբերգ, Ջուլիա Վուդբըրի

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն
Արվեստի գծով տնօրեն. Թեդ Ռ. Փեթերսոն
Դիզայնի կազմ. Ջենեթ Էնդրյուս, Ֆեյ Փ. Անդրուս, Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Շայլդ, Քերի Լին Ս. Հերին, Քուլին Հինքլի, Էրիկ Պ. Ջոնսեսմ Սքոթ Մ. Մույ, Բրեդ Թիքը
Մտավոր սեփականության համակարգող. Քոլեթ Նեբեքեր Օն
Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս
Հրատարակչության կազմ. Քոննի Բոուդրուի Բրիջ, Հովարդ Գ. Բրաուն, Ջուլի Բարդեթ, Բրայըն Վ. Գիջի, Քեթլին Հովարդ, Դենիզ Քըրբի, Գիննի Ջ. Նիլսոն, Տի Փիլչեր, Գեյլ Թեյթ Ռաֆերթի
Նախատպագրություն. Ջեֆ Լ. Մարթին

Տպագրության տնօրեն. Քրեյգ Կ. Սեջվիկ
Բաշխման տնօրեն. Էվան Լարսեն

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար կապվեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոնի կամ ծխի/ճյուղի ղեկավարի հետ:

Ձեռագրերը և հարցերը ներկայացրեք առցանց՝ liahona.lds.org; Է-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ *Liahona,* Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թայերեն, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատվիերեն, լեհերեն, լիտվերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորեերեն, հաիթերեն, հայերեն, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամոերեն, սլովեներեն, սվահիլի, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբեր է ըստ լեզուների:)

© 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Լիահոնայի տեքստը և նկարները կարելի է պատճենահանել առանձին դեպքերում ոչ առևտրային նպատակներով եկեղեցում կամ տանն օգտագործելու համար: Նկարները չի կարելի պատճենահանել, եթե սահմանափակումներ են նշված նկարի ներդիրում: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով. Intellectual Property Office, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada: April 2013 Vol. 14 No. 1. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address *must* be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send address changes to Salt Lake Distribution Center, Church Magazines, PO Box 26368, Salt Lake City, UT 84126-0368.

Մտքեր ընտանեկան երեկոյի համար

Այս համարը պարունակում է հոդվածներ և միջոցառումներ, որոնք կարող են օգտագործվել ընտանեկան երեկոյի համար: Ստորև տրվում են մի քանի օրինակներ:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՋՈՐԴ ԲԵԼԻ © IRI

«Հիսուս Քրիստոսի առաքելությունը և ծառայությունը», էջ 18. Երեց Ռասսել Մ. Նելսոնը պատմում է Հիսուս Քրիստոսի կյանքի հինգ ուղղությունների մասին, որոնց մենք կարող ենք հետևել: Կարող եք քննարկել դրանք և դրանց կիրառումը ձեր կյանքում: Կարող եք կարդալ սուրբգրքյան պատմություն Փրկչի կյանքից կամ դիտել Աստվածաշնչյան թեմայով տեսաֆիլմ (biblevideos.lds.org), որը կցուցադրի այդ ուղղություններից որևէ մեկը: Կարող եք ավարտել, բերելով ձեր վկայությունը Նրա կյանքի և ծառայության մասին, և երգելով «Էլ ավել Սրբություն տուր ինձ» (*Hymns,* no. 131):

«Ինչպիսի՞ն պետք է լինի հավատարիմ ընկերը», էջ 52. Կարող եք սկսել, հարցնելով, թե ինչպիսին պետք է լինի իսկական ընկերը: Կարդացեք Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի սահմանումը և քննարկեք, թե ինչ տեսակի ընկերներ մենք պետք է լինենք: Պատմեք այն ժամանակի մասին, երբ ինչ-որ մեկը իսկական ընկեր է եղել ձեզ համար, և խոսեք այն հատկանիշների մասին, որոնք կարող են օգնել ընտանիքի անդամներին ավելի լավ ընկերներ լինել մյուսների համար:

«Տաճարների տոնակատարությունները», էջ 62. Ձեր ընտանիքի հետ միասին ուսումնասիրեք տաճարների տոնակատարությունները պատկերող երեխաների նկարները: Կարող եք ցույց տալ ձեզ մոտ գտնվող տաճարի նկարը և խոսել այն մասին, թե ինչու են տաճարները կարևոր: Շեշտեք, որ միայն տաճարում կարող են կնքվել ընտանիքները: Կարող եք ավարտել, երգելով «Ընտանիքները կարող են հավերժ միասին լինել» (էջ 65):

ՁԵՐ ԼԵԶՎՈՎ

Լիահոնան և Եկեղեցու այլ նյութերը տարբեր լեզուներով մատչելի են **languages.lds.org կայքում:**

ԱՅՍ ՀԱՄԱՐԻ ԹԵՄԱՆԵՐԸ

Համարները ցույց են տալիս հոդվածի առաջին էջը:

Աղոթք, *18, 45*
Առաջնահերթություններ, *40*
Արարողություններ, *18*
Գերագույն համաժողով, *8, 37*
Դարձ, *34, 54, 56, 60*
Եկեղեցու կազմակերպություն, *78*
Զոհաբերություն, *40*
Ընկերություն, *9, 52, 54*
Ընտանիք, *30, 65*
Ծառայություն, *44, 70*
Հաղորդություն, *18*
Հայտնություն, *10, 46*
Հավատք, *48*
Հարությունը, *4, 12, 26*
Հիսուս Քրիստոս, *4, 18, 26*
Հնազանդություն, *40, 42, 56*
Հույս, *12*
Մահ, *4, 12, 39*
Մաքրաբարոյություն, *42*
Միսիոներական աշխատանք, *34, 39, 48, 52, 54, 60*
Մկրտություն, *30*
Մորմոնի Գիրք, *46*
Ոգեշնչում, *36, 38*
Ուխտեր, *7*
Ուսուցանել, *8, 9, 30*
Ուրախություն, *37*
Չափանիշներ, *42, 45*
Պահպանում, *69*
Սմիթ, Ջոզեֆ, *66*
Սուրբ Հոգի, *10, 36*
Վերականգնում, *66*
Վուդրուֆ, Վիլֆորդ, *81*
Տաճարային աշխատանք, *7, 64, 38, 65, 80*
Տաճարներ, *34, 62*
Քահանայություն, *44*
Քավություն, *18, 26, 45*
Օրինակ, *48*

Նախագահ
Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության
Առաջին Խորհրդական

Նա հարություն առավ

Հիսուս Քրիստոսի Հարության իրականության վերաբերյալ վկայությունը հույսի և վճռականության աղբյուր է: Եվ այն կարող է լինել Աստծո ցանկացած զավակի համար: Այն եղավ ինձ համար 1969թ. հունիսյան մի ամառային օր, երբ մայրս մահացավ, այն եղել է այդ պահից սկսած բոլոր տարիների ընթացքում, և այն կլինի մինչև ես կրկին կտեսնեմ նրան:

Ժամանակավոր բաժանումից առաջացած տխրությունն անմիջապես փոխարինվեց ուրախության: Այն ավելին էր, քան երջանիկ վերամիավորման հույսը: Քանի որ Տերը հայտնել էր բազում բաներ Իր մարգարեների միջոցով և Սուրբ Հոգին հաստատել էր ինձ Հարության ճշմարտությունը, ես մտովի կարող եմ տեսնել, թե ինչպես կլինի մեր սրբագործված և հարություն առած սիրելիների հետ վերամիավորումը:

«Այդ նրանք են, ովքեր առաջ կգան արդարների հարության մեջ: . . .

Այդ նրանք են, որոնց անունները գրված են երկնքում, որտեղ Աստված և Քրիստոսն են դատավորը բոլորի:

Այդ նրանք են, ովքեր արդար մարդիկ են, Հիսուսի՝ նոր ուխտի միջնորդի միջոցով կատարյալ դարձված, որն իր արյունը հեղելով իրագործեց այս կատարյալ քավությունը» (ՎԵՈՒ 76.65, 68–69):

Քանի որ Հիսուս Քրիստոսը քանդել է մահվան կապանքները, Երկնային Հոր բոլոր զավակները, որ ծնվել են աշխարհում, հարություն կառնեն մարմնում, որը երբեք չի մահանա: Ուստի, այդ փառահեղ ճշմարտության վերաբերյալ իմ և ձեր վկայությունը կարող է հեռացնել սիրելի ընտանիքի անդամի կամ ընկերոջ կորստի ցավը և փոխարինել այն ուրախ ակնկալիքներով և հաստատուն վճռականությամբ:

Տերը մեզ բոլորիս տվել է հարության պարգևը, որի միջոցով մեր հոգիները դրվում են մարմինների մեջ՝ ազատ ֆիզիկական անկատարություններից (տես Ալմա 11.42–44): Իմ մայրը կհայտնվի երիտասարդ և երջանիկ, ծերության և տարիների ֆիզիկական տառապանքների ազդեցությունները հեռացված: Դա կտրվի նրան և մեզ որպես պարգև:

Սակայն մեզանից նրանք, ովքեր ցանկանում են հավերժ լինել նրա հետ, պետք է կատարեն ընտրություններ, որոնց շնորհիվ կարժանանան այդ միությանը և կապրեն այնտեղ, որտեղ Հայրը և Նրա հարություն առած Սիրելի Որդին ապրում են փառքի մեջ: Դա միակ վայրն է, որտեղ ընտանեկան կյանքը կարող է հավերժ շարունակվել: Այդ ճշմարտության վերաբերյալ վկայությունը մեծացրել է իմ վճռականությունը արժանի պահել ինձ և նրանց, ում ես սիրում եմ, սելեստիալ թագավորության ամենաբարձր աստիճանի համար, թույլ տալով, որ Հիսուս Քրիստոսի Քավությունը գործի մեր կյանքում (տես ՎԵՈՒ 76.70):

Տերը հավերժական կյանքի այս հարցի վերաբերյալ առաջնորդություն է մեզ տալիս հաղորդության աղոթքների միջոցով, որն օգնում է ինձ և կարող է օգնել ձեզ:

Մենք հրավիրվում ենք վերանորոգելու մեր մկրտության ուխտերը յուրաքանչյուր հաղորդության ժողովի ժամանակ:

Մենք խոստանում ենք միշտ հիշել Փրկչին: Նրա զոհաբերության խորհրդանիշները մեզ օգնում են գիտակցել այն մեծ գինը, որը Նա վճարեց մահվան կապանքները կոտրելու, մեզ ողորմություն ցուցաբերելու և մեր բոլոր մեղքերին ներում ապահովելու համար, եթե մենք ընտրենք ապաշխարելը:

Մենք խոստանում ենք պահել Նրա պատվիրանները: Սուրբ գրությունները և ապրող մարգարեների խոսքերը կարդալը և մեր հաղորդության ժողովների ոգեշնչված ելույթ ունեցողներին լսելը հիշեցնում են մեզ դա կատարելու մեր ուխտերի մասին: Սուրբ Հոգին մեր միտք և սիրտ է բերում պատվիրանները, որոնք մենք պետք է պահենք այդ օրը:

Հաղորդության աղոթքներում Աստված խոստանում է ուղարկել Սուրբ Հոգուն, որ լինի մեզ հետ (տես Մորոնի 4.3, 5.2, ՎԵՈՒ 20.77, 79): Ես զգացել եմ այդ պահին, որ Աստված ինձ կարող է տալ այն, ինչը թվում է, թե անձնական առանձնազրույց է: Նա իմ

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Մենք պետք է «բոլոր սուրբ գրությունները նմանեցնենք մեզ, որպեսզի դա լինի մեր օգտի և ուսման համար» (1 Նեփի 19.23): Խորհեք հաղորդության աղոթքները կարդալու մասին, որոնք գտնվում են Վարդապետություն և Ուխտեր 20.76–79: Հաղորդության աղոթքների վերաբերյալ Նախագահ Այրինգի ուսմունքները կարդալուց հետո դուք կարող եք հրավիրել նրանց, ում ուսուցանում եք, մտածել ուղիների մասին, որոնց միջոցով այս աղոթքները կուղղորդեն իրենց կյանքը և կօգնեն նրանց վերադառնալ և կրկին ապրել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ:

ուշադրությունն է հրավիրում իմ կատարած այն բաների վրա, որոնք գոհացրել են Իրեն, ապաշխարության և ներման իմ կարիքները, և մարդկանց անուններն ու դեմքերը, որոնց Նա ուզում է, որ ես ծառայեմ Իր փոխարեն:

Տարիների ընթացքում այդ կրկնվող փորձառությունը հույսը վերածել է գթության զգացմունքների և վստահություն է պարգևել, որ ողորմությունը տեղ է գտել իմ կյանքում Փրկչի Քավության և Հարության միջոցով:

Ես վկայում եմ, որ Հիսուսը հարություն առած Քրիստոսն է, մեր Փրկիչը, կատարյալ օրինակը և հավերժական կյանքի առաջնորդը: ■

ՈՒՍՈՒՑԱԿԱՆ: ՄԵՐԺՈՒ ՈՒՆԻՐԻ. ՆԱ ՀԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ Է ԱՄԵՆ, ՈՎ ԹԱՐՄՈՒՄԻ, ՉԵՍՔՈՒՄԱՆԻ.

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Ձեր առանձնազրույցն Աստծո հետ

Նախագահ Այրինգն ուսուցանել է, որ երբ մենք լսում ենք հաղորդության աղոթքները, կարող ենք այնպիսի զգացողություն ունենալ, ասես առանձնազրույց ենք ունենում Աստծո հետ: Նախագահ Այրինգը մտածում է հետևյալ երեք ոլորտների վերաբերյալ: Այս հարցերը գրեք ձեր օրագրում և այս ամսվա յուրաքանչյուր կիրակի խորհեք դրանց վերաբերյալ:

Ձեր օրագրում կարող եք գրառել նաև խորհելու արդյունքում Սուրբ Հոգուց ստացած ձեր տպավորությունները:

- Ի՞նչ եմ ես արել, որը գոհացրել է Աստծուն:
- Ինչի՞ համար ես պետք է ապաշխարեմ կամ ներողություն խնդրեմ:
- Ո՞ւմ կուզեր Աստված, որ ես ծառայեի:

ԵՐԵԽԱՆԵՐ

Միշտ հիշել Հիսուսին

Հակոբը փորձում է «միշտ հիշել» Փրկչին (ՎԱՈՒ 20.77): Սա նրա ննջասենյակը: Ի՞նչ եք դուք նկատում, որը կարող է օգնել նրան միշտ հիշել Հիսուսին:



ՆԿԱՐՉԱՆԸ: ՄԱՅՄԻ ԿՈՍՄՈՊՈՒԼՈՍ

Ուսումնասիրեք այս նյութն աղոթքով և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում դուք այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և Սփոփող Միությունը դարձնել ձեր սեփական կյանքի ակտիվ մասը:Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

Տաճարային ուխտեր

«Ամեն զոհաբերություն և ջանք արժեն տաճարում ստացվող փրկող ծեսերը, որոնք թույլ են տալիս մի օր վերադառնալ մեր Երկնային Հոր մոտ՝ հավերժական ընտանիք և օժտվել օրհնություններով ու բարձրյալի զորությամբ»,[1] ասել է Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը: Եթե դուք դեռ չեք եղել տաճարում, կարող եք պատրաստվել տաճարի սուրբ արարողությունները ստանալուն.

- Հավատալով Երկնային Հորը, Հիսուս Քրիստոսին և Սուրբ Հոգուն:
- Զարգացնելով վկայություն Հիսուս Քրիստոսի Քավության և վերականգնված ավետարանի վերաբերյալ:
- Աջակցելով և հետևելով ապրող մարգարեին:
- Արժանանալով տաճարային երաշխավորագրին՝ վճարելով տասանորդ, լինելով բարոյապես մաքուր, լինելով ազնիվ, պահելով Իմաստության Խոսքը և ապրելով Եկեղեցու ուսմունքներին ներդաշնակ:
- Նվիրելով ժամանակ, տաղանդներ և միջոցներ՝ օգնելով կառուցել Տիրոջ թագավորությունը:
- Մասնակցելով ընտանեկան պատմության աշխատանքին:[2]



Նախագահ Մոնսոնն այնուհետև ուսուցանել է. «Երբ հիշում ենք [տաճարում] կապած ուխտերը, մենք ավելի տոկուն ենք դառնում՝ կրելու ամեն փորձություն և հաղթահարելու ամեն գայթակղություն»:[3]

Սուրբ գրություններից

Վարդապետություն և Ուխտեր 14.7, 25.13, 109.22

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Թոմաս Ս. Մոնսոն, «Սուրբ Տաճար՝ փարոս աշխարհին», *Լիահոնա,* մայիս 2011, 92:
2. Տես *Իմ արքայության դուստրերը. Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը* (2011), 21:
3. Թոմաս Ս. Մոնսոն, *Լիահոնա,* մայիս 2011, 93:
4. *Իմ արքայության դուստրերը,* 29–30:
5. Սառա Ռիչ, *Իմ արքայության դուստրերը,* 30:

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ես կանոնավորապես երկրպագո՞ւմ եմ տաճարում:

2. Ես խրախուսո՞ւմ եմ իմ քույրերին ստանալ տաճարի օրհնությունները:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Մեր պատմությունից

«Նավույի Տաճարը նվիրագործելուց հետո ավելի քան 5000 Սրբեր հավաքվեցին այնտեղ: . . .

Տաճարային ուխտերի ուժը, զորությունը և օրհնությունները [աջակցեցին] Վերջին Օրերի Սրբերին դեպի [արևմուտք] իրենց ճամփորդության ժամանակ, երբ նրանք [տարան] ցուրտ, շոգ, քաղց, աղքատություն, հիվանդություն, դժբախտ պատահարներ և մահ»:[4]

Սփոփող Միության շատ քույրերի պես Սարա Ռիչը ծառայում էր որպես տաճարի աշխատող: Նա խոսել է իր փորձառության մասին. «Եթե չլիներ հավատքը և գիտելիքը, որ մեզ վրա թափվեց տաճարում . . . Տիրոջ Հոգու կողմից, մեր ճամփորդությունը նման կլիներ խավարի մեջ նետվելուն: . . . Սակայն մենք հավատք ունեինք առ մեր Երկնային Հայրը, զգալով, որ Նրա ընտրյալ ժողովուրդն էինք . . ., և վշտի փոխարեն զգում էինք ուրախություն, քանի որ եկել էր մեր ազատման օրը»:[5]

Վերջին օրերի Սրբերի հավատարիմ կանանց համար ելքը «խավարի մեջ» նետվել չէր: Նրանք դիմացան իրենց տաճարային ուխտերի շնորհիվ:

THE END OF PARLEY STREET, ԳԼԵՆ Ս. ՀՈՓԿԻՆՍ, ՉԵԼՍՈՒԱՅՆԵԼ

ՄԻԱՍԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՆՔ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ

Համաժողովը վերանայելու ձևը փոխելը մեծապես նպաստեց որպես ընտանիք ավետարանի մեր քննարկումներին:

Գրեգ Բաթթի

Տարիներ շարունակ մենք ընտանիքով վայելել ենք համաժողովի նյութերը՝ կարդալով հոդված առ հոդված: Երբ նոր էինք սկսել, մենք պարզապես հավաքվում էինք սեղանի շուրջ և հերթով յուրաքանչյուրս բարձրաձայն կարդում էր մի պարբերություն: Սակայն նկատեցինք, որ կարդում էինք այն վերջացնելու համար, առանց դադար տալու՝ ուղերձները յուրացնելու համար:

Մեր արածից ավելի շատ օգուտ քաղելու համար իմ կինն ու ես գնեցինք համաժողովի ամսագիր ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար և ծրագրեցինք, թե քանի ելույթ մենք պետք է ուսումնասիրեինք ամեն շաբաթ, որպեսզի կարողանայինք ամբողջը կարդալ մինչև հաջորդ գերագույն համաժողովը: Լինում էր շաբաթ, որ կարդում էինք մեկ ելույթ, լինում էր շաբաթ, կարդում էինք երկու, սակայն յուրաքանչյուրս պետք է ուսումնասիրեր ելույթը և ընդգծեր իրեն դուր եկած հատվածները: Այնուհետև ընտանեկան երեկոյի ժամանակ մենք սովորեցնում էինք միմյանց մեր ընգծած հատվածներից:

Հաճախ մեր երեխաները հարցեր էին ունենում, որոնց միջոցով սկսում էինք քննարկումները կամ իմ կինն ու ես հարցեր էինք տալիս մեր ուսումնասիրություններից: Մեզ համար շատ թանկ էր լսելը մեր դեռահասներին, երբ նրանք բացատրություններ էին տալիս այդ հարցերին, կիսվելով այն ամենով, ինչ սովորել էին սեմինարիայի ժամանակ, եկեղեցում կամ իրենց անձնական ուսումնասիրությունների ժամանակ: Սա դարձավ հրաշալի միջոց շատ հարմարավետ, հանգիստ մթնոլորտում միմյանց ոչ պաշտոնական վկայությունները կանոնավորապես լսելու համար:

Շուտով մենք զգացինք, որ մեր առավոտյան սուրբ գրությունների ուսումնասիրությունը անցնում էր նույն մթնոլորտում: Որոշ օրեր մենք հասցնում էինք կարդալ միայն մի քանի հատվածներ, մինչ ժամանակն արագ անցնում էր այդ հատվածները քննարկելու վրա և թե ինչպես էին դրանք վերաբերվում մեր շուրջը կատարված իրադարձություններին:

Մեր առավոտներն այժմ հագեցած են զրույցներով, ծիծաղով և միությամբ, մինչ յուրաքանչյուրս կանցնենք մեր անձնական գործերին: Մենք ամուր վկայություններ ունենք ամեն օր միասին ուսումնասիրելու և աղոթելու մեր մարգարեի խորհրդի վերաբերյալ: Մեր ընտանիքը դարձել է այդպիսին, որտեղ մեկը մյուսից սովորում է և միմյանց ամրացնում: Այս ամենը գերագույն համաժողովից մի փոքր ավելին սովորել ցանկանալու արդյունքն է: ■

Գրեգ Բաթթին ապրում է Յուտայում, ԱՄՆ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ԵՎ ԿԻՐԱՌԵԼ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ

«Հիշեք, որ այս համաժողովի ընթացքում մեր լսած ուղերձները կտպագրվեն *Ensign* և *Լիահոնա* մայիս ամսվա ամսագրերում: Ես հորդորում եմ ձեզ ուսումնասիրել ուղերձները, խորհել դրանց ուսմունքների շուրջ և այնուհետև կիրառել դրանք ձեր կյանքում»:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն, «Փակիչ խոսք», *Լիահոնա*, մայիս, 2010, 113:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԱԲԲԻ ՍԵԼԹԵՐԻՆԻ © IRI

ԼԱՎ ԸՆԿԵՐՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ընկերները մեծ ազդեցություն ունեն մեր արարքների վրա, հատկապես մեր պատանեկության ընթացքում: «Նրանք մեծ ազդեցություն կունենան ձեր մտածողության և գործերի վրա, և անգամ կարող են բնորոշել, թե ինչ անձնավորություն կդառնաք դուք»:[1] Եվ երբ դուք ընտրեք լավ ընկերներ, «նրանք ձեզ մեծ ուժ և օրհնություններ կբերեն: Նրանք կօգնեն ձեզ լինել ավելի լավ մարդ և ձեզ համար ավելի կհեշտացնեն Հիսուս Քրիստոսի ավետարանով ապրելը»:[2]

Այս ամսագրի 52–53 էջերում Էլեյն Ս. Դալտոնը՝ Երիտասարդ Կանանց գերագույն նախագահը, ուսուցանում է լավ ընկեր փնտրելու և լինելու մասին: «Մեկ այլ անձի մեծագույն շահը փնտրելը իսկական ընկերասիրության էությունն է», ասում է նա:

Այս սկզբունքների հիման վրա ընկերություն հիմնելը երիտասարդներին կօգնի ստեղծել հարատև հարաբերություններ և շփվելու ունակություններ, որոնք ավելին են, քան պարզապես «ընկեր» դառնալը հասարակական համացանցերում: Որպես ծնող դուք կարող եք օգնել ձեր երեխաներին հասկանալ լավ ընկեր լինելու և այնպիսի ընկերներ ընտրելու կարևորությունը, ովքեր կխրախուսեն նրանց ապրել ավետարանով: Հետևյալ առաջարկները կարող են օգտակար լինել:

Երիտասարդներին ուսուցանելու առաջարկներ

- Որպես ընտանիք սուրբ գրություններում փնտրեք լավ ընկերների օրինակներ: Քննարկեք, թե որ արժանիքներն էին այդ ընկերությունները դարձնում ամուր: Խորհեք Դավիթի և Հովնաթանի (տես Ա Թագավորաց ԺԸ–ԻԳ), Հռութի և Նոեմիի (տես Հռութ Ա–Բ) և Ալմայի և Մոսիայի որդիների օրինակների շուրջ(տես Մոսիա 27–28, Ալմա 17–20) մասին:[3]
- *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկում վերանայեք ընկերներին վերաբերվող բաժինը: Կիսվեք ձեր դեռահասների հետ, թե ինչ ազդեցություն են ունեցել ընկերները ձեր կյանքում: Հրավիրեք նրանց կիսվել, թե ինչպես են նրանք ներգործել և ներգործվել իրենց ընկերների կողմից:
- Կարդացեք այս ամսագրի Քույր Դալտոնի հոդվածը: Խոսեք լավ ընկերներ փնտրելու վերաբերյալ նրա դստեր՝ Էմիի դրած նպատակի մասին: Օգնեք ձեր երեխաներին նպատակներ դնել, թե ինչպիսի ընկերներ են նրանք ուզում փնտրել և լինել:
- Խորհեք ընտանեկան երեկո անցկացնելու մասին, որտեղ կկիսվեք ընկերություն հաստատելու նմանատիպ մտքերով. «Լավ ընկերներ ունենալու համար, ինքներդ եղեք լավ ընկեր: Հետաքրքրություն ցուցաբերեք ուրիշների հանդեպ. ժպտացեք և թող որ նրանք իմանան, որ մտահոգվում եք նրանց համար: Բարյացակամորեն և հարգանքով վերաբերվեք ուրիշներին, և խուսափեք դատել և պարսավել ձեր շրջապատի մարդկանց»:[4]

Երեխաներին ուսուցանելու առաջարկներ

- Ընկեր լինելը ներառում է ուրիշներին օգնելը: 2009թ. մայիսի *Լիահոնայում* կարդացեք «Պաշտպանել Քալեբին» ելույթը և խոսեք ձեր երեխաների հետ, թե ինչպես կարող են նրանք բարյացակամ լինել բոլոր նրանց հետ, ում հանդիպում են:
- Բոլոր իրավիճակներում պետք է որոշենք, թե ինչպիսի ընկեր մենք կլինենք: Միասին երգեք «Փորձում եմ նմանվել Հիսուսին» երգը[5] և այնուհետև խոսեք ձեր երեխաների հետ այն մասին, թե ինչպես կարող են նրանք ընտրել լինել Փրկչի նման լավ ընկեր տարբեր պայմաններում: ■

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առակաց 17.17, 18.24

Ժողովող 4.9–10

Մատթեոս 25.34–40

Ղուկաս 22.32

Մոսիա 18.8–9

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Երիտասարդներին զորացնելու համար* (գրքույկ, 2011), 16:
2. *Երիտասարդներին զորացնելու համար,* 16:
3. Տես Jeffrey R. Holland, “Real Friendship,” *New Era,* June 1998, 62–66.
4. *Երիտասարդներին զորացնելու համար,* 16:
5. “I’m Trying to Be Like Jesus,” *Children’s Songbook,* 78–79.

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ՏԱՅԼ ՄՈՐԼԵՅԻ

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՄԽԻԹԱՐՈՒՄ, ՈԳԵՇՆՉՈՒՄ ԵՎ ՎԿԱՅՈՒՄ Է

Սուրբ Հոգու պարգևն ամենամեծ օրհնություններից մեկն է, որը մենք կարող ենք ստանալ այս կյանքում, քանի որ Սուրբ Հոգին մխիթարում, ոգեշնչում, նախազգուշացնում, մաքրագործում և առաջնորդում է մեզ: Նա մեզ կարող է լցնել «հույսով և կատարյալ սիրով» (Մորոնի 8.26): Նա սովորեցնում է «ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ» (Մորոնի 10.5): Սուրբ Հոգու միջոցով մենք Աստծուց ստանում ենք հայտնություն և հոգևոր տաղանդներ: Ամենակարևորը, Սուրբ Հոգու միջոցով մենք ստանում ենք մեր վկայությունները Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին:

Նախքան ձեր մկրտությունը դուք կարող էիք ժամանակ առ ժամանակ զգալ Սուրբ Հոգին: Սակայն միայն ձեր մկրտությունից հետո Սուրբ Հոգու պարգևը ստանալով դուք կարող եք վայելել Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունը, եթե արժանի եք: Այս պարգևը տրվում է Մելքիսեդեկյան Քահանայություն կրողի կողմից ձեռնադրման միջոցով (տես Գործք առաքելոց ԺԹ.6, ՎևՈՒ 33.15): Դրանից հետո ամեն կիրակի ընդունելով հաղորդությունը դուք կարող եք նորոգել ձեր մկրտության ուխտերը և այդպիսով ստանալ Տիրոջ օրհնությունը, որ կարողանաք Նրա Հոգին միշտ ձեզ հետ ունենալ (ՎևՈՒ 20.77):

Սուրբ Հոգին, որ հաճախ անվանվում է Հոգի, Աստվածազլխի երրորդ անդամն է: Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է. «Հայրն ունի մսից ու ոսկորից մարմին, այնպես շոշափելի, ինչպես մարդունը. Որդին՝ նույնպես. բայց Սուրբ Հոգին չունի մսից ու ոսկորից մարմին, այլ Հոգեղեն անձնավորություն է: Եթե այդպես չլիներ, Սուրբ Հոգին չէր կարող բնակվել մեզանում» (ՎևՈՒ 130.22):

«Որովհետև Տիրոջ Հոգին չի բնակվում անսուրբ տաճարներում» (Հելաման 4.24), մենք պետք է արժանի լինենք Նրա ընկերակցությանը: Մենք դա անում ենք այլ բաների հետ մեկտեղ ունենալով առաքինի մտքեր, ապրելով ազնիվ և փնտրելով պահել պատվիրանները: ■

Լրացուցիչ տեղեկությունների համար տես 2 Նեփի 31.13, 17, 32.5, 3 Նեփի 27.20, Մորոնի 10.5–8, Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.70:

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ԸՍՏ ԱՐԺԱՆԱՎՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԵՆՔ ԱՅՍ ՊԱՐԳԵՎԸ

«Ինչպես բոլոր պարգևները, այս պարգևը պետք է ստանալ և ուրախությամբ պահել: Երբ քահանայություն կրողի ձեռքերը դրվել են ձեր գլխին՝ հաստատելու ձեզ որպես Եկեղեցու անդամ, դուք լսել եք «Ստացիր Սուրբ Հոգին» բառերը: Սա չի նշանակում, որ Սուրբ Հոգին անվերապահորեն դառնալու էր ձեր մշտական զուգընկերը: Սուրբ գրությունները նախազգուշացնում են մեզ, որ Տիրոջ Հոգին «մարդու վրա միշտ չի մնա» (Ծննդոց Զ.3): Երբ մենք հաստատվում ենք, մեզ տրվում է Սուրբ Հոգու ընկերակցության *իրավունքը,* սակայն դա մի իրավունք է, որին մենք պետք է շարունակենք արժանանալ հնազանդության և արժանավորության շնորհիվ»:

Elder Joseph B. Wirthlin (1917–2008) of the Quorum of the Twelve Apostles, "The Unspeakable Gift," *Liahona,* May 2003, 28.

Սուրբ Հոգու պարգևը ստանալուց հետո մենք կարող ենք անել շատ բաներ, որ Նրա ազդեցությունը բերենք մեր կյանք.

Աղոթել:



Ուսումնասիրել սուրբ գրությունները:

Արժանիորեն ընդունել հաղորդությունը:

Երկրպագել տաճարում:

Դիտեք օգտակար լրատվամիջոցներ, օգտագործեք մաքուր խոսք և ունեցեք առաքինի մտքեր:

Մահ և կյանք

ՀԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Երբ Եկեղեցու վաղ շրջանի նորադարձները ճամփորդում էին արևմտյան Միացյալ Նահանգներ Սրբերին միանալու համար, նրանք հանդիպում էին մահվան, սակայն աջակցվում էին վերականգնված ավետարանի հանդեպ իրենց նոր հավատքով: Ահա մի քանի հատվածներ պիոներների արձանագրություններից, որ ցուցադրում են Սրբերի հույսն առ Հարությունը, Եկեղեցու առաջին հինգ Նախագահների մխիթարող ուսմունքների հետ միասին:

Սկանդինավիայից Վերջին Օրերի անանուն մի Սուրբ հոր մասին, որի փոքրիկ որդին մահացել է 1866թ. Նյու Յորքից Յուտա ճամփորդության ժամանակ.

«Ընկերոջ օգնությամբ փոքրիկ գերեզման փորվեց և աճյունը դրվեց այնտեղ: Վարակիչ հիվանդությունից մահացած երեխա, չկային հավաքված ողբացողներ, չկար պաշտոնական արարողություն, չկային ծաղկեպսակներ, չկար հոգևոր երգ, չկար հուղարկավորության ճառ: Բայց մինչ ողբացող հայրը կշարունակեր իր ճանապարհը, նա իր մայրենի դանիերենով մի հակիրճ նվիրագործման աղոթք արտասանեց. . . .

«Երկնային Հայր. Դու տվեցիր ինձ այս փոքրիկ զանձը՝ այս թանկագին տղային, և այժմ դու նրան կանչում ես քեզ մոտ: Թույլ տուր, որ նրա աճյունը անխախտ հանգչի այստեղ մինչև հարության առավոտը: Քո կամքը կատարվի: Ամեն»:

Եվ գետնից բարձրանալով՝ նրա վերջին բառերը եղան.

«Մնաս բարով, իմ թանկագին փոքրիկ Հանս, իմ գեղեցիկ տղա»: Ապա գլխիկոր և սրտի ցավով նա վճռականորեն քայլերն ուղղեց դեպի ճամբար»:[1]

Նախագահ Ջոզեֆ Սմիթ (1805–44):

«Որքան մխիթարող է ողբացողների համար իմանալը, որ երբ նրանքստիպված են հրաժեշտ տալ ամուսնուն, կնոջը, հորը, մորը, զավակին կամ թանկագին բարեկամին, որ չնայած աշխարհիկ մարմինը թաղվում է և քայքայվում, նրանք կրկին կբարձրանան հավերժ ապրելու անմահ փառքով, ոչ թե վշտի, տառապանքի կամ ևս մեկ անգամ մեռնելու

ԱՄՍՏՐԱՏ՝ ՍՈՅԹԵԼ Ի. ՄԱՍՍԻ ԵՏԻՆ ՊԼԱՆ՝ ՎԵՐՈՒՆԵՆ Ա ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ © IRI

համար, այլ կլինեն Աստծո ժառանգներ և համաժառանգներ Հիսուս Քրիստոսի հետ»:[2]

Ջոզեֆ Վաթսոն Յանգ (1828–73), Բրիգամ Յանգի զարմիկը, ով 1853թ. ճամփորդեց Անգլիայից դեպի Միացյալ Նահանգներ.

«Գիշերվա մեռած ժամին ընդամենը մի քանի վկաներով խորը լռության մեջ մահացած մերձավորին հրաժեշտ տալը շատ տխուր տեսարան էր: . . . Նա նավում չուներ բարեկամ կամ առանձնապես մեկին, որ կսգար նրա համար, բացի ընկեր ծառայակցից: Սրանք մարդկային էության ամենանվիրական հույսերն են, որ արթնանում են այդ պահերին: Այս երիտասարդ տղամարդը թողել էր ամեն ինչ Սիոն գնալու համար, և նրա սիրտը վառվում էր պայծառ ապագայի ակնկալիքով, քիչ մտածելով, որ նրա մահկանացու մարմինը պետք է հանձնվեր սոված ալիքին: Այնուամենայնիվ, նա չմահացավ այնպես, ինչպես նրանք, ովքեր հույս չունեն, քանի որ Նա խաղաղություն էր հաստատել իր Աստծո հետ, և լիովին համոզված էր, որ արդարները փառահեղ կերպով հարություն կառնեն մի առավոտ»:[3]

Նախագահ Բրիգամ Յանգ (1801–77):

«Ինչ մութ հովիտ և ստվեր է այն, ինչը մենք կոչում ենք մահ: Որքան տարօրինակ է գոյության այս վիճակից անցումը անիմաստ [դատարկ] մի վիճակի, ինչ վերաբերվում է մահկանացու մարմնին: Որքան մութ է այդ հովիտը: Որքան խորհրդավոր է այդ ուղին, և մենք պետք է միայնակ անցնենք դրանով: Իմ ընկերներ և եղբայրներ, ես ուզում եմ ձեզ ասել, որ եթե մենք կարողանայինք տեսնել բաներն այնպես, ինչպես դրանք կան, և երբ անցնենք դրա միջով մենք տեսնենք և հասկանանք, թե այս մթին ստվերն ու հովիտը որքան թեթև բան են, որ կշրջվենք և կնայենք դրա վրա և կմտածենք, ինչու է սա տխուր վիճակ, վշտի, սգի, վայի, թշվառության, ցավի, տառապանքի և հիասթափության վիճակ գոյության մեջ, որտեղ ես կարող եմ լիարժեք ձևով վայելել կյանքը, եթե դա հնարավոր լիներ անել առանց մարմնի»:[4]

Ձախից. Նախագահ Բրիգամ Յանգ: Վերևում. Ջոզեֆ Վաթսոն Յանգ:

ՆԵՐԿԻՐՈՒԹ. *ԲՐԻԳԱՄ ՅԱՆԳ*; ՋՈՆ ՎԻԼԼԱՐԴ ՔԱԿԱՍՈՆ, ՋՈԶԵՖ ՎԱԹՍՈՆ ԿՈՏՏԵՐԻ ՆԱԿԱՐԸ, ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՂՈՆ ՋՈՆՍՈՆ ԿՈՏՏԵՐԻ ՆԱԿԱՐԸ © ԼՄ. *ՋՈՆ ԹԵՅԼՈՐ*; Ա. ՎԵՍԹՎՈՒՆ, ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ԹԱՆԳԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դան Ջոնս (1811–62)՝ ուելսցի նորադարձ, ով 1849թ. տիկին Վիլիամսի և այլ Եկեղեցու անդամների հետ նավարկեց Միացյալ Նահանգներ.

«Ուելսի Տրեգարոնի մոտ գտնվող Ունուսուբոնթից Տիկին Վիլիամսի վիճակն արագ վատթարանում է, և նշաններ կան, որ նա երկար չի ապրի: . . . Նա ասաց, որ մեծագույն պատիվը, որ նա երբևէ ունեցել է, Աստծո Որդու եկեղեցու անդամ դառնալու հնարավորությունն է եղել, որ վախ չկար նրա սրտում մյուս կյանքի վերաբերյալ և որ նրա կրոնն այժմ ապացուցում էր իր ուժն ավելի, քան երբևէ նախկինում: . . . Նա հանդիսավոր կերպով խորհուրդ տվեց իր որդիներին հավատարմորեն շարունակել մինչ մահ, որպեսզի նրանք նրա հետ միասին ձեռք բերեին ավելի լավ հարություն: . . . Նա շարունակեց սթափ մնալ ողջ գիշեր, և հաջորդ առավոտ ժամը չորսից քառորդ ժամ անց նրա հոգին խաղաղությամբ հեռացավ՝ ժպիտ թողնելով նրա շուրթերին»:[5]

Նախագահ Ջոն Թեյլոր (1808–87):

«Որքան մխիթարող է թանկագին ընկերոջ մահը սգացողների համար իմանալը, որ մենք կրկին կլինենք նրանց հետ: Որքան քաջալերող է բոլոր նրանց համար, ովքեր ապրում են ճշմարտության հայտնված սկզբունքներով, հավանաբար ավելի առանձնակի ձևով նրանց համար, ում կյանքն արդեն մոտեցել է իր մայրամուտին, ովքեր տարել են օրվա շոգն ու ծանրությունը, իմանալ, որ մի օր մենք դուրս կգանք գերեզմանից և առաջ կգնանք որպես կենդանի և անմահ էակներ, վայելելու մեր փորձված և վստահելի ընկերների ընկերակցությունը, այլևս չտառապելով մահվան սերմերի պատճառով և ավարտելով աշխատանքը, որ Հայրը հանձնարարել էր մեզ կատարել»:[6]

Աջից. Նախագահ Ջոն Թեյլոր: Վերևում. Դան Ջոնս:

Էնդրյու Ջենսոն (1850–1941), դանիացի գաղթական, ով 1866թ. ճամփորդել է Էնդրյու Հ. Սքոթի սայլակների ընկերության միջոցով Նեբրասկայից՝ ԱՄՆ, դեպի Յուտա.

«Երբ մենք վկա եղանք նրանց [մեր ընկերակից ճամփորդողների] մահկանացու մարմինները մայր հողին հանձնելուն անապատում, մենք բոլորս էլ լաց եղանք կամ հուզմունք ապրեցինք, քանի որ այս ձևով սիրելիներին թաղելու միտքը, երբ ընկերներն ու բարեկամները պետք է անմիջապես հեռանան, առանց երբևէ նրանց մահացածների հանգստի վայրերը կրկին այցելելու հույսի, տխուր էր և իսկապես ծանր: . . . Սակայն նրանց գերեզմանները կգտնվեն, երբ Գաբրիելը հնչեցնի իր փողը առաջին հարության առավոտյան: Այս հեռացածներն այնպես թողեցին իրենց մարմինները, կարծես նրանք վճռական քայլերով գնում էին դեպի Սիոն: Տերը նրանց տուն կանչեց մինչև նրանք կհասնեին իրենց ճամփորդության վերջնակետին. նրանց թույլ չտրվեց մարմնում տեսնել Սիոնը. սակայն նրանք այսուհետև կստանան փառք և ուրախություն. նրանք մահացան, մինչ փորձում էին ենթարկվել Աստծուն և պահել նրա պատվիրանները, և օրհնված են նրանք, ովքեր մահանում են [Տերումը]»:[7]

Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆ (1807–98):

«Առանց Քրիստոսի ավետարանի մահվան միջոցով բաժանումը ամենավհատեցնող բանն է, որ հնարավոր է մտածել. սակայն հենց որ մենք ձեռք ենք բերում ավետարանը և սովորում ենք հարության սկզբունքը, մահվան պատճառած թախիծը, վիշտը և տառապանքը մեծամասամբ հեռանում են: . . . Մահացածների հարությունը ներկայացվում է մարդու լուսավորված մտքին, և նա հիմք ունի իր հոգու համար, որի վրա կարող է հուսալ: Դա է Վերջին Օրերի Սրբերի դիրքորոշումն այսօր: Մենք անհատապես գիտենք դա, այս հարցի շուրջ մենք խավարի մեջ չենք. Աստված այն հայտնել է մեզ, և մենք հասկանում ենք մահացածների հարության սկզբունքը, և որ ավետարանը մեզ համար պարզաբանում է կյանքն ու անմահությունը»:[8]

Ձախից. Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆ: Վերևից. Էնդրյու Ջենսոն:

Տեքստն ընթեռնելի դարձնելու նպատակով որոշ ուղղագրություններ, կետադրություններ և մեծատառերի օգտագործում ստանդարտացվել է:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Robert Aveson, “Leaves from the Journal of a Boy Emigrant,” *Deseret News,* Mar. 12, 1921, 4:7; available at lds.org/churchhistory/library/pioneercompanysearch.
2. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 52:
3. Joseph W. Young, Journal, Mar. 6, 1853, Church History Library, Salt Lake City, Utah; available online at mormonmigration.lib.byu.edu.

ՆԵՐԿԱՅԱՑՐԱ ԿԱՄՈՒՐՋ ԿՈՐԴՈՒՄՆԵՐ, Հ. Ի. ՊԵՏԵՐՍՈՆ © IRI. ԷԼԴՐՅՈՒ ՋԵՆՍՈՆԻ ՆԱՄԸ, ՀԵՂԻՆԱԿ ՀԱՄԻՆ ՀՈՎԵԼ ՋԵՆՍՈՆ, ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՐԱՏԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ՎԵՐԻՄ ԴՐԱՅԵՐԻ ՆԱՄԸ, ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՐԱՏԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ © IRI

Վիլիամ Դրայվեր (1837–1920), պիոներ, ով 1866թ. ճամփորդեց Անգլիայից Նյու Յորք՝ ԱՄՆ.

«Վիլին՝ իմ թանկագին զավակը, շատ վատ էր ողջ գիշեր մինչև 7.30, երբ նա ազատվեց իր տառապանքներից: Աստված լուսավորի նրա թանկագին հոգին: Որքան նա տառապեց: Նրա մահվան պատճառ դարձավ Ս. Աննայի բլրի վրա՝ Վանդսվորթ, Սուրրեյ, Անգլիա, պարոն Փոուլթերսի սայլի կոտրվելը: Օհ, որքան եմ ես սգում այս մեծ տառապանքի պատճառով: Օ՝ Տեր, օգնիր ինձ քո զորությամբ տանել այն քո ձեռքով և քաջալերիր ինձ ավելի ազնվորեն և հավատարմորեն ծառայել Քեզ, և թող որ ես ապրեմ ու պատրաստվեմ տեսնելու նրան ավելի երջանիկ ու լավ աշխարհում, նրա թանկագին քրոջ՝ Էլիզաբեթ Մերիաննի հետ, և արդարների հարությանը թող որ ես կարողանամ լինել այնտեղ նրանց դիմավորելու համար»:[9]

Աջից. Նախագահ Լորենսո Սնոու: Վերևից. Վիլիամ Դրայվեր:

Նախագահ Լորենցո Սնոու (1814–1901):

«Հաջորդ կյանքում մեր մարմինները փառավորված կլինեն և ազատ հիվանդություններից ու մահից: Ոչինչ այնքան զեղեցիկ չէ, որքան հարություն առած և փառավորված անձնավորությունը: Չկա ավելի հաճելի բան, քան այս պայմաններում լինելը և մեր կանանց ու երեխաներին և ընկերներին մեզ հետ ունենալը»:[10] ■

4. *Teachings of Presidents of the Church: Brigham Young* (1997), 273.
5. "A Letter from Capt. D. Jones to the Editor of *Udgorn Seion,*" in Ronald D. Dennis, *The Call of Zion: The Story of the First Welsh Mormon Emigration, vol. 2* (1987), 164–65; available at mormonmigration.lib.byu.edu.
6. *Teachings of Presidents of the Church: John Taylor* (2001), 50–51.
7. Andrew Jenson, Journal, Aug. 20, 1866, in *Journal History of The Church of Jesus Christ of Latter-day Saints,* Oct. 8, 1866, Church History Library, Salt Lake City, Utah, 6; available at lds.org/churchhistory/library/pioneercompanysearch.
8. *Teachings of Presidents of the Church: Wilford Woodruff* (2004), 82–83.
9. Frank Driver Reeve, ed., *London to Salt Lake City in 1866: The Diary of William Driver* (1942), 42; available at mormonmigration.lib.byu.edu.
10. Lorenzo Snow, in Conference Report, Oct. 1900, 63.

Երեց Ռասսել Մ. Նելսոն
Տասներկու Առաքյալների
Քվորում

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ

առաքելությունը և ծառայությունը

Հիսուսին երկրպագելու ամենալավ միջոցը Նրա օրինակին հետևելն է:

Լինելով «ողջ աշխարհում Քրիստոսի անվան հատուկ վկաներ[ից]» (ՎԿՈՒ 107.23) մեկը, կարծում եմ, որ ես լավագույնս ծառայում եմ, երբ ուսուցանում և վկայում եմ Նրա մասին: Առաջինը, ես կարող եմ տալ նույն հարցերը, որոնք Նա մի անգամ տվեց փարիսեցիներին. «Ձեզ ի՞նչպես է երևում Քրիստոսի համար. նա ո՞ւմ որդին է» (Մատթեոս ԻԲ.42):

Այս հարցերը հաճախ միտքս են գալիս, երբ ես հանդիպում եմ կառավարությունների և տարբեր կրոնական դավանանքների ղեկավարների հետ: Ոմանք ընդունում են, որ «Հիսուսը մեծ ուսուցիչ էր»: Ոմանք ասում են. «Նա մարգարե էր»: Ոմանք էլ պարզապես Նրան ընդհանրապես չեն ճանաչում: Մենք չպետք է զարմանանք: Վերջին հաշվով շատ քիչ մարդիկ ունեն վերականգնված ավետարանի ճշմարտությունները, որոնք մենք ունենք: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները ընդամենը փոքրամասնություն են կազմում նրանց մեջ, ովքեր իրենց քրիստոնյաներ են համարում:

Մեր այսօրվա իրավիճակը դարեր առաջ կանխատեսել էր Նեփին.

«Եվ եղավ այնպես, որ ես տեսա Աստծո Գառի եկեղեցին և այն թվով փոքր էր . . . . այնուամենայնիվ, ես տեսա, որ Գառի եկեղեցին, որոնք Աստծո սրբերն էին, նույնպես ողջ երկրի երեսի վրա էր. և նրա տիրապետությունները երկրի երեսի վրա փոքր էին: . . .

Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս, տեսա Աստծո Գառի զորությունը, որ այն իջավ Գառի եկեղեցու սրբերի վրա և Տիրոջ ուխտյալ ժողովրդի վրա, որոնք ցրված էին ողջ երկրի երեսին. և նրանք զինված էին արդարությամբ և Աստծո զորության մեծ փառքով» (1 Նեփի 14.12, 14):

Այդ արդարությունը, այդ զորությունը և այդ փառքը, իսկապես, մեր բազմաթիվ օրհնությունները հետևանք են Տեր Հիսուս Քրիստոսի մասին ունեցած մեր գիտելիքի, Նրա հանդեպ հնազանդության, երախտագիտության և սիրո:

Մահկանացության մեջ Իր համեմատաբար կարճ ճամփորդության ընթացքում Փրկիչն իրականացրեց երկու կարևոր նպատակներ: Մեկը Նրա «գործը և [Նրա] փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39): Մյուսը Նա պարզ ձևով ներկայացնեց. «Ես ձեզ օրինակ տուի, որ ինչպէս ես ձեզի արի, դուք էլ անէք» (Հովհաննես ԺԳ.15):

Նրա առաջին նպատակը մենք գիտենք որպես Քավություն: Սա եղել է մահկանացության մեջ Նրա ամենակարևոր առաքելությունը: Հին Ամերիկայի մարդկանց հարություն առած Տերը տվեց Իր առաքելության սահմանումը.

«Ես եկա աշխարհ՝ կատարելու իմ Հոր կամքը, որովհետև իմ Հայրն ուղարկեց ինձ:»

Եվ իմ Հայրն ուղարկեց ինձ, որպեսզի ես խաչի վրա բարձրացվեմ.իսկ հետո երբ խաչի վրա էի բարձրացվել, որպեսզի ես կարողանայի բոլոր մարդկանց ձգել դեպի ինձ» (3 Նեփի 27.13–14):

Շարունակելով Իր քարոզը Նա հայտնեց Իր երկրորդ նպատակը՝ մեզ համար լինել օրինակ. «Դուք գիտեք այն բաները, ինչ դուք պիտի անեք . . . . քանզի այն գործերը, որոնք դուք տեսաք ինձ անելիս, դրանք պետք է նաև դուք անեք» (3 Նեփի 27.21):

Առաջին նպատակը ես սահմանել եմ որպես Նրա *առաքելություն:* Նրա երկրորդ նպատակը ես կկամենամ ներկայացնել որպես Նրա *ծառայություն:* Եկեք վերանայենք Նրա կյանքի այս երկու նպատակները՝ Նրա առաքելությունը և Նրա ծառայությունը:

Քավություն՝ Հիսուս Քրիստոսի առաքելությունը

Նրա առաքելությունը Քավությունն էր: Այդ առաքելությունը բացառապես Նրանն էր: Ծնված լինելով մահկանացու մորից և անմահ հորից, Նա միակն էր, որ կարող էր կամավոր դնել Իր կյանքը և կրկին վերցնել այն (տես Հովհաննես Ժ.14–18): Նրա Քավության փառահեղ հետևանքներն անսահման են և հավերժական: Նա հանեց մահվան խայթոցը և գերեզմանի վիշտը դարձրեց ժամանակավոր (տես Ա Կորնթացիս ԺԵ.54–55): Քավության Նրա պարտականությունը հայտնի էր նույնիսկ նախքան Արարումն ու Անկումը: Դա ոչ միայն ողջ մարդկության հարությունը և անմահությունն ապահովելու համար էր, այլ այն նաև մեր մեղքերից ներվելու հնարավորության համար էր՝ համաձայն Նրա հիմնած պայմանների: Այսպիսով, Նրա Քավությունը բացեց ճանապարհ, որի միջոցով մենք կարող ենք հավերժ միասին լինել Նրա և մեր ընտանիքների հետ: Այս հնարավորությունը մենք ընդունում ենք որպես հավերժական կյանք՝ Աստծո կողմից մարդկանց տրված մեծագույն պարգև (տես ՎԿՈՒ 14.7):

Ուրիշ ոչ ոք չէր կարող իրականացնել Քավությունը: Ուրիշ ոչ մի անձնավորություն, նույնիսկ ամենամեծ հարստություններով և զորությամբ, չէր կարող երբևէ փրկել մեկ հոգի՝ նույնիսկ իր սեփականը (տես Մատթեոս ԺԹ.24–26): Եվ ուրիշ ոչ ոքից չի պահանջվի կամ ոչ ոքի թույլ չի տրվի արյուն հեղել մեկ այլ մարդ արարածի հավերժական փրկության համար: Հիսուսն արեց դա «մեկ անգամ բոլորի համար» (Եբրայեցիս Ժ.10):

Չնայած Քավությունը կատարվել է Նոր Կտակարանի ժամանակաշրջանում, Հին կտակարանի ժամանակների իրադարձությունները հաճախ կանխագուշակել են դրա կարևորությունը: Ադամին ու Եվային պատվիրվեց զոհաբերություններ մատուցել որպես «Հոր Միածնի զոհաբերության նմանություն» (Մովսես 5.7): Ինչպե՞ս: Արյուն թափելով: Իրենց սեփական փորձառությունով նրանք հաստատեցին սուրբ գրությունը, որ «Մարմնի հոգին արիւնումն է» (Ղևտացոց ԺԷ.11):

Բժիշկները գիտեն, որ երբ արյունը դադարում է հոսել դեպի որևէ օրգան, խնդիր է առաջանում: Եթե դեպի ոտք արյան հոսքը ընդհատվում է, դրան կարող է հետևել փտախտը: Եթե դադարում է հոսքը դեպի ուղեղ, արդյունքում կարող է կաթված լինել: Եթե արյան կանոնավոր հոսքը դեպի սիրտը սնուցող զարկերակ խափանվի, սրտի կաթված կարող է զարգանալ: Եվ եթե ներքին արյունահոսությունը չդադարեցվի, մահը վրա կհասնի:



Փրկիչը սկսեց իր արյունը հեղել ողջ մարդկության համար ոչ թե խաչի վրա, որտեղ ավարտվեց Քավության տառապանքը, այլ Գեթսեմանի պարտեզում:

ԿՈՆ, ԱՅԼ ՔՈ ՈՐԴՈՆ (STABAT MATER), ՁԵՌԱՅՍ ՏՐՍԱՄՏԻ © ԶՈՐԻԿԼԻՆԻ ԹԱՆԳԱՄՈՆ, ԱՅՑԻ ՅՈՐՔ, ՆԵՐՔՈՒՐ, ԳԵԹՍԵՄԱՆԻ ՊԱՐՏԵԶՈՒՄ, ԿԱՐԼ ՀԵՆՐԻԽ ԲԼՈԽԻ

Ադամը, Եվան և գալիք սերունդները սովորեցին, որ երբ նրանք թափում են կենդանու արյունը, դրա կյանքը ավարտվում է: Իրենց զոհաբերության ծիսակատարության համար *սովորական* կենդանի չէր կարող լինել: Այն պետք է լիներ հոտի առաջնեկը և անարատ կենդանի (տես, օրինակ Ելից ԺԲ.5): Այս պայմանները նաև խորհրդանշում էին Աստծո Գառի վերջին անարատ զոհաբերությունը:

Ադամին ու Եվային պատվիրան էր տրվել. «Ուստի դու պետք է ամեն ինչ անես Որդու անունով, և դու պետք է ապաշխարես և կանչես առ Աստված առհավետ՝ Որդու անունով» (Մովսես 5.8): Այդ օրվանից մինչև ժամանակների գագաթնակետը կենդանիների զոհաբերությունը շարունակեց լինել Աստծո Որդու վերջնական Քավության օրինակն ու ստվերը:

Երբ Քավությունն իրականացվեց, այդ մեծ ու վերջին զոհաբերությունը իրագործեց Մովսեսի օրենքը (տես Ալմա 34.13–14) և վերջ դրեց կենդանիների զոհաբերությանը, որն ուսուցանվել էր, որ «մարմնի հոգին արիւնումն [էր]» (Ղևտացոց ԺԷ.11): Հիսուսը բացատրեց, թե ինչպես էին հնադարյան զոհաբերությունների տարրերը ներառվում Քավության մեջ և խորհրդանշորեն հավերժանում հաղորդության միջոցով: Կրկին վերանայենք կյանքին, մարմնին և արյանը վերաբերվող հղումները.

«Յիսուսն էլ նորանց ասեց. Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, եթե մարդի Որդու մարմինը չուտէք եւ նորա արյունը չխմէք, կեանք չունիք ձեր անձերումը:

Իմ մարմինը ուտողը եւ իմ արյունը խմողը յաւիտենական կեանք ունի. եւ ես յետին օրումը կյարուցանեմ նորան» (Հովհաննես Զ.53–54):

Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով ողջ մարդկությունը, նույնիսկ այնքանը, որքանը կլինեն, կփրկվեն: Փրկիչը սկսեց Իր արյունը հեղել ողջ մարդկության համար ոչ թե խաչի վրա, այլ Գեթսեմանիի պարտեզում: Այնտեղ Նա Իր վրա վերցրեց բոլորի մեղքերի ծանրությունը, ովքեր երբևէ կապրեին: Այդ ծանր բեռի տակ Նա արյունահոսեց ամեն մի ծակոտիից (տես ՎԱՈՒ 19.18):

Մարգարե Ջոզեֆ Սմիթը նշել է Քավության կարևորությունը: Նա ասել է. «Մեր կրոնի հիմնական սկզբունքները Առաքյալների և Մարգարեների վկայությունն է Հիսուս Քրիստոսի մասին, որ Նա մահացավ, թաղվեց և երրորդ օրը հարություն առավ և համբարձվեց երկինք. իսկ մեր կրոնի մյուս բոլոր բաները լոկ դրա հավելումներն են»:[1]

Այդ իշխանությամբ և մեծագույն երախտագիտությամբ ես ուսուցանում եմ սա և վկայում Նրա մասին:

Հիսուս Քրիստոսի օրինակի ծառայությունը

Տիրոջ երկրորդ հեռահար նպատակը մահկանացության մեջ որպես մեզ համար օրինակ ծառայելն

էր: Նրա օրինակելի կյանքը իրենից ներկայացնում էր Նրա մահկանացու ծառայությունը: Այն ներառում էր Նրա ուսմունքները, առակները և քարոզները: Այն ընդգրկում էր Նրա հրաշքները, սիրալիր բարյացակամությունը և երկայնամտությունը մարդկանց զավակների հանդեպ (տես 1 Նեփի 19.9): Նա հոգատար վերաբերմունք էր ցուցաբերում քահանայության օգտագործման հանդեպ: Այն ներառում էր Նրա արդար վրդովմունքը, երբ Նա դատապարտում էր մեղքը, (տես Հռովմայեցիս Ը.3) և երբ Նա շրջեց դրամափոխների սեղանները (տես Մատթեոս ԻԱ.12): Այն նաև ներառում էր Նրա խոր վիշտը: Նրան ծաղրեցին, խարազանեցին, նրան իր ժողովուրդն ուրացավ (տես Մոսիա 15.5), նույնիսկ Նրան մատնեց մի աշակերտը, իսկ և մեկ ուրիշը ուրացավ (տես Հովհաննես ԺԸ.2–3, 25–27):

Որքան հրաշալի էին Նրա ծառայության գործերը, դրանք առանձնահատուկ չէին և շարունակում են չլինել Նրա համար: Սահմանափակ չէ այն մարդկանց թիվը, ովքեր կկամենան հետևել Հիսուսի օրինակին: Նմանատիպ գործեր են կատարվել Նրա մարգարեների և առաքյալների և Նրա այլ լիազորված ծառաների կողմից: Շատերն են հալածանք տարել հանուն Նրա (տես Մատթեոս Ե.10, 3 Նեփի 12.10): Մեր իսկ ժամանակներում դուք գիտեք եղբայրների և քույրերի, ովքեր լրջորեն ջանացել են, նույնիսկ չափազանց մեծ գնով, հետևել Տիրոջ օրինակին:

Դա հենց այդպես էլ պետք է լինի: Դա է մեզ հետ կապված Նրա հույսը: Տերը խնդրում է մեզ հետևել Իր օրինակին: Նրա կոչը շատ անկեղծ է.

- «Ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել: . . . Ճիշտ ինչպես ես եմ» (3 Նեփի 27.27, տես նաև 3 Նեփի 12.48):
- «Իմ ետեւից եկէք, եւ ես ձեզ մարդկանց որսորդ կշինեմ» (Մատթեոս Դ.19):
- «Ես ձեզ օրինակ տուի, որ ինչպէս ես ձեզի արի, դուք էլ անէք» (Հովհաննես ԺԳ.15. տես նաև Հովհաննես ԺԴ.6):

Այս և այլ նմանատիպ սուրբ գրությունները չեն գրվել որպես խորհուրդներ: Դրանք աստվածային հրամայականներ են: Մենք պետք է հետևենք Նրա օրինակին:

Որպեսզի կարողանանք ձևավորել Նրան հետևելու ցանկություն, հավանաբար մենք կարող ենք խորհել Նրա կյանքը նկարագրող հինգ հատկանիշների մասին, որոնք մենք կարող ենք ընդօրինակել:

Սեր

Եթե ես հարցնեի, թե Նրա կյանքի որ առանձնահատկությունը դուք կնշեիք առաջինը, ես կարծում եմ, որ դուք կնշեիք Նրա սիրելու հատկությունը: Դա կներառեր Նրա կարեկցանքը, բարությունը, գթությունը, նվիրվածությունը, ներողամտությունը, ողորմածությունը, արդարությունը և ավելին: Հիսուսը սիրում էր Իր Հորը և Իր մորը (տես Հովհաննես ԺԹ.25–27): Նա սիրում էր Իր ընտանիքին ու Սրբերին (տես Հովհաննես ԺԳ.1, Բ Թեսաղոնիկեցիս Բ.16): Նա սիրում էր մեղավորին առանց մեղքն արդարացնելու (տես Մատթեոս Թ.2, ՎԿՈՒ 24.2): Եվ Նա ուսուցանեց մեզ, թե ինչպես մենք կարող ենք մեր սերը ցուցաբերել Նրա հանդեպ: Նա ասաց. «Եթէ ինձ սիրում էք, իմ պատուիրանքները պահեցէք» (Հովհաննես ԺԴ.15: Այնուհետև, ընդգծելու համար, որ Նրա սերն *անվերապահ* չէ, Նա ավելացրել է. «Եթե իմ պատուիրանքները պահէք, իմ սէրի մէջը կկենաք. Ինչպէս ես իմ Հօր պատուիրանքները պահեցի, եւ կենում եմ նորա սէրի մեջ» (Հովհաննես ԺԵ.10, տես նաև ՎԿՈՒ 95.12, 124.87):

Մեր Փրկչի սիրո մեկ այլ արտահայտություն էր Նրա ծառայությունը: Նա ծառայում էր Իր Հորը, և Նա ծառայում էր այն մարդկանց, ում հետ Նա ապրում և աշխատում էր: Երկու եղանակով էլ մենք պետք է հետևենք Նրա օրինակին: Մենք պետք է ծառայենք Աստծուն, «նրա ամեն ճանապարհներովը գնանք և նորան սիրենք» (Երկրորդ Օրինաց Ժ.12, տես նաև ԺԱ.13, Հեսու ԻԲ.5, ՎԿՈՒ 20.31, 59.5): Եվ մենք պետք է սիրենք մեր մերձավորներին նրանց ծառայելով (տես Գաղատացիս Ե.13, Մոսիա 4.15–16): Մենք սկսում ենք

Առանձնահատկությունը, որի շնորհիվ Փրկչի ուսմունքները վեր են դասվում մնացած բոլոր ուսուցիչների ուսմունքներից, այն է, որ Նա ուսուցանեց հավերժական նշանակության ճշմարտություններ: Միայն Նա կարող էր հայտնել մեր կյանքի իմաստը:

ԼԵՌՆԻ ՔԱՅՈՂԸ, ՁԵՑԱՆՍ ՏՐՍԱՆՏ, ՆԵՐՔԻՆ, ՔՐԻՍՏՈՍԻՆ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒՄԸ, ՀԵՆՐԻԽ ՀՈՒՆԳՆԻՆ, ՏՊԱՆԴԱՐԱՆԻ Ս. ՀԱՅՐՈՒՍՆՈՒ ՁՈՒՐՈՒՄ

մեր ընտանիքներից: Մեծ սերը, որ կապում է ծնողներին իրենց երեխաների հետ, առաջանում է նրանց ծառայելու արդյունքում, երբ նրանք գտնվում են ամբողջությամբ կախվածության շրջանում: Կյանքի ավելի ուշ շրջանում պարտաճանաչ երեխաները կարող են հնարավորություն ունենալ փոխադարձել այդ սերը՝ ծառայելով իրենց տարեց ծնողներին:

Արարողություններ

Փրկչի օրինակելի կյանքի երկրորդ հատկանիշը սուրբ արարողությունները կարևորելն էր: Իր մահկանացու ծառայության ընթացքում Նա ցույց տվեց փրկության արարողությունների կարևորությունը: Նա մկրտվեց Հովհաննեսի կողմից Հորդանան գետում: Նույնիսկ Հովհաննեսը հարցրեց. «Ինչո՞ւ»:

Հիսուսը բացատրեց. «Որովհետեւ այսպէս է վայելում *մեզ,* որ ամեն արդարութիւն կատարենք» (Մատթեոս Գ.15, շեղագրումն ավելացվածէ): Ոչ միայն արարողությունն էր կարևոր, այլ Հիսուսի և Հովհաննեսի տված օրինակը ևս կարևոր էր:

Ավելի ուշ Տերը սովորեցրեց հաղորդության արարողությունը: Նա բացատրեց հաղորդության խորհրդանիշը և տվեց դրա սուրբ խորհրդանշանները Իր աշակերտներին (տես Մատթեոս ԻԶ.26–28, Մարկոս ԺԴ.22–24, Ղուկաս ԼԴ.30):

Մեր Երկնային Հայրը նույնպես հրահանգներ է տվել արարողությունների վերաբերյալ: Նա ասել է. «Դուք պետք է վերստին ծնվեք երկնքի արքայության մեջ՝ ջրով և Հոգով, և մաքրվեք արյունով, այսինքն՝ իմ միածնի արյունով. որպեսզի դուք սրբագործվեք բոլոր մեղքերից և վայելեք հավերժական կյանքի խոսքերն այս աշխարհում և հավերժական կյանք՝ գալիք աշխարհում, այսինքն՝ անմահության փոռքը» (Մովսես 6.59):

Տիրոջ ետմահկանացու ծառայության ընթացքում հայտնվել են վեհացման բարձրագույն արարողությունները (ՎևՈՒ 124.40–42): Նա այս արարողությունների համար է պատրաստել Իր սրբազան տաճարները: Մեր օրերում լվացումները, օծումները և օժտումները տրվում են այն անհատներին, ովքեր պատշաճորեն պատրաստված են (տես ՎևՈՒ 105.12, 18, 33, 110.9, 124.39): Տաճարում անհատը կարող է կնքվել ամուսնու կամ կնոջ հետ, նախնիների և ժառանգների հետ (տես ՎևՈՒ 132.19): Մեր Վարդապետը օրենքի և կարգ ու կանոնի Աստված է (տես ՎևՈՒ 132.18): Արարողությունների հանդեպ Նրա ուշադրությունը մեզ ցույց տված օրինակի զորեղ մասն է:

Աղոթք

Տիրոջ օրինակելի ծառայության երրորդ մասն է կազմում աղոթքը: Հիսուսն աղոթում էր Իր Երկնային

Հորը և նաև մեզ սովորեցրեց, թե ինչպես աղոթել: Մենք պետք է աղոթենք Աստծուն՝ Հավերժական Հորը, Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունով, Սուրբ Հոգու զորությամբ (տես Մատթեոս Զ.9–13, 3 Նեփի 13.9–13, Ջոզեֆ Սմիթի թարգմանություն, Մատթեոս Զ.9–15): Ես սիրում եմ Հովհաննեսի 17 գլխի Տիրոջ կողմից ասված աղոթքը: Այնտեղ Որդին ազատ հաղորդակցվում է Իր Հոր հետ Իր առաքյալների համար, ում Նա սիրում է: Դա արդյունավետ և կարեկցող աղոթքի օրինակ է:

Գիտելիք

Տիրոջ օրինակի չորրորդ մասը Իր աստվածային գիտելիքների կիրառումն էր: Ինչպես արդեն նշվել է, շատ ոչ-քրիստոնյաներ ընդունում են, որ Հիսուսը եղել է մեծ ուսուցիչ: Դա իսկապես այդպես է: Սակայն ինչն է Նրա ուսուցումը դարձնում առանձնահատուկ:Արդյո՞ք Նա հմուտ ճարտարագետ էր, մաթեմատիկոս կամ գիտնական: Որպես այս և այլ աշխարհների Արարիչ (տես Մովսես 1.33), Նա անկասկած կարող էր ուսուցիչ լինել: Կամ որպես սուրբ գրության հեղինակ, Նա կարող էր շատ լավ ուսուցանել գրական ստեղծագործություն:

Առանձնահատկությունը, որը Նրա ուսմունքները առանձնացնում էր մնացած բոլոր ուսուցիչներից այն էր, որ Նա ուսուցանում էր *հավերժական* նշանակություն ունեցող ճշմարտություններ: Միայն Նա կարող էր հայտնել մեր կյանքի նպատակը: Միայն Նրա միջոցով մենք կարող էինք իմանալ մեր *նախաերկրային* գոյության և *հետմահկանացու* ներուժի մասին:

Մի առիթով Մեծ Ուսուցիչն ասել էր Իր թերահավատ լսողներին, որ նրանք Նրա համար երեք վկաներ ունեին.

- Հովհաննես Մկրտիչը:
- Գործերը, որոնք կատարել էր Հիսուսը:
- Աստծո՝ Հավերժական Հոր խոսքը (տես Հովհաննես Ե.33–37):

Այնուհետև Նա առաջարկեց չորրորդ վկան. «Քննեցէք գրքերը որ դուք կարծում էք թէ նորանցով ունիք յավիտենական կեանք» (Հովհաննես Ե.39):

Կարծել բառը այդ արտահայտության մեջ նախ կարող է տեղին չթվալ: Սակայն այն կարևոր է այն իմաստի համար, որը Հիսուսը փորձում էր հաղորդել: Նա գիտեր, որ Իրեն լսողներից շատերը իրականում *կարծում* էին, թե հավիտենական կյանք կունենան սուրբ գրություններով: Սակայն նրանք սխալվում էին: Սուրբ գրություններն առանձին *չեն կարող* հավիտենական կյանք պարգևել: Իհարկե սուրբ գրությունները զորություն ունեն, սակայն այդ զորությունը գալիս է հենց Հիսուսից: Նա *է* Բանը՝ *Լոգոս:* Հավիտենական կյանքի զորությունը Նրանում է, ով «Սկզբումն էր Բանը, եւ Բանն Աստուծոյ մոտ էր. Եւ Բանն Աստուած էր» (Հովհաննես Ա.1, տես նաև 2 Նեփի 31.20, 32.3): Այնուհետև, Նրան լսող թերահավատների համառ կարծիքի պատճառով Հիսուսը սկսեց հանդիմանել նրանց. «Դուք չէք կամենում ինձ մօտ գալ, որ [հավիտենական] կեանք ունենաք» (Հովհաննես Ե.40):

Ուսուցիչը կարող է հեղեղել մեզ Իր մեծ գիտելիքներով, սակայն Նա դա չի անում: Նա հարգում է մեր ընտրության իրավունքը: Նա թույլ է տալիս, որ մենք զգանք որևէ բան հայտնաբերելու ուրախությունը: Նա խրախուսում է մեզ ապաշխարել մեր գործած սխալների համար: Նա թույլ է տալիս, որ մենք փորձարկենք ազատությունը, որ առաջ է գալիս Նրա աստվածային օրենքին մեր իսկ կամքով հնազանդվելուց: Այո, եղանակը, որով Նա օգտագործում է Իր գիտելիքները, մեծ օրինակ է ծառայում մեզ համար:

Տոկունություն

Տիրոջ ծառայության հինգերորդ մասը վերաբերվում է մինչև վերջ տոկալու Նրա պատվիրանին: Նա երբեք հետ չկանգնեց Իր հանձնարարությունից: Չնայած Նա տարավ տառապանք, որ վեր է մեր հասկացողությունից, Նա չհուսահատվեց: Ավելի ու ավելի մեծացող դժվարությունների մեջ Իր հանձնարարությունը կատարելիս Նա տոկաց մինչև վերջ, որ քավեր ողջ մարդկության մեղքերը: Նրա վերջին խոսքերը, երբ խաչի վրա էր, եղան. «Կատարուած է» (Հովհաննես ԺԹ.30):

Կիրառել մեր կյանքում

Այս հինգ կետերն էլ կարող են կիրառվել մեր իսկ կյանքում: Եվ իհարկե Հիսուսին երկրպագելու մեր լավագույն եղանակը Նրա օրինակին հետևելն է:

Երբ մենք սկսում ենք գիտակցել, թե ով է Հիսուսը և ինչ է արել մեզ համար, մենք որոշ չափով կարող ենք հասկանալ առաջին և մեծ պատվիրանի իմաստը. «Սիրիր քո Տէր Աստուծուն բոլոր սրտիցդ, եւ բոլոր անձիցդ, եւ բոլոր մտքիցդ, եւ բոլոր զօրութիւնիցդ» (Մարկոս ԺԲ.30): Այլ կերպ ասած, ամեն բան, ինչ մենք մտածում, անում և ասում ենք, պետք է բխի Նրա և Նրա Հոր հանդեպ մեր ունեցած սիրուց:

Հարցրեք ինքներդ ձեզ. «Կա մեկը, ում սիրում եմ ավելի շատ, քան Տիրոջը»: Ապա համեմատեք ձեր պատասխանը Տիրոջ սահմանած այս չափանիշների հետ.

- «Ով որ հօրը կամ մօրը ինձանից աւելի է սիրում, նա ինձ արժանի չէ:
- Ով որ որդին կամ աղջիկն ինձանից աւելի է սիրում, նա ինձ արժանի չէ» (Մատթեոս Ժ.37):

Որքան էլ մեծ լինի ընտանիքի և ընկերների հանդեպ տածած *սերը*, այն ավելի խորն է, երբ խարսխված է

Տիրոջ օրինակելի կյանքը կազմված էր Նրա մահկանացու ծառայությունից: Այն ներառում էր Նրա ուսմունքները, առակները և քարոզները: Նա մեծ սիրով ու կարեկցանքով օգտագործում էր քահանայության իշխանությունը:

Հիսուս Քրիստոսի սիրո վրա: Երեխաների հանդեպ ծնողական սերն ավելի մեծ նշանակություն ունի այստեղ և այս կյանքից հետո՝ Նրա շնորհիվ: Սիրային բոլոր հարաբերություններն ավելի կարևոր են դառնում Նրա միջոցով: Մեր Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի սերը լուսավորվածություն և ոգեշնչում է պարգևում և մղում է ուրիշներին վեհորեն սիրելու:

Արարողությունները կենտրոնացնում են մեր ուշադրությունը հավերժական արժեք ունեցող ծառայության վրա: Ծնողները պետք է մտածեն, թե հաջորդը որ արարողությունն է անհրաժեշտ յուրաքանչյուր երեխայի համար: Տնային ուսուցիչները պետք է մտածեն հաջորդ համապատասխան արարողության մասին, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր ընտանիքին, ում նրանք ծառայում են:

Փրկչի *աղոթքի* օրինակը հիշեցնում է մեզ, որ անձնական աղոթքը, ընտանեկան աղոթքը և Եկեղեցու մեր հանձնարարությունները աղոթքով կատարելը պետք է դառնան մեր կյանքի մի մասը: Հոր կամքն իմանալը և անելը մեծ հոգևոր ուժ և վստահություն է պարգևում (տես ՎԿՈՒ 121.45): Մեր ցանկությունն է Տիրոջ կողքին լինել:

Գիտելիքը «բաների մասին, ինչպես դրանք իրականում կան և բաների մասին, ինչպես դրանք իրականում լինելու են» (Հակոբ 4.13) մեզ թույլ է տալիս գործել համաձայն ճշմարիտ սկզբունքների և վարդապետության: Այդ գիտելիքը կբարձրացնի մեր վարքագծի մակարդակը: Արարքները, որոնք այլապես կարող էին կատարվել ցանկությունից և հուզմունքից դրդված, կփոխարինվեն խելամիտ և ճիշտ արարքներով:

Մինչև վերջ համբերելու պատվիրանը նշանակում է, որ չենք խնդրի ազատել մեզ մեր ծառայության կոչումից: Դա նշանակում է, որ մենք հաստատակամորեն հետամուտ կլինենք արժանի նպատակներին: Դա նշանակում է, որ մենք երբեք չենք հիասթափվի սիրած էակից, ով մոլորվել է: Եվ դա նշանակում է, որ մենք միշտ կփայփայենք մեր հավերժական ընտանեկան հարաբերությունները, նույնիսկ հիվանդության, անկարողության կամ մահվան դժվար օրերին:

Իմ ողջ սրտով ես աղոթում եմ, որ Տիրոջ դարձի բերող ազդեցությունը կարողանա մեծ փոփոխություն բերել ձեր կյանք: Նրա առաքելությունը և Նրա ծառայությունը կարող են օրհնել մեզանից յուրաքանչյուրին այժմ և միշտ: ■

Բրիգամ Յանգի Համալսարանի 1998թ. օգոստոսի 18-ի հավաքի ելույթերից: Անգլերենով ամբողջ ելույթը կրնելի է գտնել speeches.byu.edu կայքում:

ՀՂՈՒՄ

1. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 49:

Զատկի շաբաթ

Իր կյանքի վերջին շաբաթվա ընթացքում մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսը կատարեց Քավությունը, որը ներառում էր Նրա տառապանքները Գեթսեմանում, Նրա Խաչելությունը Գողգոթայում և Նրա Հարությունը գերեզմանից:

Նախքան երկրի ստեղծումը Երկնային Խորհրդում Երկնային Հայրը ներկայացրեց Իր ծրագիրը մեզ՝ Իր զավակների համար: Մենք ուրախությունից բացականչեցինք, երբ Երկնային Հայրն ընտրեց Հիսուս Քրիստոսին փրկության ծրագիրն իրականացնելու համար (տես Հոբ ԼԸ.7 և Աբրահամ 3.27): Ծնվելով Մարիամից Բեթլեհեմում, Հիսուսն ապրեց անմեղ կյանքով: Իր Քավության շնորհիվ մենք կարող ենք վերադառնալ ապրելու մեր Երկնային Հոր հետ և ստանալու հավերժական կյանք: Հիսուս Քրիստոսը կրկին կգա զորությամբ և փառքով բնակվելու երկրի վրա Հազարամյակի ժամանակ, և Նա կկանգնի որպես բոլոր մարդկանց Դատավոր վերջին օրը:

Հետևյալը պատկերներ են Աստվածաշնչի տեսաֆիլմերից, որոնք նկարագրում են Փրկչի կյանքի վերջին շաբաթը: Կարող եք կարդալ յուրաքանչյուր պատկերի համար տրված սուրբ գրության հատվածները: Իրադարձությունների լրիվ ժամանակագրության համար անդրադարձեք չորս Ավետարանների ներդաշնակությանը Աստվածաշնչի բառարանում կամ Սուրբ Գրությունների Ուղեցույցում: Աստվածաշնչի տեսաֆիլմերը մատչելի են biblevideos.lds.org կայքում:

ՊԱՏԿԵՐՈՒՄ © IRI

Զատիկից առաջ հինգերորդ օրը, Հիսուսը Երուսաղեմ մտավ էշին հեծած, ինչպես որ մարգարեացել էին: Մարդիկ ճանաչեցին Նրան որպես իրենց Թագավոր, բացականչեցին «Ոսաննա» և փռեցին իրենց հագուստները և արմավենու ճյուղերը գետնին ավանակի առջև: (Տես Մատթեոս ԻԱ.1–11, Մարկոս ԺԱ.1–11, Զաքարիա Թ.9):

Իր մահկանացու ծառայության ընթացքում երկրորդ անգամ Հիսուսը մաքրեց տաճարի տարածքը: «Իմ տունը աղոթքի տուն պիտի կոչուի ամեն ազգերի համար, իսկ դուք աւազակների բույն արիք դորան», ասաց Նա դրամափոխներին (Մատթեոս ԻԱ.13): Ապա շատ կույրեր և կաղեր մոտ եկան Նրան տաճարում, և Նա բժշկեց նրանց: Բայց երբ քահանայապետերը և դպիրները տեսան Նրա հրաշքները, նրանք զայրացան և մտածում էին, ինչպես կործանել Նրան (Տես Մատթեոս ԻԱ.12–17; Մարկոս ԺԱ.15–19):



Հիսուս Քրիստոսը, Հոր Միածին Որդին, բարեհաճեց գալ երկիր փրկագնելու բոլոր մարդկանց Անկումից (Տես 1 Նեփի 11.16–22, 26–33, Ալմա 7.10–13):

Շաբաթվա ընթացքում Փրկիչը հաղորդեց իր ամենահիշարժան քարոզներից մեկը, ներառյալ Նրա ուսմունքները այրու լումայի մասին (Տես Մարկոս ԺԲ.41–44, Ղուկաս ԻԱ.1–4):

Գեթսեմանի Պարտեզում Փրկիչը ծնկի իջավ և աղոթեց, Նրա տառապանքը աշխարհի մեղքերի համար ստիպեց Նրան «ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե մարմնով, թե հոգով» (ՎևՈՒ 19.18): Շուտով Հուդա Իսկարիովտացին և զինված ամբոխը ձերբակալեցին Հիսուսին և բոլոր աշակերտները լքեցին Տիրոջը և փախան: (Տես Մատթեոս ԻԶ.36–56, Մարկոս ԺԴ.32–50, Ղուկաս ԻԲ.39–53):

Իր վերջին ընթրիքի ժամանակ Հիսուսը խոստացավ Իր առաքյալներին, որ նրանք ստանալու էին Մխիթարիչը, կամ Սուրբ Հոգին, երբ Նա գնար: Նա ուսուցանեց նրանց հիշել Իրեն՝ հաղորդությունից ճաշակելով: Երեկոյի վերջում Հիսուսն ասաց Միջնորդական Աղոթքը, որտեղ Նա աղոթեց, որ աշակերտները կարողանան միասնական դառնալ: (Տես Մատթեոս ԻԶ.17–30, Մարկոս ԺԴ.12–26, Ղուկաս ԻԲ.14–32, Հովհաննես ԺԳ–17):

Անօրինական դատավարությունից և դաժան խարազանումից հետո, Հիսուս Քրիստոսը թույլ տվեց, որ Իրեն խաչեն, կատարելով «մեծ և վերջին զոհաբերությունը», որը փրկությունը հնարավոր դարձրեց Աստծո բոլոր զավակների համար (տես Ալմա 34.14–15): Նախքան մութն ընկնելը Հիսուսի հետևորդները հանեցին Նրա մարմինը խաչի վրայից, փաթաթեցին կտավով և համեմունքներով և դրեցին Նրան գերեզմանի մեջ (Տես Մատթեոս ԻԷ, Ղուկաս ԻԳ, Մարկոս ԺԵ, Հովհաննես ԺԹ գլուխներում):

Կիրակի առավոտը արևը ծագեց և Մարիամ Մագդաղենացին և մյուս հավատարիմ կանայք հասան գերեզմանին, որպեսզի շարունակեն օծել Հիսուսի մարմինը: Նրանք տեսան գերեզմանի քարը մի կողմ գլորված և երկու հրեշտակներ, որ հայտարարեցին ուրախ լուրը. «Այստեղ չէ. որովհետեւ յարութիւն առաւ» (Մատթեոս ԻԸ.6): (1 Կորնթացիս ԺԵ.22): (Տես Մատթեոս ԻԸ, Մարկոս ԺՁ, Ղուկաս ԻԴ, Հովհաննես Ի): ■

Օգնել երեխաներին

ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՄԿՐՏՈՒԹՅԱՆԸ

Ջեսիկա Լարսեն և Մարիսա Վիդիսոն
Եկեղեցու ամսագրեր

Մանկությունը ուրախ սկիզբների շրջան է: Առաջին անգամ հեծանիվ վարելը, դպրոց հաճախելը կամ նոր կերակուր փորձելը մի քանի հուզումնալի իրադարձություններ են, որոնք ձևավորում են երեխայի կյանքը: Որպես չափահասներ մենք հնարավորություն ունենք օգնել երեխաներին հայտնագործության այդ ուղու ընթացքում: Որպես չափահասներ Եկեղեցում մենք նաև հնարավորություն ունենք օգնելու նրանց աճել ավետարանում (տես ՎԱՈՒ 68.25): Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի գեղեցիկ և իմաստալի իրադարձություն դարձնենք երեխայի մկրտությունը՝ առաջին ուխտը, որը մարդը կապում է մեր սիրառատ Երկնային Հոր հետ:

«Այս Եկեղեցու հիմնական նպատակն է ուսուցանել երիտասարդությանը՝ նախ տանը, և ապա եկեղեցում»,– սովորեցրել է Նախագահ Բոյդ Կ. Փաքերը:[1]

Հետևյալ օրինակներում ծնողները կիսվում են, թե ինչպես են նախապատրաստել իրենց երեխաներին սրբազան արարողությունների և ուխտերի համար:

Մենք վաղ ենք սկսում

«Այն տարին, երբ երեխան դառնում է յոթ տարեկան, ժամանակն է տոնելու»,- ասում է Լորին՝ չորս երեխաների մի մայրը: Նա և իր ամուսինը իրենց երեխաներին մկրտության մասին ուսուցանում են ծնվելու օրվանից: Սակայն, երբ երեխան դառնում է յոթ տարեկան, նրանց ընտանիքը սկսում է ավելի հատուկ նախապատրաստություն: Նրանք կազմակերպում են ընտանեկան երեկոյի դաս ամեն ամիս տարբեր թեմաների շուրջ, որոնք կապված են մկրտության հետ, ինչպես օրինակ ուխտեր և Հիսուսի օրինակը:

Լորին ասում է, որ հատկապես կարևոր են այն ամսվա դասերը, երբ երեխաների ութերորդ տարեդարձն է: Նա երեխաներին ցույց է տալիս հագուստները, որ նրանք կրել են, երբ անուն և օրհնություն են ստացել, և նա պատմում է այն տվյալ արարողության օրվա մասին:

«Դա տաճարային ուխտերի օրհնությունների վրա կենտրոնանալու իսկական ժամանակն է»,– նշում է Լորին: Մենք միշտ նպատակ ենք դնում ուսուցանել, որ մկրտվելու ընտրությունը առաջին քայլն է տաճարային օրհնությունների համար նախապատրաստվելիս»:

Մենք դարձնում ենք դա ընտանեկան գործ

Մոնիկան, չորս երեխաների մի մայր, խորհուրդ է տալիս հնարավորության դեպքում ավագ երեխաներին ներգրավել փոքր քույրերի և եղբայրների նախապատրաստության գործում. «Իրենց դեռահաս եղբոր կամ քրոջ վկայությունը կամ փորձառությունը իսկապես զորություն է ավելացնում»,- ասում է նա: Լորին ավելացնում է, որ երբեմն խնդրում է մկրտությանը պատրաստվող երեխաներն ուսուցանեն իրենց փոքր եղբայրներին և քույրերին:

Մենք օգտագործում ենք դա որպես միսիոներական միջոց

Երբ Դանիելի դուստրը դարձավ ութ տարեկան, նա գիտեր, որ աղջիկը կկամենար իր մկրտության

օրը Եկեղեցու ոչ անդամ իր ընկերներն իր կողքին լինեին: Այսպիսով, նրանց ընտանիքը որոշեց Ալիսոնի մկրտության համար հրավիրատոմսեր ուղարկել դպրոցի ընկերներին և հարևաններին: Այդ ընկերներին խնդրեցին մկրտությանը բերել Աստվածաշնչի իրենց սիրելի հատվածները:Մկրտությունից հետո Ալիսոնը նշեց այդ հատվածներն իր սուրբ գրությունների նոր հավաքածույում և լուսանցքում գրեց իր ընկերների անունները:

«Իհարկե, որպես նրա ընտանիք մենք շատ զբաղված էինք այդ օրը: Բայց մենք նաև թույլ տվեցինք նրան մկրտությունից հետո լինել իր ընկերների հետ որոշ ժամանակ և խոսել նրանց հետ լիր զգացողությունների մասին»,- Դանիելն ասաց. «Դա իսկապես հաճելի պահ էր տեսնել մեր երեխային օրինակ ծառայելիս»:

Մենք օգտագործում ենք Եպիսկոպոսի հարցազրույցը

Քիմբերլին, որի երեխաներըհասել են մկրտության տարիքին, հիշում է ութ տարեկանում իր մկրտության հարցազրույցի համար եպիսկոպոսի գրասենյակ գնալը: «Ես այնպես հուզված էի»,- ասում է Քիմբերլին:

Այժմ նա փորձում է համոզվել, որ իր երեխաները տագնապի զգացողություններչունենան: Նա և իր ամուսինը խոսում են իրենց երեխաների հետ եպիսկոպոսի հարցազրույցների մասին և տալիս նրանց հարցեր մկրտության վերաբերյալ՝ ստեղծելով հարցազրույցի նման իրավիճակ: Նմանատիպ հարցազրույցներն ավելի օգտակար են, քան երեխաներին հարցազրույցի ընթացքի հետ ծանոթացնելը, դրանք նաև խրախուսում են երեխաներին խորապես մտածել այն մասին, թե ինչ է իրենից ներկայացնում մկրտության ուխտը:

Մենք ունենք հիանալի հնարավորություն

Այս ծնողներն արագ նշում են, որ իրենք ոչ մի արտասովոր բան չեն արել՝ պատրաստելով իրենց երեխաներին մկրտության և հաստատման համար, բայց նրանցից շատերը օգտագործեցին խոսքեր ինչպես օրինակ «խորը» և «հետևողական» նկարագրելու այն դասերը, որոնք իրենք ուսուցանել են տարիների ընթացքում: «Մենք համոզվեցինք, որ մեր երեխաները հասկացան, որ սա կարևոր քայլ էր իրենց կյանքում և մեծ նշանակություն ուներ»,- ասում է Քիմբերլին,- Մենք միշտ համոզված էինք, որ այդ մենք պետք է նրանց պատրաստեինք և ոչ թե ուղղակի հուսայինք, որ Երեխաների Միության ուսուցիչները ուսուցանում էին նրանց»:

Ինչպիսի հրաշալի հնարավորություն է մեզ տրվել՝ օգնելու երեխաներին, որոնց մենք սիրում ենք, նախապատրաստվել մկրտության և հաստատման համար: Երբ մենք աղոթքով անում ենք այդ, Տերը կլինի մեզ հետ այս առաջին ուխտ կապելու փորձառությունը դարձնելով հզոր հիմք, ապագա հոգևոր աճի համար: ■

Հաջորդ երկու էջերը պատասխանում են որոշ հարցերի, որոնք ունեն երեխաները մկրտության և հաստատման մասին:

ՀՂՈՒՄ

1. Բոյդ Կ. Փաքեր, «Ուսուցանեք երեխաներին», *Լիահոնա,* մայիս 2000, 16:

Հասկանալ մկրտությունը

Մարիսա Վիդիսոն
Եկեղեցու ամսագրեր

Ո՞վ կմկրտի ինձ:

Ով էլ որ մկրտի ձեզ պետք է կրի քահանայություն, որը Աստծո անունով գործելու զորությունն է: Երբ Հիսուսը ցանկացավ մկրտվել, Նա գնաց Հովհաննես Մկրտչի մոտ, որը քահանայություն ուներ (տես Մատթեոս Գ.13):

Մարդը, որը մկրտում է ձեզ թույլտվություն կստանա ձեր եպիսկոպոսից կամ ճյուղի նախագահից:



Ես պե՞տք է ջրի տակ մտնեմ մկրտվելու համար:

Հիսուսը մկրտվեց ընկղմամբ, որը նշանակում է՝ Նա լիովին անցավ ջրի տակ և կրկին արագ դուրս եկավ (տես Մատթեոս Գ.16): Այդպես եք դուք մկրտվելու: Այս ձևով մկրտվելը հիշեցնում է մեզ, որ մենք ետևում ենք թողնում մեր հին կյանքը և սկսում նոր կյանք՝ նվիրված Աստծո և Նրա զավակների ծառայությանը:

Ի՞նչ խոստումներ եմ ես տալիս մկրտվելիս:

Երբ մկրտվում եք, դուք ուխտ եք կապում, կամ երկկողմանի խոստում Երկնային Հոր հետ: Դուք խոստանում եք Նրան, որ կանեք որոշակի բաներ, իսկ Նա խոստանում է օրհնել ձեզ: Այս ուխտը նկարագրվում է հաղորդության աղոթքներում, որոնք ասվում են ամեն կիրակի (տես ՎևՈՒ 20.77–79): Դուք խոստանում եք.

- Հիշել Հիսուս Քրիստոսին:
- Պահել Նրա պատվիրանները:
- Ձեզ վրա վերցնել Քրիստոսի անունը, որը նշանակում է ձեր կյանքում առաջին տեղում դնել Նրա աշխատանքը և անել ոչ թե աշխարհի, այլ Նրա ցանկությունը:

Երբ դուք պահում եք այս խոստումը Երկնային Հայրը խոստանում է, որ Սուրբ Հոգին կլինի ձեզ հետ, և որ ձեր մեղքերը կներվեն:

ԼՈՒՍԱՆԿԱՐ © DYNAMIC GRAPHICS, ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐԸ ԴԵՅՎԻԴ ՍԹՈՔԵՐԻ, ՄԱԹՅՈՒ ՈԵՅԵՐԻ ԵՎ ՍԱՌԱ ՋՈՆՍՈՆԻ

Ի՞նչ է Սուրբ Հոգին:

Սուրբ Հոգու պարգևը Երկնային Հոր ամենաթանկ պարգևներից մեկն է: Ջրով մկրտությունը լիակատար չի լինի, մինչև որ Մելքիսեդեկյան Քահանայություն կրող տղամարդիկ ձեզ չշնորհեն Սուրբ Հոգին ստանալու օրհնությունը (տես Հովհաննես Գ.5):

Սուրբ Հոգին Աստվածագլխի անդամ է: Նա վկայում է Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին և օգնում մեզ իմանալ՝ ինչն է ճիշտ: Նա օգնում է մեզ լինել հոգեպես ուժեղ: Նա նախազգուշացնում է մեզ վտանգից: Նա օգնում է մեզ սովորել: Սուրբ Հոգին կարող է օգնել մեզ զգալ Աստծո սերը:

Երբ դուք հաստատվում եք Եկեղեցու անդամ, Սուրբ Հոգին կարող է միշտ լինել ձեզ հետ, եթե դուք ընտրեք ճիշտը:

Ինչո՞ւ պետք է լինեմ առնվազն ութ տարեկան մկրտվելու համար:

Տերն ուսուցանում է, որ երեխաները չպետք է մկրտվեն մինչև նրանք բավականաչափ մեծ չլինեն հասկանալու համար ճշտի և սխալի միջև տարբերությունը, որը սուրբ գրություններն ասում են՝ ութ տարեկանն է (տես Մորոնի 8.11–12, ՎևՈՒ 29.46–47, 68.27):

Երեց Ջաիրո Մազագարդի
Յոթանասունից

Մղում դեպի Տաճարներ

Բազմաթիվ լավ մարդկանց համար տաճարը ոգեշնչում է անմիջապես սիրտ ներթափանցող զգացումներ:

Ախքան իմ կանչվելը որպես Յոթանասունի Երկրորդ Քվորումի անդամ, ես և կինս մի քանի տարի անցկացրեցինք ծառայելով Կամպինաս և Սան Պաուլո Բրազիլիայի Տաճարներում: Երկու տաճարներում էլ ես հաճախ էի զարմանում, որ տաճարի մոտով անցնող մարդիկ այնպես էին գրավվում տաճարով, որ կանգ էին առնում, մտնում և հետաքրքրվում դրանով:

Երբ նրանք մտնում էին, մենք տեղեկացնում էինք նրանց, որ նրանք չէին կարող առաջ գնալ առանց համապատասխան նախապատրաստության: Ապա մենք բացատրում էինք տաճարի նպատակը, կիսվում որոշ հիմնական վարդապետություններով և հրավիրում նրանց հանդիպել միսիոներների հետ: Բազմաթիվ լավ մարդկանց համար տաճարն ինքնին վիթխարի միսիոներ է, որովհետև այն ոգեշնչում է անմիջապես սիրտ ներթափանցող զգացումներ:

Կինս՝ Էլիզաբեթը և ես գիտենք այդպիսի զգացումների ուժը մեր սեփական փորձից: Մոտ 40 տարի առաջ մի լավ ընկեր և գործընկեր, Եկեղեցու անդամ, սկսեց ծանոթացնել մեզ ավետարանին՝ սովորական զրույցների ընթացքում: Մի քանի առիթներով նա ուղարկեց միսիոներներին այցելելու մեզ: Մենք հավանում էինք միսիոներներին և համաձայնվեցինք անցնել զրույցները, բայց իրականում հետաքրքրված չէինք նրանով, ինչ նրանք ուսուցանում էին:

Դա փոխվեց 1978 թ. հոկտեմբերին, երբ իմ գործընկերը հրավիրեց մի քանի ընկերների, այդ թվում նաև մեզ, Սան Պաուլո Բրազիլիա Տաճարիբաց դռների օրվան: Նա վարձել էր մի քանի ավտոբուսներ իր հաշվին, որպեսզի իր ընկերները կարողանային միանալ իրեն տաճարում, որը 50 մղոն (80կմ) հեռու էր:

Երբ Էլիզաբեթը մտավ մկրտարան, նա զգաց մի բան, որը երբեք չէր զգացել նախկինում, մի բան, որը նա հետագայում ճանաչեց որպես Սուրբ Հոգի: Այդ զգացումը մեծ ուրախություն էր նրա սրտում: Նա այդ պահին գիտեր, որ Եկեղեցին ճշմարիտ էր, և որ դա այն Եկեղեցին էր, որին նա ուզում էր միանալ:

Նմանատիպ մի զգացում եկավ ինձ բաց դռների օրվա վերջում, երբ մեզ ուղեկցում էին դեպի կնքման սենյակ և ուսուցանում հավերժական ընտանիքների վարդապետությունը: Այդ վարդապետությունը հուզեց ինձ: Ես հաջողակ էի իմ մասնագիտությունում, բայց երկար ժամանակ դատարկություն էի զգում հոգումս: Ես չգիտեի, թե ինչը կարող էր լցնել այդ դատարկությունը, բայց հասկանում էի, որ դա ինչ-որ ձևով կապված էր ընտանիքի հետ: Այնտեղ՝ կնքման սենյակում, ամեն ինչ սկսեց ընկնել իր տեղը իմ մտքում և իմ սրտում:

Մի քանի օրվա ընթացքում միսիոներները նորից կապվեցին մեզ հետ: Այս անգամ մենք շատ հետաքրքրված էինք նրանց ուղերձով:

Երեցները խրախուսեցին մեզ ջերմեռանդ աղոթել ճշմարտության վերաբերյալ: Ես որոշեցի, որ դա միակ ուղին էր, որով ես *կարող էի* աղոթել: Ես գիտեի, որ չէի կարող պարտավորություն վերցնել միանալու Եկեղեցուն առանց իսկական վկայություն ունենալու: Ես դժվարանում էի Երկնային Հորը մոտենալ և Նրանից հաստատում խնդրել, բայց միևնույն ժամանակ համոզված էի, որ Նա կպատասխաներ ինձ: Ես կիսվեցի նրա հետ սրտիս նվիրական ցանկություններով և խնդրեցի Նրան պատասխան տալ, որը ինձ կհամոզեր, որ Եկեղեցուն միանալը ճիշտ ուղին էր:

Հաջորդ շաբաթ Կիրակնօրյա Դպրոցի ժամանակ մեր ընկերը, որը մեզ տաճար էր հրավիրել բաց դռների օրը, նստած էր իմ ետևում: Նա կռացավ դեպի ինձ և սկսեց խոսել ինձ հետ: Խոսքերը, որոնք նա ասաց, ճշգրտորեն պատասխանեցին ինչի համար որ ես աղոթել էի իմանալու համար: Ես կասկած չունեի, որ Երկնային Հայրը խոսում էր ինձ հետ նրա միջոցով: Այդ ժամանակ ես մռայլ, կարծրացած մարդ էի, բայց սիտս հալվեց, և ես սկսեցի արտասվել: Երբ ընկերս վերջացրեց, նա ինձ ու կնոջս առաջարկեց մկրտվել: Մենք համաձայնեցինք:

1978թ. հոկտեմբերի 31- ին մոտ մեկ ամսից քիչ Սան Պաուլոյի Տաճարում մեր փորձառությունից հետո, մենք մկրտվեցինք և հաստատվեցինք: Հաջորդ օրը մենք մասնակցեցինք Բրազիլիայի Սան Պաուլոյի Տաճարի նվիրագործման երկրորդ նիստին: Մեկ տարի անց մենք վերադարձանք տաճար մեր երկու որդիների հետ՝ կնքվելու որպես ընտանիք: Բոլոր երեք առիթներն էլ գեղեցիկ, հիշարժան փորձառություններ էին: Տարիների ընթացքում մենք շարունակել ենք հարատև դարձնել այդ զգացումները կանոնավոր տաճարային երկրպագությամբ:

Մեր մկրտությունից քսանութ տարի անց ես և կինս կրկին կանգնեցինք Սան Պաուլո Բրազիլիայի տաճարում: Այս անգամ ես կանչվել էի որպես տաճարի նախագահ: Մեզ համար շատ հուզումնալի փորձառություն էր քայլել Տիրոջ տան դահլիճներով և կրկին զգալ նուրբ զգացումները, որոնք խթան էին հանդիսացել մեր դարձի համար:

Տաճարը շարունակում է իմ կնոջը և ինձ մեծ երջանկություն բերել: Երբ մենք տեսնում ենք տաճար մտնող որևէ երիտասարդ զույգի, որոնք եկել են կնքվելու որպես հավերժական ընտանիք, մենք մեծ հույս ենք զգում:

Ողջ աշխարհում շատ մարդիկ պատրաստ են լսելու ավետարանի ուղերձը: Նրանք ծարավ են զգում, ինչպես ես էի զգում ավելի քան 30 տարի առաջ: Տաճարը և նրա արարողությունները բավականաչափ ուժեղ են այդ ծարավը հագեցնելու և նրանց դատարկությունը լցնելու համար: ■

ՈՒՍՍԼԱԿԱՆ. ԼՈՐԵՆԻ ՖՈՐԵՍՏԻ

ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ ԷՐ ՊԱՏԱՀԵԼ ԻՄ ԻՆՔՆԱԹԻՌԻ ՀԵՏ

Մի առավոտ, երբ ուղևորներով լի իմ ինքնաթիռը վարում էի դեպի վազքուղին, ես մի զգացում ունեցա, որ ինչ-որ բան այն չէր օդանավի ղեկավարման համակարգի հետ: Իմ հոգևոր տպավորությունը հաստատելու համար, ես դուրս եկա վազքուղուց և կատարեցի մի քանի 360 աստիճանի շրջադարձեր: Կարծես ամեն ինչ կարգին էր:

Ես երկընտրանքի մեջ էի. «Ի՞նչ պետք է անեի գետնից կտրվեի և ուևորներին հասցնեի իրենց նպատակակետին ճիշտ ժամանակին, թե վերադառնայի մուտքի մոտ»: Գիտեի, որ վերադառնալը կստեղծեր երկար ուշացում: Վազքուղիները ձգվում են մեկ ուղղությամբ, ես ստիպված պետք է սպասեի, որպեսզի թռիչքների ղեկավարման կենտրոնում երթևեկության հոսքի մեջ ինձ համար տարածք տրամադրեին: Ապա մենք պետք է սպասեինք, որպեսզի վերանորոգման անձնակազմը ստուգեր ինքնաթիռը: Ուշացումները կարող էին խնդիրներ առաջացնել և ավիագծում, և ուղևորների համար՝ ոմանց դիմավորելու էին, ոմանք էլ միացնող թռիչքներ ունեին: Ես նաև մտահոգվում էի, թե տեխսպասարկման բաժինն ինչպես կարձագանքեր ինքնաթիռի խնդիրների հետ կապված իմ հաշվետվությանը, երբ ես ոչ մի փաստ չունեի, բացի ուժեղ զգացումից:

Որպես օդանավի կապիտան ես պատասխանատու էի մեր ապահովության համար, այսպիսով ես որոշեցի հետևել իմ տպավորությանը և վերադառնալ:

Երբ մենք հասանք մուտքին ես մեխանիկին ասացի, որ ինքաթիռը սարքին չէր, միևնույն ժամանակ չկարողանալով ասել, որն էր բուն խնդիրը: Նա չէր հավատում, որ խնդիր կար:

«Դա հավանաբար ուղղակի թաց վազքուղին էր»,- ասաց նա,- Դուք երևի սահել եք ասֆալտի վրայով»: Այնուամենայնիվ, նա համաձայնվեց ստուգել ինքնաթիռի դիմացի անվի աշխատանքը: Այն ստուգելուց հետո, նա խնդրեց ինձ ուղևորներին իջեցնել ինքնաթիռից, որպեսզի կարողանար օդանավը վարելու ընթացքում ստուգում կատարել:

Երբ նա վերադարձավ 30 րոպե հետո, շատ մտահոգված էր: Ստուգարքային վարման ընթացքում նա լսել էր ընդհատումներով կրճատացող ձայն: Մուտքի մոտ վերադառնալու համար, երբ փորձել էր արգելակել, նա կորցրել էր ինքնաթիռի վերահսկողությունը և գրեթե դուրս եկել վազքուղուց:

Մանրամասն ստուգումը ցույց էր տվել, որ արգելակները պատշաճ կերպով չէին վերանորոգվել նախորդ երեկո: Թռիչքի ավարտին ինքնթիռով վայրէջք կատարելիս արգելակները չէին գործի, և ես կկորցնեի ինքնաթիռի վերահսկողությունը:

Թռիչքի համար ինձ մեկ ուրիշ ինքնաթիռ տրամադրեցին, և ես երեք ժամ ուշացումով իմ ուղևորներին ապահով տեղ հասցրեցի:

Ես ուրախ եմ, որ լսեցի Հոգու հուշումներին: Ես գիտեմ, որ Հոգին կուղղորդի մեզ, եթե մենք որոնենք Տիրոջ առաջնորդությունը և լսենք հուշումներին, որոնք գալիս են: ■

Քրեգ Վիլլի, Յուտա, ԱՄՆ

Ես նաև մտահոգվում էի, թե տեխսպասարկման բաժինն ինչպես կարձագանքեր ինքնաթիռի խնդիրների հետ կապված իմ հաշվետվությանը, երբ ես ոչ մի փաստ չունեի, բացի ուժեղ զգացումից:

ՆԱՐԱՔԱՐԴՈՒՄՆԵՐԸ՝ ՋՈՋԵՖ ՕԼՍԵՆԻ

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ՁԱՅՆԵՐԸ

Մի անգամ ես կարդում էի Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ.Սքոթի գերագույն համաժողովի ելույթը: Չնայած ես լսել էի և կարդացել այդ ելույթը նախկինում, մի արտահայտություն գրավեց իմ ուշադրությունը և մնաց իմ մտքում:

Մի քանի ժամ անց որդիս, ով ապրում էր մի բնակարանում իր ընկերների հետ, մեզ այցելության եկավ: Նա ծառայել էր լիաժամկետ միսիա և հաճախել մի քանի կիսամյակը քոլեջում: Նա համոզված չէր, թե կրթության ինչ բնագավառ պետք է ընտրեր և ինչ կարիերայի ուղու հետամուտ լիներ: Քանի որ նա հիասթափված էր և զգում էր, որ համալսարանն այժմ ժամանակի և գումարի վատնում էր, նա հետաձգեց իր ուսումը և սկսեց լրիվ օրաժամով աշխատել:

Նա ասաց ինձ, որ իր ընկերներից մեկն առաջարկել է, որ գնան Բահամյան կամ Կարիբյան կղզիներ, աշխատանք գտնեն և մի քանի ամիս զվարճանան: Որդիս ոգևորված էր այդ հեռանկարից: Ես հեշտորեն տեսա, թե որքան գայթակղիչ կարող էր լինել այդպիսի անհոգ փորձառությունը մի երիտասարդ տղամարդու համար:

Հենց այդ պահին Երեց Սքոթի տպավորիչ ուղերձը միտքս եկավ: Ես վերցրեցի *Ensign* ամսագիրը և կարդացի հետևյալը որդուս համար. «Դուք այստեղ եք երկրի վրա աստվածային նպատակով: Դա անվերջ զվարճանալու կամ անընդհատ լիակատար հաճույքի հետամուտ լինելու համար չէ: Դուք այստեղ եք, որպեսզի փորձվեք և ապացուցեք, որ կարող եք ստանալ հավելյալ օրհնություններ, որոնք Աստված ունի ձեզ համար: Պահանջվում է համբերատարության զսպող ազդեցությունը» (“Finding Joy in Life,” *Ensign,* May 1996, 25):

Առանց խոսքի որդիս վերցրեց ամսագիրը, գնաց մի կողմ և կարդաց ամբողջ ելույթը: Հետագայում ասաց, որ չի ձեռնարկի կղզիներ գնալու իր արկածը:

Ժամանակի ընթացքում նա ընդունվեց ոստիկանական ակադեմիա, մի ուղի, որը նրան առաջնորդեց հանդիպելու իր ապագա կնոջը: Նրանք ամուսնացան Մեսա Արիզոնա Տաճարում և այսօր մեծացնում են երեք հիանալի երեխաներ: 2010թ. որդիս ավարտեց իր բակալավրի աստիճանը և իսկապես «ուրախություն է գտնում կյանքում»:

Որդուս առաջարկած արկածը գուցե հաճելի փորձառություն լիներ, սակայն մյուս կողմից այն կարող էր լինել հոգևոր առումով վտանգավոր: Ամեն անգամ այդ դեպքը հիշելիս Հոգին շարժում է սիրտս:

Ես շնորհակալ եմ մարգարեների խոսքերի համար և որ ինձ հուշվեց վերհիշել ելույթը, որն օգնեց ինձ խորհուրդ տալ: Ես շնորհակալ եմ նաև, որ որդիս լսեց Տիրոջ ուղերձը և թույլ տվեց, որ Հոգին ազդի իր վրա: Ես գիտեմ, որ շատ օրհնություններ և բարեգութ ողորմածություններ գալիս են, երբ մենք լսում ենք և հետևում Փրկչի և Նրա ծառաների ուսմունքներին: ■

Կարեն Ռոքվուդ, Այդահո, ԱՄՆ

Երբ որդիս ասաց ինձ, որ իր ընկերներից մեկն առաջարկել է գնալ Բահամյան կամ Կարիբյան կղզիներ՝ մի քանի ամիս զվարճանալու, Երեց Սքոթի ուղերձը միտքս եկավ:

ՀԵՌԱԽՈՍՆ ԱՆՋԱՏՎԵՑ

1997 թվականին, երբ ապրում էինք Ռուսաստանի Դոնի Ռոստով քաղաքում, ամուսինս և ես մկրտվեցինք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում:

Երբ ես ուսումնասիրում էի Եկեղեցու վարդապետությունները, իմ հարցերից շատերը պատասխանվեցին: Հետաքրքիր էր իմանալ փրկության ծրագրի մասին, ներառյալ մկրտության կատարումը մահացածների համար: Ինձ զարմացրեց այն փաստը, որ մենք կարող ենք մկրտվել մեր մահացած նախնիների համար:

Մեր մկրտությունից մեկ տարի անց միսիայի նախագահը հրավիրեց մեզ պատրաստվել տաճար գնալուն: Որպես մեր պատրաստության մաս, մենք սկսեցինք կատարել ընտանեկան պատմության հետազոտություն: Մի օր, երբ մտածում էի այդ աշխատանքը կատարելու մասին, հեռախոսը զանգեց: Զանգողը սկեսուրս էր: Ես խնդրեցի, որպեսզի նա ուղարկեր ամուսնուս կողմի մահացած նախնիների անունները: Նա զարմացավ և ասաց ինձ, որ մահացածների համար մկրտությունը Քրիստոսի վարդապետությունը չէր, այլ մի բան, որ Մորմոններն էին մոգոնել: Ես չիմացա ինչպես պատասխանել նրան, քանի որ ծանոթ չէի այս վարդապետության վերաբերյալ սուրբ գրքերի հատվածներին:

Երբ մտածում էի ինչպես պատասխանել, հեռախոսն անջատվեց: Մի րոպե ես չհասկացա, թե ինչ պատահեց, ապա դրեցի հեռախոսափողը և գնացի իմ ննջարան: Ձեռքս վերցրեցի Նոր Կտակարանը, ծնկի իջա աղոթելու և խնդրեցի Երկնային Հորը ցույց տալ ինձ, թե որտեղ կարող էի գտնել պատասխանը:

Աղոթքից հետո բացեցի Աստվածաշունչը: Զգացի կարծես ինչ որ մեկն ասաց, որ կարդայի 29-րդ հատվածը իմ բացած հենց նույն էջի վրա: Դա Ա Կորնթացիս 15-րդ գլուխն էր, որը պատմում է մահացածների համար մկրտության վարդապետության մասին:

Ես հուզվեցի և զարմացա, որ հենց նույն պահին Երկնային Հայրը պատասխանեց իմ աղոթքին: Դա հրաշալի զգացողություն էր:

Ես խորասուզված մտածում էի այդ փորձառության մասին, երբ հանկարծ հեռախոսը նորից զանգեց: Սկեսուրս էր, նա հարցրեց, թե ինչու հեռախոսն անջատվեց: Ես ասացի, որ չգիտեի պատճառը, ապա խնդրեցի նրան, որ բացեր իր Աստվածաշունչը և կարդար Ա Կորնթացիս ԺԵ.29 հատվածը:

Մի քանի օր անց մահացած նախնիների մի ցուցակ սեղանիս վրա էր: Սկեսուրս կարդացել էր սուրբ գրությունը և այժմ հավատում էր, որ Փրկիչը Պողոս Առաքյալի միջոցով ուսուցանել էր մահացածների համար մկրտությունը:

Աստված մեծ օրհնություններ է խոստացել նրանց, ովքեր անում են այդ փրկագնման աշխատանքը: Ես գիտեմ, որ դա ճիշտ է: ■

Սեդա Մելիքսեթյան, Հայաստան

Սկեսուրս ասաց ինձ, որ մահացածների համար մկրտությունը Քրիստոսի վարդապետությունը չէ, այլ մի բան, որ Մորմոններն են հնարել:

ՈՐՏԵՂԻ՞Ց ԿԱՐՈՂ ԵՄ ՍՏԱՆԱԼ ԱՅՍՊԻՍԻ ԱՄՍԱԳԻՐ

Երբ ընտանիքիս հետ ճանապարհորդում էի ԱՄՆ-ի Նեվադայից դեպի Ալյասկա, ես զրույցի բռնվեցի բարձրահասակ, գրավիչ, սիրալիր մի տիկնոջ հետ միջանցքում:

Նա հարցրեց, ուր եմ գնում և ես ասացի որ մենք գնում էինք Ջյունո, Ալյասկա, այցելելու մեր որդուն և նրա ընտանիքին: Նա ասաց, որ Լաս Վեգասից էր: Ապա հուզվելով, նա ավելացրեց, որ գնում էր Ջյունո՝ այցելելու իր ամուսնու բարեկամներին ամուսնու հիշատակին տրվող արարողությանը մասնակցելու, որի հետ նա ամուսնացած էր եղել 20 տարի: Նա վերջերս էր մահացել քաղցկեղից:

Ես նայեցի միջանցքի երկայնքով և մտքումս մտածեցի, թե որքան բախտավոր էի, որ գիտեի փրկության ծրագիրը և տաճարային աշխատող էի Լաս Վեգաս Նևադա Տաճարում: Ես մտածեցի, թե ինչ կարող էի անել այդ կնոջ տրամադրությունը բարձրացնելու համար:

Հանկարծ զանգի նման հստակ ես հիշեցի Մարգարե Ջոզեֆ Սմիթի խոսքերը, որը բաժանել էի Սփոփող Միությունում: Սփոփող Միությունը կազմակերպելիս նա նշել էր, որ քույրերը «կսլանան անծանոթին սփոփելու համար, նրանք յուղ և գինի կլցնեն թշվառների վիրավոր սրտերին, կչորացնեն որբի արցունքները և կուրախացնեն այրու սիրտը» (*Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 452):

Ես նայեցի միջանցքի երկայնքով մեկ անգամ ևս: Ես տեսա վշտահար անծանոթի, վիրավորված սրտով այրուն: Ես հիշեցի, որ այդ օրը կարդացել էի 2011թ. *Ensign* ամսագիրը: Այն պարունակում էր մի քանի ոգևորող հոդվածներ, որոնք մտածեցի նրան որոշ չափով կքաջալերեին և կմխիթարեին:

Ես մտածում էի՝ ի՞նչ կարող էի անել այդ կնոջ ոգին բարձրացնելու համար, որի ամուսինը վերջերս էր մահացել:

Ես հավաքեցի քաջությունս, բացեցի ամսագիրը մի հոդվածի վրա և խնդրեցի, որ կարդար այն: Ես հետևում էի նրան մոտիկից և զարմացա, որ նա կարդաց յուրաքանչյուր տող ուշադրությամբ: Երբ նա ավարտեց, նա կարդաց մեկ ուրիշ հոդված:

Ակնհայտորեն իր կարդացածից ինչ- որ բան հուզել էր նրա սիրտը: Նա ամսագիրը պինդ կրծքին էր սեղմել և ապա սրբեց իր աչքի արտասուքը:

«Որտեղի՞ց կարող եմ վերցնել այսպիսի ամսագիր»,- հարցրեց նա: Ես ասացի, որ կարող էր պահել այն իրեն: Ապա նա մի քիչ էլ կարդաց:

Երբ մենք հասանք Ջյունո, նա սեղմեց ձեռքս, նայեց ուղիղ աչքերիս մեջ և ասաց. «Շնորհակալություն»:

Ես մեծ դաս սովորեցի այդ փորձառությունից: Մենք շրջապատված ենք անծանոթներով, ովքեր վիրավոր են սրտից, ովքեր քաջալերող բարի խոսքի կարիք ունեն և ովքեր կարիք ունեն իմանալու այն, ինչ մենք որպես Վերջին Օրերի Սրբեր գիտենք: ■

Շարոն Ռադեր, Նեվադա, ԱՄՆ

Երբեմն դուք պետք է հրաժարվեք մի լավ բանից մի ավելի լավ բան անելու համար:

ԸՆՏՐԵԼ ավելի լավ ՄԱՍԸ

Մեթյու Դ. Ֆլիթոն
Եկեղեցու ամսագրեր

Մի օր Զոլտան Սցուկսը Սեգեդից, Հունգարիա, զարմացրեց մակույկավարության իր մարզչին՝ ասելով նրան, որ չէր գնա Գերմանիա մրցումների:

«Դա հենց այն օրն էր, երբ ես մկրտվելու էի, այսպիսով ես ասացի ոչ»,- ասաց Զոլտանը:

17 տարեկանում Զոլտանը հաղթող էր ճանաչվել մակույկավարության շատ մրցումներում: Այն սիրված սպորտաձև է Հունգարիայում և Զոլտանը հիանալի էր, բավականաչափ հիանալի, և պրոֆեսիոնալ դառնալը իրական հնարավորություն էր: Մեկ մրցույթ բաց թողելով Զոլտանը շուտով ընդհանրապես թողնելու էր մակույկավարությունը: Նա ավելի լավ բան ուներ անելու:

Մակույկավարությունը հիանալի էր Զոլտանի համար: Տարիների ընթացքում մարզիչի հետ պարապելով, նա սովորել էր ինքնատիրապետում, հնազանդություն և տքնաջան աշխատանք: Զոլտանը նաև սովորել էր խուսափել նյութերից և սովորույթներից, որը կվնասեր նրա պարապմունքներին: Դա հեշտ կյանք չէր, միայնակ էր, իսկ պրոֆեսիոնալ դառնալու համար ավելի շատ ժամանակ պետք է տրամադրեր: Պրոֆեսիոնալները մարզվում են օրը 12 ժամ և պետք է մրցեին կիրակի օրերին:

«Մակույկավարությունը խլում էր իմ ժամանակի մեծ մասը»,– ասում է Զոլտանը,– որին ես մոլեռանդնվիրված էի: Դրա պատճառով ես իմ կյանքից դուրս էի թողել շատ բաներ»:

Այդ պատճառով Զոլտանը որոշեց, որ չէր կարող նվիրել իրեն և ավետարանին և մակույկավարությանը: 2004թ. նա ասաց իր մարզչին, որ այլևս մակուկավարությամբ չի զբաղվելու:

Այդ տարվա սկզբին միսիոներները սկսեցին ուսուցանել Զոլտանի մայրիկին: Նա չէր մասնակցում դասերին: Նա տհաճությամբ ընդունեց մկրտությանը ներկա լինելու իր մոր հրավերը: Բայց նրա սիրտը հուզվեց նրանից, ինչ նա զգաց, երբ մտավ եկեղեցու շենքը: Զոլտանը համաձայնվեց հանդիպել միսիոներների հետ, մասնավորապես այն պատճառով, որպեսզի կարողանար նրանց հետ միասին լինել:

«Միսիոներները հետաքրքիր էին ինձ համար, որովհետև նրանք նորմալ մարդիկ էին, բայց ապրում էին ավելի բարձր չափանիշներով»,– ասում է նա:

Քանի որ Զոլտանն արդեն ապրում էր ավելի բարձր չափանիշով, որպես մակույկավար, նա պատրաստակամորեն ընդունեց ավետարանի ուսմունքները որպես արժեքավոր: Նա երկու ամիս անց մկրտվեց:

Սկզբում նա մտածում էր, որ կարող էր շարունակել մակույկավարությունը, բայց կիրակի օրերին մրցումների չգնալ: Բայց, քանի որ նա այնպիսի մարդ էր, ով նվիրվելով որևէ գործի, կամենում է այն լավ անել, նա ընդհանրապես որոշեց հրաժարվել մակույկավարությունից:

Նա մի անգամ իր մկրտությունից հետո փորձեց որպես հոբբի մակույկ վարել: Այդ ժամանակ քանի որ նա չէր ցանկանում մրցել, նրա մարզիչը խնդրեց նրան օգնել իրեն ուրիշներին ուսուցանելու և ուղևորություններ կազմակերպելու գործում: Բայց նա չկամեցավ որևէ պարտավորություն ստանձնել մակույկավարության մեջ կամ որևէ այլ գործում, որը կարող էր խանգարել իր աշակերտ լինելուն:

Այսպիսով, Զոլտանը կախեց իր թիակը և նվիրվեց Եկեղեցական ծառայությանը՝ որոշելով նմանվել Նախագահ Հովարդ Վ. Հանթերին (1907–95), երբ նա ամուսնացավ: Նախագահ Հանթերը կայացած երաժիշտ էր, որը նվագում էր տասնյակ գործիքների վրա: Երեկոյան նա աշխատում էր նվագախմբում, բայց այն մարդկանց կենսակերպը, ում հետ նա շփվում էր, հակասում էին ավետարանի սկզբունքներին: Այսպիսով, Նախագահ Հանթերը իր գործիքները մի կողմ դրեց և միայն հանում էր դրանք ժամանակ առ ժամանակ ընտանիքով միասին երգելու համար:[1]

Զոլտանը կարոտում է մակույկավարությունը, բայց նա հասկանում

ՎԵՐՈՒՄ՝ ԼՈՒՍԱՆԿԱՐ © THINKSTOCK, ՆԵՐՔԵՎՈՒՄ՝ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ԱՅԱՍԿ, ՕԱՍՈՒՆ:

Զոլտան Սցուկսը Սեգեդից, Հունգարիա, հրաժարվեց մակույկավարությունից՝ ավետարանին ավելի շատ ժամանակ նվիրելու համար:

է, որ մակույկավարության հանդեպ իր սերն այնքան ուժեղ էր, որ զուցե հաղթեր Տիրոջ հանդեպ իր սիրուն, եթե նա խիստ մոտիկ մնար սպորտին:

Նույն սկզբունքը կարող է վերաբերվել ամեն գործունեության, որը մեզ հեռացնում է նրանից, ինչ Աստված է ուզում, որ մենք լինենք: Մեզանից յուրաքանչյուրի համար զուցե ավելի լավ լինի կյանքում որոշ բաներից զուրկ մնալ, եթե նույնիսկ դրանք լավ բաներ են, քան վտանգի ենթարկել մեր հավերժական կյանքը դրանք ունենալով:

«Եկեղեցին դարձավ իմ կյանքը, – ասում է Զոլտանը, –Իմանալով, որ մակույկավարությունը չի կարող լինել ապրելակերպ, եթե ես ցանկանում էի ակտիվ լինել և որ դա ուղղակի կարող էր հոբբի լինել, հեշտ դարձավ հրաժարվելը: Փոխարենը, ես ցանկանում էի կենտրոնանալ Երկնային Հոր վրա»:

Զոլտանը սկսեց ուսումնասիրել ավետարանը նույն եռանդով, ինչ նա գործադրում է ցանկացած զբաղմունքի համար: Նա նպատակ դրեց ծառայել միսիայում: Նա ցանկանում էր մնալ իր երկրում և ուսուցանել ուրիշներին:

Նա ծառայում է Հունգարիայում և այժմ աշխատում է որպես ավագ դպրոցի անգլերենի ուսուցիչ: Նա շարունակում է դնել իր առաջնահերթություններն ավետարանի վրա: «Կան բաներ, որոնցից մենք պետք է հրաժարվենք, որովհետև դրանք խանգարում են Աստծո ուղուն,– ասում է նա,– Հեշտ է հրաժարվել վատ բաներից, երբ իմանում ենք, որ պետք է դա անենք: Հաճախ մենք չենք հասկանում, երբ պետք է հրաժարվենք մի ինչ-որ լավ բանից մի ավելի լավ բանի համար»: ■

ՀՂՈՒՄ

1. See Eleanor Knowles, *Howard W. Hunter* (1994), 81.

«Ինչպե՞ս ես բացատրեմ իմ ընկերոջը, թե ինչու է վատ մաքրաբարոյության օրենքը խախտելը»:

Երկնային Հայրը ցանկանում է, որ մենք երջանիկ լինենք և արժանի լինենք Իր Հոգուն, այսպիսով Նա տալիս է մեզ պատվիրաններ՝ օգնելու մեզ պահել մեր մտքերը, խոսքերը և գործողությունները պատշաճության սահմաններում: Մաքրաբարոյության օրենքն օգնում է պահել ծննդաստեղծ զորությունը ամուսնության սահմանների ներսում: Պատճառներից մեկը, որ Նա պատվիրում է ծննդաստեղծ զորությունն արտահայտվի ամուսնու և կնոջ միջև, այն է, որ «երեխաները կոչված են ծնվելու ամուսնության կապերի մեջ»:[1]

Դուք կարող եք տալ *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկի մի օրինակ ձեր ընկերոջը: Այն տալիս է մի քանի պատճառներ, թե ինչու պետք է պահել մաքրաբարոյության օրենքը: «Երբ դուք սեռապես մաքուր եք, դուք պատրաստվում եք կապել և պահել սրբազան ուխտեր տաճարում: Դուք պատրաստվում եք կառուցել ամուր ամուսնություն և աշխարհ բերել երեխաներ որպես հավերժական և սիրող ընտանիքի մաս: Դուք պաշտպանում եք ձեզ հոգևոր և հուզական վնասից, որոնք գալիս են ամուսնությունից դուրս սեռական ինտիմ հարաբերություններից: Դուք նաև պաշտպանում եք ձեզ վնասակար հիվանդություններից: Սեռապես մաքուր մնալն օգնում է ձեզ լինել վստահ, իսկապես երջանիկ և բարելավում է լավ ընտրություններ կատարելու ձեր ունակությունն այժմ և ապագայում»:[2]

Տաճարը

Մեր Երկնային Հայրը աստվածային նպատակ ունի մեզանից բոլորի համար և այդ նպատակը կարող է իրականանալ տաճարում: Մենք պետք է արժանի լինենք մտնելու տաճար, որպեսզի մեր ընտանիքները կարողանան կնքվել հավերժ: Մենք կապրենք մեր Երկնային Հոր հետ նորից և ամենակարևորը մենք կունենանք երբեք անսպառ ուրախություն, որն անարժանները չեն կարող ունենալ:

Ալոֆա Մ., 18 տարեկան, Սամոա

Ամուսնություն և ընտանիք

Մեզ խրախուսվում է սեռապես մաքուր լինել, որպեսզի կարողանանք արժանի լինել մտնելու տաճար և պահելու սրբազան ուխտերը: Եթե հետևենք մաքրաբարոյության օրենքին, մենք կկարողանանք կառուցել ուժեղ ամուսնություն և ընտանիք ապագայում: Սատանան միշտ պատրաստ է մեզ գայթակղելու, բայց աղոթքի, սուրբ գրությունների և լավ ընկերների միջոցով, մենք կարող ենք հաղթահարել այն:

Ռեսթի Մ., 16 տարեկան, Ֆիլիպիններ

Բացասական հետևանքներ

Կան շատ բացասական հետևանքներ մաքրաբարոյության օրենքը խախտելիս, բայց դրանցից ոչ բոլորի մասին եք դուք սովորում առողջապահության դասընթացում: Մաքրաբարոյության օրենքը խախտելը կարող է Հոգին դուրս մղել ձեր կյանքից, ցավ պատճառել նրանց, ովքեր ձեր կողքին են և ստիպել ձեզ վատ զգալ ձեր վերաբերյալ: Ես առաջարկում եմ դիտել Մորմոնական Ուղերձներ տեսաֆիլմը, որը կոչվում է «Մաքրաբարոյություն՝ որո՞նք են սահմանները» [youth.lds.org կայքում անգլերեն, պորտուգալերեն և իսպաներեն լեզուներով]:

Մեթյու Թ., 17 տարեկան, Յուտա, ԱՄՆ

Սրբազան պարգև

Եթե ծննդաստեղծ պարգևին թեթևամտորեն են մոտենում, Աստծուց տրված այս թանկարժեք պարգևին կվերաբերվեն որպես սովորական մի բանի: Պարգև տալը չի զգացվում որպես պարգևատրող մի բան, եթե մարդը, որին դուք տալիս եք այն, չի մտածում, որ այն առանձնահատուկ է: Մարդ միշտ պետք է վերաբերվի ծննդաստեղծությանը սրբորեն, քանզի մենք բոլորս Աստծո տաճարներ ենք և պետք է մաքուր և անբիծ մնանք, ինչպես տաճարը:

Զարոն Զ., 15 տարեկան, Այդահո, ԱՄՆ

Պատասխանները Եկեղեցու վարդապետության մասին պաշտոնական հայտարարություններ չեն, այլ միտված են օգնելու և խորհուրդ տալու:

Մաքրություն և հարգանք

Հետևելով մաքրաբարոյության օրենքին մենք մնում ենք մաքուր Աստծո աչքում, ք հարգում ենք ինքներս մեզ և օգնում ենք ուրիշներին ևս մեզ հարգել: Եթե մենք հնազանդվում ենք մաքրաբարոյության օրենքին, ցույց ենք տալիս, որ մենք Աստծո զավակներն ենք և պահում ենք բարձր չափանիշներ: Մենք կխուսափենք գղջումներից: Երբ մենք հնազանդվում ենք մեր Երկնային Հորը, հատկապես այս օրենքի վերաբերյալ, մեր կյանքն ավելի երջանիկ կլինի այստեղ երկրի վրա և գալիք աշխարհում:

Այյանա Գ., 19 տարեկան, Ֆիլիպիններ

Կարևոր հարցեր

Պատասխանեք ձեր ընկերոջ հարցին ուղղելով որոշ հարցեր. «Իսկ ի՞նչ կպատահեր, եթե ձեր ապագա ամուսինը հետևեր ձեզ այժմ»: Բոլոր մարդիկ, ում մասին ես լսել եմ, որ խախտել են մաքրաբարոյության օրենքը, հետո գղջացել են: «Ի՞նչ կասեք, եթե ձեր ապագա երեխան հարցնի ձեզ, թե արդյոք խախտե՞լ եք մաքրաբարոյության օրենքը»: Ձեր ընկերը պետք է իմանա, թե որքան կարևոր է մաքրաբարոյության օրենքն այժմ, նախքան որդին կամ դուստրը կտան այդ հարցը: Դուք պետք է ձեզ մաքուր և անբիծ պահեք, երջանիկ, առողջ կյանքով ապրելու համար՝ առանց սրբազան օրենքը խախտելու հանցանքի:

Ռոբին Կ., 13 տարեկան, Յուտա, ԱՄՆ

Ամուսնության մեջ

Ես կբացատրեի իմ ընկերոջը, որ մաքրաբարոյության օրենքը խախտելը վատ գաղափար է, որովհետև ծննդաստեղծ զորությունը ստեղծվել է միայն օրինական ամուսնացած զույգերի համար: Երբ խախտում ենք մաքրաբարոյության օրենքը, մենք կորցնում ենք Սուրբ Հոգին մեր կյանքում:

Ավգուստինա Ա., 15 տարեկան, Գանա

Առաքինություն և մաքրաբարոյություն

Տերը հիանում է առաքինությամբ և մաքրաբարոյությամբ և ամեն ինչ պետք է տեղի ունենա իր ուրույն ժամանակին: Մաքրաբարոյության օրենքը պատվիրան է Տիրոջից: Աղոթքը և Հոգու ընկերակցությունը կատարյալ համակցություն են՝ իմանալու համար, որ մաքրաբարո լինելն օրհնություն է:

Մելեն Ռ., 18 տարեկան, Նիկարագուա

Հոգին մեզ հետ

Մեղքից մաքուր մնալով դուք շատ ավելի երջանիկ և օրհնված կլինեք: Մեր մարմինները նման են տաճարների և Երկնային Հայրը «չի կենում անսուրբ տաճարներում»: (Ալմա 7.21): Այսպիսով, երբ մենք մաքուր ենք մնում մեղքից, Հոգին կարող է բնակվել մեզ հետ:

Մարի Անն Փ., 14 տարեկան, Արկանզաս, ԱՄՆ

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
2. *Երիտասարդներին զորացնելու համար* (գրքույկ, 2001), 35:

ՄԱՔՐԱԲԱՐՈՅՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏԵԼԸ ԼՈՒՐՋ ՎՆԱՍՆԵՐ Է ՊԱՏՃԱՌՈՒՄ

«Ամուսնության հարատև ուխտի մեջ Տերը թույլ է տալիս ամուսնուն և կնոջը սրբազան ծննդաստեղծ ուժերի արտահայտությունը իրենց ողջ գրավչության և գեղեցկության մեջ՝ այն սահմանելով, որ Ինքն է հաստատել: . . .

Սակայն, այդ ինտիմ հարաբերություններն արգելված են Տիրոջ կողմից ամուսնության հարատև պարտավորությունից դուրս, որովհետև դրանք վտանգում են Նրա նպատակները: Ամուսնության սրբազան ուխտի մեջ այդպիսի հարաբերությունները Նրա ծրագրի համաձայն են: Երբ կիրառվում են որևէ այլ ձևով, դրանք դեմ են Նրա կամքին: Դրանք առաջացնում են լուրջ զգացմունքային և հոգևոր վնաս: Չնայած մասնակիցները չեն հասկանում ինչ է կատարվում այդ պահին, նրանք կհասկանան դա հետագայում: Սեռական անբարոյականությունը ստեղծում է մի արգելապատ Սուրբ Հոգու ազդեցության դեմ»:

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ, Տասներկու Առաքյալների Քվորումից, "Making the Right Choices," *Ensign,* Nov. 1994, 38:

ՀԱՋՈՐԴ ՀԱՐՑԸ

«Ի՞նչ պետք է անեմ ես, երբ դպրոցում բարձրացվում է մի թեմա, որը դեմ է ավետարանի ուսմունքներին, ինչպես օրինակ արհեստական վիժեցումը»:

Ուղարկեք ձեր պատասխանը մինչև մայիսի 15-ը liahona@ldschurch.org հասցեով կամ է-փոստով.

Liahona, Questions & Answers 5/13
50 E. North Temple St., Rm.2420
Salt Lake City, UT 84150-0024, USA

Պատասխանները կարող են խմբագրվել չափերի կամ հստակության համար:

Հետևյալ տեղեկությունը և թույլտվությունը պետք է ներառված լինի ձեր է-փոստի կամ նամակի մեջ. (1) լրիվ անունը, (2) ծննդյան թիվը, (3) ծուխը կամ ճյուղը, (4) ցիցը կամ շրջանը, (5) ձեր գրավոր թույլտվությունը և, եթե դուք 18 տարեկանից ցածր եք, ձեր ծնողի գրավոր թույլտվությունը (է-փոստը ընդունելի է) ձեր պատասխանը և լուսանկարը տպագրելու համար:

Նախագահ
Թոմաս Ս. Մոնսոն

ԻՆՉՊԵ՞Ս ԾԱՌԱՅԵԼ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐՈՒՄ

Արդյոք երբևէ խորհել եք մարդկային հոգու արժեքի մասին: Արդյոք երբևէ մտածե՞լ եք մեզանից յուրաքանչյուրի մեջ առկա **ներուժի մասին:**

Մի անգամ ես մասնակցում էի ցցի համաժողովին, որտեղ իմ նախկին ցցի նախագահ Փոլ Ք. Չայլդը մեջբերեցՎարդապետություն և Ուխտեր 18 հատվածը և սկսեց կարդալ. «Հիշեք, **հոգիների արժեքը** մեծ է Աստծո աչքում» (հատված 10):

Ապա Նախագահ Չայլդը հարցրեց. «Ո՞րն է մարդկային հոգու արժեքը»: Նա խուսափեց պատասխանի համար խոսքը տալ մի եպիսկոպոսի, ցցի նախագահի կամ բարձրագույն խորհրդականի: Փոխարենը նա ընտրեց երեցների քվորումի նախագահին:

Հանկարծակիի եկած մարդը երկար լուռ մնաց, որը մի հավերժություն թվաց և ապա հայտարարեց. «Մարդկային հոգու արժեքը նրա **կարողությունն է դառնալ ինչպես Աստված»:**

Բոլոր ներկաները խորհեցին այդ պատասխանի մասին: Նախագահ Չայլդը շարունակեց իր ուղերձը, բայց ես շարունակեցի մտածել այդ ոգեշնչված պատասխանի մասին:

Հասնել, ուսուցանել, հուզել այն թանկարժեք հոգիներին, ում Հայրը պատրաստել է՝ Իր ուղերձի համար, վիթխարի առաջադրանք է: Հաջողությունը հազվադեպ է հեշտ լինում: Ընդհանրապես դրան նախորդում են՝ **արցունքներ, փորձություններ, վստահություն և վկայություն:**

Աստծո ծառաները սփոփանք են գտնում Վարդապետի հավաստիացումից. «Ես միշտ ձեզ հետ եմ» (Մատթեոս ԻԸ.20): Այս վիթխարի խոստումը հաստատում է ձեզ Ահարոնյան Քահանայության եղբայրներ, ովքեր կանչված եք ղեկավար պաշտոնների սարկավագների, ուսուցիչների և քահանաների քվորումներում: Այն քաջալերում է ձեզ՝ միսիա ծառայելուն նախապատրաստվելիս: Այն սփոփում է ձեզ հուսահատության այն պահերին, որոնք գալիս են բոլորին:

«Ուստի, **մի ձանձրացեք բարին գործելուց,** ասում է Տերը, քանզի դուք դնում եք հիմքը մի մեծ գործի: Եվ փոքր բաներից է առաջանում այն, ինչը մեծ է:

Ահա, Տերը պահանջում է սիրտն ու պատրաստակամ միտքը» (ՎԿՈՒ 64.33–34): **Մնայուն հավատքը, հաստատուն վստահությունը և ջերմեռանդ ցանկությունն է** միշտ բնորոշ եղել նրանց, ովքեր ծառայում են Տիրոջը իրենց ողջ սրտով:

Եթե եղբայրները, ում հասնում է իմ ձայնը, անպատրաստ են զգում, նույնիսկ անկարող պատասխանելու ծառայելու կոչմանը, զոհաբերելու, օրհնելու ուրիշների կյանքը, հիշեք ճշմարտությունը. **«Ում Աստված կանչում է, Աստված պատրաստում է»:** ■

1987թ. ապրիլի գերագույն համաժողովի ելույթից

ԻՆՉՊԵ՞Ս ԵՔ ԴՈՒՔ ԿԻՐԱՌԵԼ ՍԱ:

«Իմանալով, որ Տերը իմ կողմից է, օգնում է ինձ հիշել, թե ինչու եմ գնում միսիա՝ ծառայելու Տիրոջը և բերելու ուրիշներին դեպի մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսը: Ես գիտեմ, որ Նա ինձ չի դնի անելանելի վիճակում, երբ ես իմ միսիայում եմ»:

Դիլան Մ., Յուտա, ԱՄՆ



ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՔՈՐԻ ԲԵԼԼԻ © IRI

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ԱԼԵՔՍ ՕՐՏԻԶ, ՀԱՅԿԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒՄ ՀԱՄՈՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՀԵՅԱՇՐԻՄ ՀՈՒՅՍԱՆ, ՏՊԱՍԱԿՈՒՄԸ Է C. HARRISON CONROY CO., ՆԱՎԱՐՔԱՐՈՒՄՆԵՐԸ՝ ՍԵՌԹ ԳՈՐԴՈՆ

ԻՄ ՍԻՐԵԼԻ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԽՏԵՐ 24.8:

Այս սուրբ գրությունը ստիպում է ինձ լավ զգալ, երբ ես փորձություն եմ անցնում, որովհետև այն ասում է. «Ես քո հետ եմ, նույնիսկ մինչև քո օրերի վերջը»: Սա նշանակում է, որ եթե ես որոնեմ Նրան, Երկնային Հայրը միշտ կլինի ինձ հետ մինչև իմ կյանքի վերջը:

Ալեքս Օրտիզ, Նուեվո Կասաս Գրանդեզ, Մեքսիկա

ԽՈՐՀՈՒՐԴ ԱՐԵՔ ՏԻՐՈՋ ՀԵՏ

Երբ ես 15 տարեկան էի, դպրոցում իմ դասարանից ես հավանում էի մի աղջկա և ուզում էի ժամադրել նրան: Նա գրավիչ էր, բայց ես համոզված չէի, թե պետք է արդյոք նրան ժամադրության հրավիրեի նախքան 16 տարեկան դառնալս: Ես հիշում էի Ալմա 37.37, որն ասում է. «Խորհուրդ արա Տիրոջ հետ քո բոլոր գործերում, և նա ուղղություն ցույց կտա քեզ բարու համար»: Այսպիսով, սա այն էր, ինչ ես արեցի: Ես աղոթեցի և սպասեցի մի քանի օր Տիրոջ պատասխանին, նախքան որոշում ընդունելս:

Մի օր եկեղեցում եպիսկոպոսը կանչեց ինձ իր սենյակ և խնդրեց ինձ ելույթ ունենալ հաջորդ կիրակի: Գուշակեք, թե ինչ թեմա էր՝ «Մի ժամադրվեք մինչև առնվազն չդառնաք 16 տարեկան»: Ես զգացի, որ սա Տիրոջ պատասխանն էր ինձ և դա՝ ոչ էր: Ինչպե՞ս կարող էի ուսուցանել մի բան, որը ես չէի կիրառում:

Քանի որ ես խորհուրդ էի արել Տիրոջ հետ, ես կարողացա իմանալ Տիրոջ կամքը իմ կյանքի վերաբերյալ և նաև փախչել գայթակղությունից: Ես գիտեմ, որ եթե մենք խորհուրդ ենք անում Տիրոջ հետ, Նա կասի մեզ Իր կամքը և մենք մեծապես կօրհնվենք:

Էդուարդո Օլիվիերա, Սերա, Բրազիլիա



ՔԱՎՈՒԹՅԱՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Երբ միսիոներներն ուսուցնում էին ինձ, նրանց դասերի հիմնական թեմաները միշտ Հիսուս Քրիստոսն էր և Նրա Քավությունը: Նրանք բացատրեցին, որ Քավությունը պարգև է Հիսուս Քրիստոսից մեզանից յուրաքանչյուրին: Դա մի պարգև է, որը մենք կարող ենք օգտագործել մեր ամենօրյա կյանքում, երբ դիմակայում ենք փորձությունների կամ երբ մեղանչում ենք: Քավության զորությունը բարձրացնում, բժշկում և օգնում է մեզ վերադառնալ նեղ և անձուկ արահետ, որն առաջնորդում է դեպի հավերժական կյանք:

Երբ միսիոներները կիսվեցին դրանով, ես մի ուժեղ զգացում ունեցա, որը վկայեց ինձ, որ դա ճիշտ էր, և ես որոշեցի միանալ Եկեղեցուն:

Հետագայում ես որոշեցի ծառայել միսիա, որովհետև ես ուզում էի օգնել ուրիշներին իմանալ այս սքանչելի պարգևի մասին: Ուսուցանելով և կիսվելով Քավության մասին, ես տեսա, ինչպես են ուրիշները դառնում դեպի նոր կյանքի ուղի: Մի լիակատար փոփոխություն եկավ, ոչ միայն ուղղակի լսելով Քավության մասին, այլ նաև կիրառելով այն իմ կյանքում նույնպես:

Ես գիտեմ, որ Քավությունը իրական է: Երբ մենք հրավիրում ենք դրա ազդեցությունը մեր կյանք, ինչպիսի հանգամանքների էլ դիմակայենք, ամեն ինչի մասին հոգ կտարվի և մենք կզգանք ուրախություն:

Այորիթի Տաբուրեա, Կիրիբաթի



ԻՆՉՈ՞Ւ ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻ ԿԱՐԻՔԸ

Որոշ մարդիկ կարող է հարցնեն ինչու մենք ունենք Մորմոնի Գրքի կարիքը, երբ մենք արդեն ունենք Աստվածաշունչը: Փաստորեն Հիսուս Քրիստոսը վկայեց, որ սա պատահելու էր (տես 2 Նեփի 29.3): Կան շատ պատճառներ, թե ինչու է Մորմոնի Գիրքը կարևոր մեր օրերում (օրինակ, տես 2 Նեփի 29.7–11): Այստեղ կան ուղղակի մի քանի պատճառներ, թե ինչու է դա կարևոր:

Եվս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին

Սուրբ գրությունները ցույց են տալիս մեզ Քրիստոսի Եկեղեցում ճշմարտությունը հաստատելու համար բազմաթիվ վկաներ օգտագործելու օրինակը: Մորմոնի Գիրքն ավելացնում է երկրորդ վկայություն Աստվածաշնչին որպես Քրիստոսի վկայություն: Երեց Մարկ Ի.

ԵՐԿՈՒ ՎԿԱՆԵՐ

«Աստվածաշունչը մի վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին, իսկ Մորմոնի Գիրքը՝ մեկ այլ վկայություն: Ինչո՞ւ է այդքան կենսական այս երկրորդ վկայությունը: Հետևյալ պատկերը կարող է օգնել. Որքա՞ն ուղիղ գծեր կարող եք անցկացնել մեկ կետով մեկ թղթի վրա: Պատասխանն է՝ անթիվ: Մի պահ պատկերացրեք, որ մեկ կետը ներկայացնում է Աստվածաշունչը, իսկ հարյուրավոր ուղիղ գծերը, որոնք անցնում են այդ կետով, ներկայացնում են Աստվածաշնչի տարբեր մեկնաբանումները, և որ այդ մեկնաբանումներից յուրաքանչյուրը մի եկեղեցի է ներկայացնում:

Ի՞նչ է պատահում, եթե այդ թղթի վրա հայտնվում է երկրորդ կետը՝ Մորմոնի Գիրքը: Քանի՞ ուղիղ գիծ կարող եք տանել այս երկու կետերի՝ Աստվածաշնչի և Մորմոնի Գրքի միջև: Միայն մեկ: Քրիստոսի վարդապետությունների միայն մեկ մեկնաբանություն կարող է ճշմարիտ լինել, եթե կա երկու վկաների վկայություն:

Կրկին և կրկին Մորմոնի Գիրքը գործում է որպես հաստատող, հստակեցնող, միավորող վկայություն Աստվածաշնչում ուսուցանվող վարդապետությունների համար»:

Երեց Թադ Ռ. Քոլիսթերը Յոթանասունի Նախագահությունից, «Մորմոնի Գիրքը՝ Գիրք Աստծո կողմից», *Լիահոնա*, Նոյ. 2011, 75:

ՆԱՐԱՅԱՐԳՈՒՄՆԵՐԸ՝ ԲՐՅԱՆ ԲՐՅՈՒ, VIDEO CAPTURE © 2001 IRI

Պիտերսենը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից (1900–84) մի անգամ ասել է. «Հիմնական պատճառը, որ մենք Մորմոնի Գիրքն ունենք, այն է, որ երկու կամ երեք վկաների բերանով բոլոր բաները կհաստատվեն (Տես Բ Կորնթ. ԺԳ.1)։ Մենք ունենք Աստվածաշունչը, և մենք ունենք նաև Մորմոնի Գիրքը։ Նրանք բաղկացած են երկու ձայներից՝ սուրբ գրքերի երկու հատորներից, երկու լիովին առանձին հնադարյան ժողովուրդներից, երկուսն էլ բերելով վկայություն Տեր Հիսուս Քրիստոսի աստվածայնության մասին»։[1] Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնն (1899–1994) ավելացրել է. «Մենք չպետք է մոռանանք, որ Տերն Ինքն է տվել Մորմոնի Գիրքը որպես Իր գլխավոր վկա»։[2]

Ավետարանի լրիվությունը

Մենք գիտենք, որ «պարզ և արժեքավոր բաներ . . . հանվել են» Աստվածաշնչից ժամանակի ընթացքում (1 Նեփի 13.40)։ Մորմոնի Գիրքը հստակեցնում է Քրիստոսի վարդապետությունը և կրկին բերում ավետարանի լրիվությունը երկիր (տես 1 Նեփի 13.38–41)։ Օրինակ՝ Մորոմնի Գիրքն օգնում է մեզ իմանալ, որ մկրտությունը պետք է կատարվի ընկղմամբ (տես 3 Նեփի 11.26) և որ փոքրիկ երեխաները կարիք չունեն մկրտվելու (տես Մորոնի 8.4–26)։

Կենտրոնական դեր վերականգնված Եկեղեցու համար

Ջոզեֆ Սմիթը վկայել է, որ Մորմոնի Գիրքը «մեր կրոնի պորտաքարն է»։[3] Քանի որ մենք գիտենք այս, զուգադիպություն չպետք է թվա, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին կազմակերպվել է 1830թ. ապրիլի 6- ին, Մորմոնի Գիրքը 1830թ. մարտի 26- ին առաջին անգամ հասարակական վաճառքի հանելուց ուղիղ 11 օր հետո։ Եկեղեցին կազմակերպված չէր մինչև նրա պորտաքար սուրբ գրությունը մատչելի չդարձավ իր անդամների համար։

Օրհնություն մեր կյանքում

Մորմոնի Գրքի վերաբերյալ Ջոզեֆ Սմիթն ասել է, որ «մարդ ավելի շատ կմոտենա Աստծուն ըստ այս գրքի ցուցումների, քան ըստ որևէ այլ գրքի»։[4] Այն զորություն ունի կյանքեր փոխելու՝ ներառյալ ձերը և նրանցը, ում հետ կկիսվեք Մորմոնի Գրքով։ Նախագահ Հենրի Բ. Այրինգը՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդականը վկայել է. «Մորմոնի Գրքի ազդեցությունը ձեր բնավորության, ուժի և քաջության վրա Աստծո վկան լինելու համար, անկասկած է։ Այդ գրքի վարդապետությունը և քաջարի օրինակները կբարձրացնեն, կառաջնորդեն և համարձակություն կտան ձեզ։ . . . Մորմոնի Գրքի աղոթքով ուսումնասիրությունը կկառուցի ձեր հավատքը Հայր Աստծո, Նրա Միրելի Որդու և Նրա ավետարանի հանդեպ։ Այն կկառուցի ձեր հավատքը հնադարյան և ժամանակակից Աստծո մարգարեների հանդեպ։ . . . Այն կարող է ավելի մոտեցնել ձեզ Աստծուն, քան որևէ այլ գիրք։ Այն կարող է փոխել կյանքը դեպի ավելի լավը»։[5] ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Mark E. Petersen, “Evidence of Things Not Seen,” *Ensign,* May 1978, 63.
2. *The Teachings of Ezra Taft Benson* (1988), 204.
3. Ջոզեֆ Սմիթ, Մորմոնի Գրքի նախաբանում։
4. Ջոզեֆ Սմիթ, Մորմոնի Գրքի նախաբանում։
5. Հենրի Բ. Այրինգ, «Վկան» *Լիահոնա,* Նոյ. 2011, 69–70։

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴԱՍԵՐ

Այս ամսվա թեմա՝ Ուրացություն և Վերականգնում

ՄԻԱՑԵՔ ԶՐՈՒՅՑԻՆ

Ապրիլի ընթացքում դուք կուսումնասիրեք Ուրացության և Վերականգնման մասին ձեր քահանայության քվորումներում և Երիտասարդ կանանց և Կիրակնօրյա Դպրոցի դասընթացներում (եթե ձեր ծուխը կամ ճյուղը ունի նոր դասերը ձեր լեզվով)։ Մորմոնի Գրքի առաջ գալը վերականգման կարևոր մասն է։ Այս հոդվածը կարդալուց հետո, մտածեք թե ինչով է ձեր կյանքը տարբեր Մորմոնի Գիրքը ունենալու շնորհիվ։ Դուք կարող եք գրել ձեր զգացումները ձեր օրագրում և կիսվել դրանցով՝ վկայելով տանը, եկեղեցում կամ սոցիալական կայքերում։



ԱՃԸ ԴԱՐԱՐՏ ՇՈՂՈՒՄ՝ ՈՒԳԱՆԴԱՅԻ

Սինդի Սմիթ

ՀԱԿԱՏԱՐԻՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ

Ընդունելով և ապրելով Հիսուս Քրիստոսի ավետարանով, Ուգանդայի երիտասարդները տեսնում են ինչպես է հավատքն ու հույսն աճում իրենց շուրջը։

Արևելյան Աֆրիկայի սրտում գտնվող գեղեցիկ Ուգանդան օրհնված է շաքարեղեգի և բանանի ծառերով պատված բլուրներով, և երիտասարդներով, որոնք պատրաստ են ընդունել Հիսուս Քրիստոսի ավետարանը և ապրել դրանով։

Ուգանդայի առաջին ցիցը կազմակերպվել է 2010թ.։ Եկեղեցին արագ աճում է, յուրաքանչյուր ծնում և ճյուղում բազմաթիվ երիտասարդ տղաներ և աղջիկներ կան։

Բարձրացնել դրոշ, լինել օրինակ

Մի ծխի երիտասարդ աղջիկները ոգեշնչվել էին Երիտասարդ կանանց գերագույն նախագահ՝ առաքինության վերաբերյալ քույր Էլեյն Ս. Դալտոնի ուսուցմամբ. «Այժմ է ժամանակը մեզանից յուրաքանչյուրի համար բարձրացնել և ծածանել առաքինությանը վերադառնալու դրոշը աշխարհի համար»։[1] Երիտասարդ աղջիկները մագլցեցին սարը, որտեղից դիտեցին քաղաքը և բարձրացրեցին ոսկեգույն դրոշներ, որոնք խորհրդանշում էին առաքինության օրինակ լինելու իրենց ուխտը։ Միասին նրանք երգեցին՝ «Բարձր լեռան վրա» օրհներգը (*ՀՄԵ,* էջ 30)։

Այդ երիտասարդ աղջիկները բարձրացրել են իրենց անձնական արդարակեցության չափանիշները։ Նրանց հնազանդությունն ամրապնդել է իրենց վկայությունները և ազդեցություն գործել մյուսների վրա։ Քույր Դալտոնն ասել է. «Երբեք մի թերագնահատեք ձեր արդարակյաց ազդեցության զորությունը»։[2] Եվ դրոշի պես այդ երիտասարդ կանանց օրինակը ծածանվում է ողջ աշխարհի առաջ։

Ուգանդայի շատ երիտասարդ կանանց նման Սանդրան մեկ մղոնից ավելի է քայլում եկեղեցի հասնելու համար, օգնում է մաքրել հավաքատունը ուրբաթ օրերին և սեմինարիա հաճախում շաբաթ օրերին։ Շաբաթվա ընթացքում նա արթնանում է առավոտյան ժամը 5:00-ին, որպեսզի սովորի իր դասերը, ապա գնում է դպրոց, և տուն է վերադառնում երեկոյան 6:00-ին։ Նա մեկ ուսումնական տարի է բաց թողել ֆինանսական դժվարությունների պատճառով, սակայն իր դժվարություններին դիմակայում է լավատեսորեն. «Ավետարանն իսկապես օգնել է ինձ մնալ հաստատուն և անսասան»։

Սանդրա

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՍԻՆԴԻ ՍՄԻԹԻ

Վերևում. Երիտասարդները միասին հաճախում են ցցի հավաքին:

Վերևում. Սյուզանը (կենտրոնում), լինելով փախստական Ուգանդայում, խաղաղություն գտավ ավետարանում և բերեց իր քույրերին, եղբայրներին և այլ երեխաների եկեղեցի:

Կենտրոնում. Այս ծխի երիտասարդ աղջիկները հաճույքով են աշխատում Անձնական զարգացման վրա:

Աջում. Ավետարանը քարոզելու համար Դենիսը թողեց պրոֆեսիոնալ ֆուտբոլը: Նա և քահանաների իր քվորումի մյուս երիտասարդները զոհաբերություններ են կատարել և դժվարություններ են հաղթահարել միսիա ծառայելու համար:

Սանդրան Եկեղեցու միակ անդամն է իր տանը, սակայն ծնողներն աջակցում են նրան Եկեղեցու ծառայության գործում, օրինակ՝ նրանք օգնեցին, երբ ծուխը մաքրեց տեղի մանկատան շրջակայքը: Նրա ընտանիքը տեսնում է, թե ինչպես է ավետարանի օգնությամբ նա ամրացել, նույնիսկ անլուծելի խնդիրների առկայության դեպքում: Խոսելով այդ ուժի աղբյուրի մասին, Սանդրան ասում է. «Երբ գնում եմ եկեղեցի, զգում եմ, կարծես, Աստծո սպառազինությունն եմ հագնում» (տես Եփեսացիս 6.11–17):

Վերջերս դարձի եկած Սյուզանը սիրում է Եկեղեցին: Ծագումով Հարավային Սուդանից, նրա ընտանիքը թողնեց ետևում դժվարությունները և օրհնվեց, ընդունելով միսիոներներին Ուգանդայում: Լինելով փախստական՝ նա խաղաղություն և պաշտպանություն գտավ ավետարանում: Կիրակի օրերին նա եկեղեցի էր բերում իր փոքր եղբայրներին և քույրերին, ինչպես նաև 10 այլ փոքրիկների, ովքեր Եկեղեցու անդամներ չէին: Ընտանիքի անդամի հանկարծակի մահից հետո նա վերադարձավ Հարավային Սուդան, և այժմ սպասում է, որ Եկեղեցին հաստատվի իրենց տարածքում: Եվ Սյուզանը, և Սանդրան դիմակայում են դժվարություններին, սակայն ապավինում են Աստծուն և վայելում Հիսուս Քրիստոսի կենդանի ավետարանի պտուղները (տես Ալմա 32.6–8, 43):

Զոհաբերել միսիա ծառայելու համար

Ուգանդայի երիտասարդները փոքր հասակից սկսում են ֆուտբոլ, որպես գնդակ օգտագործելով ճյուղերից կիպ գործված գունդը: Դեռ փոքրուց Դենիսը սպորտի հանդեպ սեր ուներ և ավագ

դպրոցում նրան կրթաթոշակ շնորհվեց իրենց թիմի կազմում խաղալու համար: Ավագ դպրոցն ավարտելուց հետո մի պրոֆեսիոնալ թիմ առաջարկեց նրան աշխատավարձ, սենյակ և ուտելիք: Դա իրականացած երազանք էր, սակայն Դենիսը գիտեր, որ դա կխանգարեր իրեն այդ տարի միսիա ծառայելուն:

Այնքան մեծ էր Աստծո կամքը կատարելու Դենիսի ցանկությունը, որ երբ միսիայում ծառայելու ժամանակն եկավ, նա անգամ չգայթակղվեց թիմում մնալու իր ցանկությամբ: Շատերը կասկածի ենթարկեցին նրա որոշումը, սակայն Դենիսը վստահ էր, որ ճիշտ որոշում էր կայացրել իր և մյուսների համար: «Երկու փոքր եղբայրներս և փոքր քույրս վերջերս են մկրտվել, – ասում է նա: – Երբեք չեմ մտածել, որ քույրս կունկնդրի ավետարանը: Երբ տեսնում եմ, որ Աստված հրաշքներ է գործում իմ ընտանիքում, ապագայի հանդեպ պայծառ հույսով եմ լցվում»:

Դենիսի ծխում ամեն շաբաթ երիտասարդներն ուսումնասիրում են *Քարոզիր իմ ավետարանը* ձեռնարկը: Նրանք դարձել են թիմ՝ սերտորեն աշխատելով լիաժամկետ միսիոներների հետ և ընկերներ բերելով կիրակնօրյա ժողովներին և այլ միջոցառումներին, դրանց թվում նաև շաբաթվա ընթացքում տեղի ունեցող բասկետբոլի և ֆուտբոլի խաղերին: Քահանաները մկրտել են ընկերներին և մյուսներին, ում իրենք օգնել են ուսուցանել միսիներների հետ: Տարիների ընթացքում այդ երիտասարդների թիմն ամրապնդել է ողջ ծուխը, իսկ նրանցից չորսը, որոնց թվում նաև Դենիսը, կանչվեցին ծառայելու Քենյա Նայրոբի Միսիայում:

Նրանք հետևել են Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի խորհրդին՝ «միսիոներ դառնալ միսիայի փաստաթղթերը լրացնելուց շատ ավելի վաղ»:[3] Նրանք հետևեցին այդ խորհրդին, միասին աշխատելով որպես քվորում և լավագույն թիմ:

Բոլոր չորս միսիոներներն էլ դժվարություններ են հաղթահարել ծառայելու համար: Վիլբերֆորսը բացատրել է. «Ես գրեթե կորցրել էի միսիա գնալու հույսը [ծախսերի պատճառով], բայց այդ ժամանակ կարդացի Մատթեոս 6.19–20. «Ձեզ համար գանձեր մի դիզեք երկրիս վրա . . . բայց ձեզ համար գանձեր դիզեք երկնքումը»: Ջանասիրության և պարտավորվածության շնորհիվ ես կարողացա իրագործել լիաժամկետ միսիա ծառայելու իմ նպատակը: Ես սիրում եմ միսիոներական ծառայությունը: Չկա ավելի լավ բան, քան նախևառաջ երկնային արքայությունը փնտրելը»:

Ապագայի հույս

Ուգանդայի երիտասարդներն՝ ապագայի հանդեպ մեծ հույսով լցված օգնում են կառուցել Աստծո արքայությունն այստեղ: Թեպետ Արևելյան Աֆրիկայում տաճար չկա, երիտասարդներն անհամբեր սպասում են, թե երբ կամուսնանան հեռավոր տաճարում: Մի ցցի միջոցառում նվիրված էր տաճարին պատրաստվելուն, որի վերջում ցցի նախագահության անդամը բերեց իր վկայությունը. «Աստված սիրում է ձեզ: Դուք Եկեղեցու ապագան եք Ուգանդայում»: Այս արդարակյաց երիտասարդներն արդեն հրաշալի ազդեցություն են թողնում:

Ուգանդայի երիտասարդ տղաներն ու աղջիկները աշխարհի բաները զոհաբերում են հարատև մնայուն օրհնությունների համար: Նրանք ցանել են հավատքի սերմը և խնամքով սնուցում են այն (տես Ալմա 32.33–37): Մրգերից ճկված ծառի պես (տես Ալմա 32.42) երիտասարդները կիսվում են ավետարանի ուրախությամբ այս պարարտ հողում: ■

Մինդի Սմիթն ապրել է Ուգանդայում, երբ նրա ամուսինն աշխատում էր այնտեղ, նրանք այժմ ապրում են Յուտայում, ԱՄՆ:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Elaine S. Dalton, “A Return to Virtue,” *Liahona,* Nov. 2008, 80:
2. Elaine S. Dalton, *Liahona,* Nov. 2008, 80:
3. David A. Bednar, “Becoming a Missionary,” *Liahona,* Nov. 2005, 45:



Ինչպիսի՞ն պետք է լինի ՀԱՎԱՏԱՐԻՄ ԸՆԿԵՐԸ

Էլեյն Ս. Դալտոն
Երիտասարդ Կանանց գերագույն նախագահ

Ընկեր բառի բնորոշումը փոխվել է այսօրվա բարձր տեխնոլոգիայով կապակցված աշխարհում: Այսօր գուցե մտածենք, որ շատ «ընկերներ» ունենք: Իրականում, մենք վայելում ենք տեղեկացված լինելու հնարավորությունը և տեղյակ ենք, թե ինչ է տեղի ունենում մեր ծանոթների, նախկին ընկերների և անգամ այն մարդկանց կյանքում, ում մենք անձնապես չենք հանդիպել, սակայն մեր ընկերներն ենք համարում:

Սոցիալական կայքերում «ընկեր» բառը հիմնականում օգտագործվում է ներկայացնելու *կոնտակտները,* ոչ թե *հարաբերությունները:* Դուք կարող եք ձեր «ընկերներին» ուղերձ ուղարկել, որը սակայն չի նշանակում որևէ հարաբերություն տվյալ անձնավորության հետ:

Երբեմն մենք տարվում ենք ընկերներ *ունենալով*: Սակայն պետք է կենտրոնանալ ընկեր *լինելու* վրա:

Ընկեր բառը բնորոշող շատ սահմանումներ կան: Երբեք չեմ մոռանա Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսի ելույթը, որտեղ նա բացատրում է, թե ինչ է նշանակում լինել ընկեր և ինչ հզոր ազդեցություն են ունենում ընկերները մեր կյանքում: Նրա խոսքերը մեծ ազդեցություն գործեցին իմ կյանքում: Նա ասաց. «Ընկերները նրանք են, ում շնորհիվ ավելի դյուրին է դառնում Հիսուս Քրիստոսի ավետարանով ապրելը»:[1] Այս առումով, իսկական ընկերության իմաստը կայանում է մյուսի մեծագույն բարիքը ցանկանալու մեջ: Դա նշանակում է ուրիշին առաջին տեղում դնել: Մեր բոլոր գործերում լինել ազնիվ, հավատարիմ և ողջախոհ: Թերևս *պարտավորություն* բառը բացահայտում է ընկերության իրական իմաստը:

Երբ դուստրս՝ Էմին, 15 տարեկան էր, որոշեց, թե ինչպիսի ընկերներ պետք է փնտրեր: Մի առավոտ ես նկատեցի նրա Մորմոնի Գիրքը բաց Ալմա 48 գլխի վրա, որտեղ նշել էր Մորոնի հրամանատարին նկարագրող հատվածները. «Մորոնին մի ուժեղ և զորեղ մարդ էր. նա կատարյալ հասկացողության տեր մարդ էր . . . Այո, և նա մի մարդ էր, որը հաստատուն էր Քրիստոսի հավատքում» (հատվածներ՝ 11, 13): Լուսանցքում նա գրել էր. «Ես ցանկանում եմ ժամադրվել և ամուսնանալ Մորոնիի պես տղամարդու հետ»: Երբ տարիների ընթացքում հետևում էի Էմիին և նրա ընկերներին, որոնց հետ նա հետագայում ժամադրվում էր, երբ 16 տարին լրացավ, ես տեսնում էի, որ նա մարմնավորում էր այդ գծերը և օգնում էր մյուսներին ապրել որպես Աստծո որդիներ, քահանայություն կրողներ և ապագա հայրեր և ղեկավարներ:

Իսկական ընկերներն իրենց հետ շփվողների վրա բարերար

ազդեցություն են թողնում, «մի փոքր ավելի բարձրացնելով և ավելի լավը դարձնելով նրանց»:[2] Դուք կարող եք օգնել միմյանց, հատկապես երիտասարդ տղաներին, պատրաստվել և ծառայել պատվավոր միսիա: Ձեր արդարակյաց ազդեցությունը և ընկերությունը կարող է հավերժական ազդեցություն թողնել ոչ միայն ձեր ընկերների կյանքի, այլև գալիք սերունդների վրա:

Փրկիչն Իր աշակերտներին անվանել է Իր ընկերները: Նա ասել է.

«Սա է իմ պատվիրանքը, որ իրար սիրեք, ինչպես որ ես ձեզ սիրեցի:

Ոչ ով նրանից ավելի սեր չունի, որ մեկն իր անձը դնի իր բարեկամների համար:

Դուք իմ բարեկամներն եք, եթե անեք ինչ որ ես պատվիրում եմ ձեզ:

Այլևս ծառա չեմ ասում ձեզ, որովհետև ծառան չգիտե, թե իր տերն ինչ է գործում. բայց ձեզ *բարեկամ* ասեցի, որովհետև ամեն ինչ որ լսեցի իմ Հորից, իմացրի ձեզ» (Հովհ. 15.12–15; շեղագրումն ավելացված է):

Ապրելով և կիսվելով Հիսուս Քրիստոսի ավետարանով, դուք ձեր կողմը կգրավեք նրանց, ովքեր կցանկանան լինել ձեր ընկերները, լինելով ոչ թե սոցիալական կայքի կոնտակտ, այլ այնպիսի ընկեր, ինչպիսին Փրկիչն է եղել Իր խոսքով և օրինակով: Երբ փորձեք լինել ընկեր մյուսների համար և ձեր լույսը շողա, ձեր ազդեցությունը կօրհնի ձեր ընկերներից շատերի կյանքը: Ես գիտեմ, որ երբ ցանկանում եք մյուսների համար լինել այնպիսի ընկեր, ինչպիսին բնորոշել են մարգարեները և սուրբ գրությունների օրինակները, դուք երջանիկ կլինեք և բարի ազդեցություն կթողնեք աշխարհում, և մի օր կստանաք սուրբ գրություններում նշված ճշմարիտ ընկերության փառահեղ խոստումը. «Միևնույն հարաբերությունները, որոնք այստեղ գոյություն ունեն մեր մեջ, այնտեղ ևս գոյություն կունենան մեր մեջ, միայն թե դրանք կզուգակցվեն հավերժական փառքով» (ՎևՈւ 130.2): ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Robert D. Hales, “This Is the Way; and There Is None Other Way,” in *Brigham Young University Speeches of the Year, 1981–82 Speeches* (1982), 67.
2. Gordon B. Hinckley, “The Quest for Excellence,” *Liahona,* Sept. 1999, 8.

ԿԱՐԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ընտրեք այնպիսի ընկերներ, ովքեր կրում են ձեր արժեքները, որպեսզի կարողանաք ամրացնել և քաջալերել միմյանց, ապրելով բարձր չափանիշներով:

Լավ ընկերներ ունենալու համար եղեք լավ ընկեր: . . .

Եթե ցանկանում եք ընկերանալ մյուսների հետ, մի զիջեք ձեր չափանիշները»:

***Երիտասարդներին զորացնելու համար* (գրքույկ, 2011), 16:**

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ © ISTOCKPHOTO.COM/FONIKUM ԵՎ LEONARIUM

Իմ ՇՐԱՎԵՐՆ ի ՓՐԿՈՒԹՅՈՒՆ

Էմերսոն Խոսե դա Սիլվա

Երիտասարդ հասակում ես հաճախել եմ տարբեր աղանդների և շփոթված էի, որովհետև յուրաքանչյուրը տարբեր կերպ էր ուսուցանում սուրբ գրությունները: Ես ինձ լավ չէի զգում, որոշ տեղերում նկատելով ոչ ակնածալից վերաբերմունք, այնպես որ այլևս չէի փորձում եկեղեցի գտնել:

Մի քանի տարի անց ընկերս՝ Քլեյթոն Լիման, մկրտվեց Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: Նա այդ մասին ինձ չէր ասել, չնայած որ մենք լավ ընկերներ էինք, սակայն ժամանակի հետ ես սկսեցի փոփոխություններ տեսնել նրանում: Կիրակի օրերին սովորաբար առավոտյան գնում էի նրանց տուն, որպեսզի ֆուտբոլ խաղայինք, սակայն նա տանը չէր լինում: Երկու: թե երեք կիրակի անընդմեջ ես նրան տանը չէի գտնում: Վերջապես Քլեյթոնն ասաց ինձ, որ նա այլևս չի կարող ֆուտբոլ խաղալ կիրակի օրերին,

որովհետև պատվում է Տիրոջ օրը: Ես ասացի նրան. «Այդ եկեղեցին քեզ խելքահան է արել»:

Ապա Քլեյթոնն ինձ հրավիրեց եկեղեցի: Ես հրաժարվեցի, քանի որ դեռևս հիասթափված էի կրոնից: 10 ամիս շարունակ Քլեյթոնը բերում էր միսիոներներին, որպեսզի ուսուցանեին ինձ, բայց ես միշտ հրաժարվում էի կամ ասում նրանց, որ շատ զբաղված եմ: Բայց նա երբեք անձնատուր չեղավ:

Մի օր հունիսին նա հրավիրեց ինձ Եկեղեցու պարի երեկույթին: Ես ծաղրեցի, հարցնելով. «Կարո՞ղ է անվճար ուտելիք և շատ աղջիկներ էլ լինեն»: Ծիծաղելով նա ասաց՝ այո:

Պետք է ընդունեմ, որ ստամոքսս հաղթեց ինձ: Ես այցելեցի եկեղեցի և սիրեցի այն: Ինձ ամեն ոք ջերմ ընդունեց, ես շատ կերա, և ինձ հետաքրքրեցին ժողովները: Երբ կիրակի օրը եկա եկեղեցի, հանդիպեցի շատ մարդկանց և լսեցի նրանց վկայությունները: Ես ծանոթ չէի Մորմոնի Գրքին, սակայն զգացի Տիրոջ Հոգին, երբ Եկեղեցու մի քանի անդամներ վկայեցին. «Ես գիտեմ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, որ սա Հիսուս Քրիստոսի Եկեղեցին է, և որ Ջոզեֆ Սմիթը մարգարե էր՝ Աստծո կողմից կանչված»: Ես երբեք ինձ այդքան լավ չէի զգացել: Ես դեռևս չէի ցանկանում հանդիպել միսիոներներին, բայց այդ վկայության ժողովը շարժեց սիրտս:

Հաջորդ շաբաթ Քլեյթոնը կրկին հրավիրեց ինձ գնալ եկեղեցի: Ես չէի կարող գնալ, քանի որ ուրիշ գործ ունեի: Նա տխրեց, երբ ասացի, որ չգիտեմ, արդյոք կկարողանամ գնալ:

Ինչևէ, կիրակի առավոտյան ես վեր կացա եկեղեցի գնալու ցանկությամբ համակված: Ճիշտ է, ինձ համար դժվար էր վաղ առավոտյան արթնանալը, բայց 6:50 արթնացա, պատրաստվեցի և սպասեցի Քլեյթոնին: Նա զարմացավ, տեսնելով ինձ պատրաստ սպասելիս: Այդ կիրակի եպիսկոպոսն ուսուցանում էր քահանայության մասին: Ես ուժգին զգացի Հոգին և այնպիսի տպավորություն ունեցա, որ պետք է միսիոներական դասերին մասնակցեի: Երիտասարդ տղաների ժողովի վերջում գիտեի, որ մկրտվելու եմ:

Եկեղեցուց հետո Քլեյթոնին ասացի. «Ես ուզում եմ մկրտվել»: Նա կարծեց՝ կատակում եմ: Բայց հետո ասաց. «Եթե ես կանչեմ երեցներին, դու կհանդիպե՞ս նրանց հետ»: Ես ասացի՝ այո:

Ինձ ուսուցանեցին հրաշալի երեցներ: Լսելով Վերականգնման ուղերձը, ես նույնիսկ ավելի շատ համոզվեցի, որ պետք է մկրտվեմ: Բայց ես ուզում էի ինքս իմանալ Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին: Երեցները Մորմոնի Գրքում նշեցին Մորոնի 10.3–5 հատվածները և ինձ հորդորեցին աղոթել ու Աստծուն հարցնել դրա ճշմարտացիության մասին:

Հաջորդ երեկոյան հիշեցի, որ դեռևս չեմ կարդացել Մորմոնի Գիրքը: Երբ սկսեցի կարդալ, շատ ուժգին մի ոգի զգացի: Ես աղոթեցի և դեռ աղոթքս չավարտած ես գիտեի, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Ես երախտապարտ եմ Աստծուն իմ աղոթքին պատասխանելու համար: Ես մկրտվեցի 2006թ. հուլիսին:

Հետագայում ես ծառայեցի Բրազիլիա Կույաբա Միսիայում, իսկ ընկերս՝ Քլեյթոնը, Բրազիլիա Սանտա Մարիա Միսիայում: Մենք արեցինք այն, ինչ Քլեյտոնն արեց ինձ համար՝ հրավիրեցինք մարդկանց գալ Քրիստոսի մոտ և օգնեցինք նրանց ստանալ վերականգնված ավետարանը, Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք գործադրելով, ապաշխարելով, մկրտվելով և Սուրբ Հոգու պարգևը ստանալով: Սա է դեպի փրկություն տանող ճշմարիտ ուղին:

Եկեք միշտ հրավիրենք մեր ընկերներին և հարազատներին սովորել այս ավետարանի մասին, քանի որ Փրկիչը հրավիրում էր յուրաքանչյուրին, երբ ասում էր՝ «Ինձ մոտ եկեք» (Մատթեոս 11.28): Ես գիտեմ, որ սա Հիսուս Քրիստոսի Եկեղեցին է, և որ այժմ է ժամանակը՝ հրավիրելու յուրաքանչյուրին գալ Նրա մոտ: ■

ԼԱՆԱՐԱՔԱՐՈՂՈՒՄԸ՝ ՈՈՋԵՐ ՄՈՑԿՈՒՍԻ

ՏԱՍ ԵՂԱՆԱԿ, ՈՐՈՆՔ ԿՕԳՆԵՆ ՁԵՋ ԻՄԱՆԱԼ, ՈՐ ԴԱՐՁԻ ԵՔ ԵԿԵԼ

Թայլեր Օրթոն

Քահանայության ժողովին իմացա, որ Ահարոնյան Քահանայության նպատակներից մեկն է՝ օգնել մեզ «դարձի գալ դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը և ապրել դրա ուսմունքներով»:[1] Ես վստահ չէի, թե ինչ է նշանակում «դարձի գալ դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը»: Ես ծնողներիս և մեծ եղբայրներիս ու քույրերիս կարծիքը հարցրեցի դրա վերաբերյալ, և մենք միասին քննարկեցինք, թե ինչպես կարող ենք իմանալ, որ դարձի ենք եկել:

Գուցե կան այլ եղանակներ ևս, սակայն ներկայացնում ենք այն 10 եղանակները, որոնք մենք ի մի ենք բերել: Քանի որ դարձը ողջ կյանքի գործընթաց է, պարտադիր չէ, որ այժմ կատարյալ լինենք այդ ոլորտներից յուրաքանչյուրում, բայց դրանք կարող են օգնել մեզ գնահատել մեր առաջընթացը:

1. Դարձի գալով, դուք ոչ միայն *գիտեք,* թե ինչ պետք է անեք, այլև ճիշտ գործելու *ցանկություն* ունեք: Բավական չէ պարզապես խույս տալ սխալ գործելակերպից, քանի որ վախենում եք, որ կբռնվեք կամ կպատժվեք: Ճշմարիտ դարձի ժամանակ դուք իրոք ցանկանում եք ճիշտ ընտրություն կատարել:

2. Դարձի մեկ այլ նշան է այն, որ դուք այլևս սխալ գործելու ցանկություն չունեք: Անթի-Նեփի-Լեքիացիները դրա վառ օրինակն են: Դարձի գալով դեպի Քրիստոսի ավետարանը, նրանք «ուխտի մեջ էին մտել Աստծո հետ՝ ծառայելու նրան և պահելու նրա պատվիրանները» (Մոսիա 21.31): Նեփիացիների պես, ովքեր ուսուցանվել էին Բենիամին թագավորի կողմից, նրանք այլևս «հակում չունեին չարիք գործելու» (Մոսիա 5.2): Նրանք իսկապես դարձի եկան դեպի

Քրիստոսի ավետարանը, և սատանայի գայթակղությունները ոչ մի զորություն չունեին նրանց վրա:

3. Դարձի գալով դուք ավելի շատ մտահոգվում եք այն մասին, թե ձեր մասին ինչ է մտածում Աստված, քան ինչ են մտածում մյուսները: Ինդոնեզիայի իմ քոլեջում ուսանողները հակված էին շատ խմելուն: Երբեմն գաղթակղվում ես գնալ երեկույթների, երբ ամեն ոք մասնակցում է դրանց և ծաղրում քեզ չմասնակցելու համար: Եղբայրս շատ անգամներ է հրավիրվել խմելու և մասնակցելու երեկույթներին, բայց նա երբեք չի գնացել և անսասան է մնացել իր համոզմունքներում: Դժվար էր, բայց նա շատ գիշերներ է անցկացրել տանը միայնակ: Երբ ավարտական երեկոյին ուսանողները հրաժեշտ էին տալիս միմյանց, ոմանք իրենց հիացմունքն էին արտահայտում, որ նա կարողացավ դիմակայել հասակակիցների ճնշումներին և հավատարիմ մնաց իր չափանիշներին: Նրանք ասում էին, թե որքան են հիացել իրենով: Այդպիսով, նա ցույց տվեց, որ դարձի էր եկել:

4. Դարձի գալով դուք ամեն կերպ փորձում եք մշտապես ապրել ավետարանով, ոչ միայն կիրակի օրերին կամ երբ հարմար է, այլ՝ միշտ: Ձեր գործողությունները չեն փոխվում կախված այն բանից, թե ում հետ եք դուք կամ ով կարող է ձեզ տեսնել: Երբ ձեր հասակակիցները կոպիտ կատակ են անում կամ ցանկանում են դիտել անպարկեշտ կինոնկար, դուք չեք մասնակցում դրան, ոչ թե այն պատճառով, որ ոչ ոք չի իմանա այդ մասին, այլ որ դուք պաշտպանում եք ձեր համոզմունքը:

5. Դարձի գալով, դուք դառնում եք ավելի բարի և կարեկցող մյուսների հետ շփվելիս: Դուք չեք դատում, քննադատում կամ բամբասում: Ավելի զգայուն եք լինում մյուսների հանդեպ և, բնականաբար, ծառայելու և օգնելու ուղիներ եք փնտրում: Եթե քայլում եք դպրոցի միջանցքով և ինչ-որ մեկը թափում է իր գրքերը, դուք պետք է առանց մտածելու կանգնեք և օգնեք:

6. Դարձի գալով մեծանում է ձեր աղոթելու ցանկությունը և աղոթելիս զգում եք, որ իսկապես


5.

ԴԵՊԻ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՏԱՆՈՂ ՀԱՎԱՍՏԻ ՈՒՂԻՆ

«Տերը ցանկանում է, որ Իր Եկեղեցու անդամները լիովին դարձի գան դեպի Իր ավետարանը: Սա միակ հավաստի ուղին է՝ ունենալու համար հոգևոր ապահովություն այժմ և երջանկություն՝ հավիտյան»:

Elder Donald L. Hallstrom of the Presidency of the Seventy, "Converted to His Gospel through His Church," *Liahona*, May 2012, 15.


6.

2.

Լամանացիները թաղեցին իրենց զենքերը, ցույց տալով, որ հավատարիմ են ավետարանով ապրելու իրենց ուխտին (տես Ալմա 24):

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ © IRI; ԱՆԹԱՐՆԵՐԻՆ ԹԱՐՄԱՑՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԱՐԵՎԻ ՄԱՐՄՆՈՒՄ © IRI

7.

9.

10.

հաղորդակցվում եք Աստծո հետ: Դուք միշտ ժամանակ եք գտնում աղոթելու՝ անկախ նրանից ինչպես եք զգում կամ ինչ է տեղի ունենում ձեր կյանքում: Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնն (1899–1994) ասել է մեզ. «Եթե մենք աղոթելու տրամադրվածություն չունենք, պետք է այնքան աղոթենք, որ աղոթելու ցանկություն առաջանա»:[2]

7. Դարձի գալով, դուք անհամբեր սպասում եք Կիրակի օրվան, որովհետև դա Հանգստության օրն է: Երբ Կիրակին գալիս է՝ «Դեհ, սա այն օրն է, որ չեմ կարող ընկերներիս հետ ժամանակ անցկացնել կամ կինոդիտման գնալ» ասելու փոխարեն դուք մտածում եք՝ «Հրաշալի է, սա այն օրն է, երբ կարող եմ եկեղեցի գնալ, հոգևոր բաների վրա կենտրոնանալ և ժամանակ անցկացնել իմ ընտանիքի հետ»:

8. Դարձի գալով դուք պահում եք պատվիրանները և չեք փնտրում արդարացում, չեք նպատակահարմարեցնում վարքը կամ փորձում սողանցքներ գտնել: Չեք փորձում դուրս գալ սահմանափակումներից, պարզապես պահում եք պատվիրանները, որովհետև գիտեք, որ դա լավագույն ուղին է:

9. Դարձի գալով դուք անհամբեր սպասում եք ձեր տասանորդը վճարելուն: Դուք դիտում եք այն որպես արտոնություն և զգում եք, որ 10 տոկոսն այդքան էլ մեծ գումար չէ, հատկապես, եթե համեմատեք այն ձեր ստացած օրհնությունների և բավարարվածության հետ: Այդ օրհնություններն արժեն ավելին, քան գումարը, որ վճարում եք:

10. Դարձի գալով, դուք անհագ ցանկություն եք ունենում ասել մյուսներին ձեր գտած ճշմարտության և երջանկության մասին: Սուրբ գրություններից Լեքիի երազը լավ օրինակ է, որտեղ նա ուժգին ցանկություն ուներ իր ընտանիքի հետ կիսվելու կյանքի ծառի համեղ պտղով: Երբ նա ճաշակեց պտուղը, իր առաջին միտքը եղավ ոչ թե իր համար ավելին քաղելը, այլ որ իր ընտանիքն էլ ճաշակի դրանից և զգա նույն երջանկությունը (տես 1 Նեփի 8.12):

Այսպիսով, դուք իմանում եք, որ դարձի եք եկել, երբ սկսում եք ապրել ավելի բարձր օրենքով՝ Հիսուս Քրիստոսի ավետարանով: Դուք ապրում եք օրենքի ոգով, ինչպես նաև օրենքի տառով: Դուք ապրում եք ավետարանով ձեր կյանքի ամեն ոլորտում: Դուք լիարժեք ապրում եք ավետարանով ոչ թե ստիպված, այլ ձեր կամքով: Դուք ավելի երջանիկ և լավ անձնավորություն եք, և ցանկանում եք դառնալ այն անձնավորությունը, ինչպիսին Երկնային Հայրն է ցանկանում ձեզ տեսնել: Դուք ցանկանում եք լինել Հիսուս Քրիստոսի նման և հետևել Նրա օրինակին: Դառնալով այդ անձնավորությունը, կարող եք ասել, որ իսկապես դարձի եք եկել: ■

Թայլեր Օրթոնն ապրում է Ջավայում, Ինդոնեզիա:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Handbook 2: Administering the Church* (2010), 8.1.3.
2. Ezra Taft Benson, “Pray Always,” *Liahona*, June 1990, 4.

ՎԵՐԻՆՈՒՄ՝ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ © IRI; ԿՈՊԵԿՆԵՐ © ISSTOCKPHOTO.COM/THINKSTOCK; ԿԵՆՍԱՑ ՃՄՐԻ ԼԵՔԻԻ ՏԵՍԻԼԸ, ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ՈՐԴԻՆ ԱԶԻ © IRI

Արժե

ՋԱՆՔԵՐ ԳՈՐԾԱԴՐԵԼ

Դուք կզարմանաք, թե որքան կարող եք անել,
եթե չդադարեք փորձել:

(Տես *Երիտասարդներին զորացնելու համար* [գրքույկ, 2011], 40–41:)

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԴՐԵՖՎԷՔ ԵՎ ԿԱՐԱՍԱԼՆ, ԵՏՐԱ ՊԼԱՆ © THINKSTOCK

Դենի տատիկի փոքրիկ միսիոները

Էմիլիա Մարիա Գիմարես Կոռեա

«Երբ մարդը խոսում է Սուրբ Հոգու զորությամբ, Սուրբ Հոգու զորությունը տանում է այն մինչև մարդկանց զավակների սրտերը» (2 Նեփի 33.1):

Վիտորն ապրում էր մոր և քրոջ հետ իր Դենի տատիկի տանը: Վիտորի տատիկը հիվանդացավ և շաբաթներ շարունակ գամված մնաց անկողնում: Նա միայնակ պառկած էր իր սենյակում:

Վիտորը որոշեց, որ կարող է ընկերակցել Դենի տատիկին: Ամեն օր, երբ նա դպրոցից տուն էր վերադառնում, վերցնում էր *Լիահոնան* և գնում տատիկի սենյակ նրա համար կարդալու երեխաների բաժնից պատմություններ:

Իրենց տանը գտնվող բոլոր *Լիահոնաները* կարդալուց հետո նա սկսեց նրա համար կարդալ Մորմոնի Գիրքը և Աստվածաշունչը: Դենի տատիկը Եկեղեցու անդամ չէր, բայց նա սիրով էր լսում Վիտորին: Նա ուրախ էր ավետարանի մասին սովորելու համար:

Տատիկը շատ հարցեր էր տալիս: Եթե Վիտորը չէր իմանում պատասխանները, նա հարցնում էր Երեխաների Խմբի իր ուսուցչին կամ փնտրում պատասխանը սուրբ գրություններում: Տատիկը Վիտորին անվանում էր իր փոքրիկ միսիոները:

Դենի տատիկն ասում էր Վիտորին, որ շատ բաներ էր սովորել նրանից: Նա խոստացավ, որ ապաքինվելուն պես նրա հետ եկեղեցի կհաճախի: Նա ցանկանում էր առողջանալ և ավելի շատ ուսումնասիրել ավետարանը:

Երբ տատիկն ապաքինվեց, նա կատարեց իր խոստումը: Նա Վիտորի հետ գնաց եկեղեցի, որպեսզի ավելին սովորի այն ամենի մասին, ինչ թոռնիկն ուսուցանել էր իրեն:

Երբ Վիտորը մեծացավ, նա լիաժամկետ միսիա ծառայեց Բոստոնի Մասաչուսեթս Միսիայում: Նախքան միսիայի մեկնելը նա տաճար գնաց Դենի տատիկի հետ: ■

Էմիլիա Մարիա Գիմարես Կոռեան ապրում է Ֆեդերալ շրջանում, Բրազիլիա:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ԷՄԻԼԻԱ ՄԱՐԻԱ ԳԻՄԱՐԵՍ ԿՈՌԵԱՆ

ՀԱՏՈՒԿ ՎԿԱ

Երեց Մ. Ռասսել Բալլարդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Տասներկու Առաքյալների Քվորումի անդամները Հիսուս Քրիստոսի հատուկ վկաներն են:

Ինչո՞ւ Եկեղեցին այդքան երկար անուն ունի

Հիսուս Քրիստոսն Ինքն է տվել Եկեղեցու անունը (տես Վարդապետություն և Ուխտեր 115.4):

Հիսուս Քրիստոսի Եկեղեցի անվանումը հայտնում է, որ սա Նրա Եկեղեցին է:

Վերջին օրեր բառերն արտահայտում են, որ դա նույն Եկեղեցին է, որը Հիսուս Քրիստոսը հիմնեց, երբ ապրում էր երկրի վրա, սակայն վերականգնեց վերջին օրերին:

Սրբեր նշանակում է, որ մենք հետևում ենք Նրան և ձգտում ենք կատարել Նրա կամքը:

Մեր անդամները կոչվում են *Մորմոններ,* որովհետև մենք հավատում ենք Մորմոնի Գրքին, սակայն հնարավորության դեպքում պետք է օգտագործել Եկեղեցու լրիվ անունը: ■

«Անվան կարևորությունը» ելույթից, Լիահոնա, *նոյ. 2011, 79–82:*

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ԲՐԻԴ ԹԻԹԵՐԻ

Տաճարների տոնակատարությունները

Դարսի Ջենսեն

Երբ Սոլթ Լեյքի Տաճարի կառուցումն ավարտվեց 1893թ., Վերջին Օրերի Սրբերը ցնծության մեջ էին: Տաճարի կառուցման համար նրանցից 40 տարի պահանջվեց: Քանի որ երեխաները գումար էին նվիրաբերել տաճարի կառուցման համար, Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը որոշեց երեխաների մասնակցությամբ նվիրագործման հինգ հատուկ նիստեր անցկացնել:

Այսօր բազմաթիվ տաճարներ կան երկրի վրա, և երեխաները դեռևս մասնակցում են տաճարների տոնակատարություններին: Տես ինչպես են երեխաները մասնակցել այդ տոնակատարություններին այն ժամանակ և այժմ: ■

Դարսի Ջենսենն ապրում է Կալիֆորնիայում, ԱՄՆ:

***Սոլթ Լեյքի Տաճարի** նվիրագործմանը ներկա են եղել ավելի քան 12 000 երեխաներ: Այդ երեխաները Շուգար Հաուս Ծխից եկել էին գնացքով:*

*Այս տոմսը թույլ էր տալիս մինչև 16 տարեկան երեխաներին հաճախել **Սոլթ Լեյք Տաճարի** նվիրագործման հատուկ ծառայություններին: Առաքյալները և Առաջին Նախագահության անդամները խոսեցին երեխաների հետ տաճարի ներսում:*

*Երբեմն տաճարները վերանորոգվելուց հետո վերանվիրագործվում են: **Էնքորիջ Ալյասկա Տաճարի** վերանվիրագործման տոնակատարության ժամանակ Երեխաների Միության երեխաները երգելով լույսեր էին տանում:*

*Երբ կառուցվում էր **Գիլբերթ Արիզոնա Տաճարը**, Գիլբերթ Արիզոնա Հայլանդ Ցցի Երեխաների Միության երեխաները նպատակ դրեցին ամեն շաբաթ ծառայել իրենց ծխերից որևէ մեկին:*

***Սան Դիեգո Կալիֆոռնիա Տաճարի** կառուցման ժամանակ Մեխիկոյից Երեխաների Միության անդամները տաճարի համար գունագեղ գորգ էին գործել: Բարձրագույն Իշխանավորներն այդ գորգի վրա էին կանգնել անկյունաքարի ծառայության ժամանակ:*



Կանադայի Մանիթոբայի Երեխաների Միության երեխաները մեքենայով գնացին **Ռեջինա Սասկաչեվան Տաճար**, *որպեսզի դիպչեին տաճարի պատերին և խոստանային, որ մի օր տաճար կմտնեն:*

Կիև Ուկրաինա Տաճարի *բաց դռների օրերին երեխաները ողջունում էին այցելուներին «Ոգում եմ տեսնել տաճարը» երգով:*

Ակրա Գանա Տաճարի *նվիրագործումից առաջ տեղի ունեցած մշակութային տոնակատարության ժամանակ Արևմտյան Աֆրիկայից ավելի քան 800 երեխաներ երգեցին «Աստծո զավակն եմ» օրհներգը:*

Երեխաների Միության երեխաները երգում են Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի համար, երբ նա ժամանում է նվիրագործելու **Աբա Նիգերիա Տաճարը:**

Տաճարն ունի անկյունաքար, որը ցույց է տալիս նվիրագործման տարին: Նվիրագործմանը Բարձրագույն Իշխանավորները շաղախով կնքում են անկյունաքարը: 9-ամյա Իսահակն օգնեց դնել **Կանզաս Սիթի Միսսուրի Տաճարի** *անկյունաքարի շաղախը:*

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ (ՁԱԽԻՑ). ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ԳԻԼԲԵՐԹ ԱՐԻՋՈՆԱ ՀԱՅԱԼԱՆԴ ՑԻՑԸ, ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ, ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ՈՒՐՉԱՐՈ Ն. ՀՈԼՑԱՖԵԼԸ, ԼԻՆՆ ՀՈՈՒԼԵԹԻ, ՄԵՅԲԼ ԵՎ ԴԵԼԲԵՐԹ ՓԱԼՄԵՐԻ ԿՈՂՄԻՑ, ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ՈԱՍՍԵԼ Կ. ԱՆԴԵՐՍՈՆԸ, ԴԵՅՎԻԴ Մ. Վ. ՓԻՔՔՈՓ, ԼՈՐԻ ԳԱՐՍԻԱՅԻ, ՋԵՐԻ ԱՎԱՆՏԻ ԵՎ ՋՈՒԼԻ ԴՈԿՍՏԵՅԴԵՐ ՀՐՓՍԻ, ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄԸ՝ ԲՐԵԴ ԹԻԵՐԻ

Տաճարի մասին հարցեր և պատասխաններ

Ինչո՞ւ մենք տաճարներ ունենք:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու տաճարները սուրբ վայրեր են, որտեղ մենք սովորում ենք հավերժական ճշմարտություններ և մասնակցում սուրբ ծեսերին:

Ինչպիսի՞ն է տաճարը ներսում:

Տաճարը խաղաղ, ակնածանքով լի և գեղեցիկ վայր է: Տաճարում ամենուր մաքրություն և կարգուկանոն է տիրում: Ամենքը հագնում են սպիտակ զգեստներ և խոսում են ցածր ձայնով:

Ի՞նչ է կատարվում տաճարներում:

Կինը կարող է կնքվել իր ամուսնուն, իսկ երեխաները կարող են կնքվել իրենց ծնողներին: Կնքումը հնարավորություն է տալիս ընտանիքներին ողջ հավերժություն լինել միասին: Տաճարում տղամարդիկ և կանայք նաև ստանում են հոգևոր օրհնությունների պարգևը, որը կոչվում է օժտում: Նրանք կարող են նաև օժտում ստանալ և կնքվել նրանց համար, ովքեր մահացել են առանց տաճարային ուխտեր կապելու:

Էլ ի՞նչ է տեղի ունենում տաճարներում:

Կնքումից և օժտումից բացի այլ ծեսեր են կատարվում տաճարներում: Մարդիկ կարող են մկրտվել և հաստատվել նրանց համար, ովքեր իրենց կյանքի ընթացքում չեն կարողացել միանալ Եկեղեցուն: Երբ լրանում է ձեր 12 տարին և արժանի եք լինում տաճար մտնելուն, կարող եք մկրտվել և հաստատվել նրանց համար, ովքեր մահացել են առանց ավետարանի:

Իսկ եթե իմ ընտանիքը չի՞ եղել տաճարում:

Երկնային Հայրը ճանաչում և սիրում է ձեզ և ձեր ընտանիքին: Նա ցանկանում է, որ ամենը ստանա տաճարային օրհնությունները: Տաճար մտնելու համար արժանի ապրեք: Այժմ նպատակադրվեք, որ մի օր օժտում կստանաք և կամուսնանաք տաճարում: Ձեր Երկնային Հայրը կօրհնի ձեզ և ձեր ընտանիքին: ■

«Իմ փոքրիկ ընկերներ, . . . միշտ տաճարը պահեք ձեր աչքի առաջ: Մի արեք այն, ինչը ձեզ կխանգարի տաճարի դռնից ներս մտնել և ընդունել տաճարային սուրբ և հավերժական օրհնությունները»:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն, «Սուրբ տաճար՝ լույս աշխարհին», *Լիահոնա*, մայիս 2011, 93:

ՆԿԱՐԱԶԱՐ՝ ԳԱՅԼ ԹԱՔԻՐ

Ընտանիքները կարող են հավերժ միասին լինել

(Պարզեցված)

Խոսք՝ Ռուբ Մյուրբ Գարդներ
Երաժշտություն՝ Վանյա Ց. Վոռիկինս



Խոսք և երաժշտություն © 1980 IRI Գործիքավորում © 2012 IRI Բոլոր իրավունքները վերապահված են:
Այս երգը կարող է բազմացվել միայն առանձին դեպքերում ոչ առևտրային նպատակներով եկեղեցում կամ տանն օգտագործելու համար:

Հիսուս Քրիստոսը վերականգնեց Իր Եկեղեցին Վերջին Օրերում

ՆԱՐԱԶԱՐԴՈՒՀԻ ԲՐՅԱՆ ԲՐՅԻ

Դուք կարող եք օգտագործել այս դասը և վարժությունը՝ ավելին սովորելով Երեխաների Խմբի այս ամսվա թեմայի մասին:

Պատկերացրեք, թե գնացել եք գանձ որոնելու: Որտե՞ղ կարող եք փնտրել գանձը: Ինչպե՞ս կարող եք գտնել այն: Կլինի՞ արդյոք գանձատուփ այնտեղ: Ի՞նչ կլինի ներսում:

Որոշ գանձատուփեր պարունակում եմ գեղեցիկ զարդեր և թանկարժեք մետաղադրամ: Իսկ մենք՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներս, ունենք գանձ, որն ավելի թանկ արժե. դա Հիսուս Քրիստոսի ավետարանն է:

Շատերը չգիտեն այդ գանձի մասին, այնպես որ մեր պարտականություններից մեկն էլ՝ դրանով որքան հնարավոր է շատ մարդկանց հետ կիսվելն է:

Հիսուսի և Նրա Առաքյալների մահից հետո ավետարանի որոշ կարևոր ուսմունքներ և ծեսեր կորսվեցին կամ փոփոխվեցին, դրանց թվում էին՝ մկրտության, քահանայության իշխանության, տաճարների, կենդանի մարգարեների և հաղորդության մասին ուսմունքներն ու ծեսերը:

Այդ ավետարանի գանձերը վերականգնվեցին Ջոզեֆ Սմիթ Մարգարեի միջոցով: Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին Սուրբ պուրակում, երբ նա աղոթում էր ճշմարտությունն իմանալու համար:

Հետագայում Ջոզեֆը ստացավ ոսկե թիթեղները և թարգմանեց դրանք, անվանելով Մորմոնի Գիրք: Մորմոնի Գիրքը պարունակում է ուսմունքներ, որոնք մենք գանձ ենք համարում, որովհետև այն բացատրում է ժամանակին կորսված ճշմարտությունները: Մենք ստանում ենք բազմաթիվ օրհնություններ, որովհետև ունենք այդ ավետարանի ճշմարտությունները:

Ինչպիսի՞ թանկարժեք գանձեր են սրանք: ■

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԳ

- Վարդապետություն և Ուխտեր 35.17:
- "The Sacred Grove", *Children's Songbook,* 87 (կամ այլ երգ ավետարանի վերականգնման մասին)

ԵԿԵՔ ԽՈՍԵՆՔ

Կիսվեք, թե ինչպես են Հիսուս Քրիստոսի ավետարանի գանձերն օրհնում ձեր ընտանիքը:

ՊԱՏՐԱՍՏԵՔ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԳԱՆՁԱՏՈՒՓ

Կտրեք և ծալեք այս գանձատուփը ներքևի բացատրական գծագրում տրված ձևով: Կտրատեք կոպեկները, որոնց վրա նշված են ավետարանի գանձերը, և դրեք տուփի մեջ: Հաճախ նայեք տուփի մեջ գտնվող գանձերին, որոնք կհիշեցնեն ձեզ ավետարանի օրհնությունների մասին:



Որտեղ է կազմակերպվել Եկեղեցին

Ջեն Փինբորո
Եկեղեցու ամսագրեր

Եկեք միասին շրջենք Եկեղեցու պատմության մի կարևոր վայրով:

Եթե Մեգին և Լիլի Ի.-ը ցանկանում են տեսնել, թե որտեղ է կազմակերպվել Եկեղեցին, շատ հեռու գնալու կարիք չունեն: Այն գտնվում է Նյու Յորքի Ֆայեթի իրենց ժողովատան հարևանությամբ:

Եկեղեցին կազմակերպվել է ոչ թե եկեղեցու շենքում, այլ փայտաշեն տնակում: 1829թ. Մարգարե Ջոզեֆ Սմիթն այնտեղ էր ապրում Ուիթմեր ընտանիքի հետ: Նախկին տունն այլևս չկա, սակայն այս փայտաշեն տնակը կանգնած է նույն վայրում:

Եկեղեցու շենքը, որտեղ Մեգին և Լիլին հաճախում են եկեղեցի, ունի այցելուների կենտրոն, որտեղ ցուցադրվում է Ուիթմերների տունը և այնտեղ տեղի ունեցած հատուկ իրադարձությունները: ■

1. Այստեղ Ջոզեֆ Սմիթն ավարտեց Մորմոնի Գրքի թարգմանությունը:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ԲԵՆՆԻ ԿՈԼԹՈՆԻ, ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐԵՐՏ Ֆ. ԲԱՐԵԹԻ © IRI; ԵԿԵՂԵՑԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ՈՐԵՐՏ Ֆ. ԲԱՐԵԹԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ

2. Դրսում, տնից ոչ շատ հեռու երեք տղամարդիկ տեսան Մորոնի հրեշտակին և ոսկե թիթեղները: Նրանք կոչվեցին Երեք Վկաներ, որովհետև ականատես էին եղել և տեսել էին այդ թիթեղները: Նրանց վկայությունները կարող եք գտնել Մորմոնի Գրքի ներածական բաժնում:



3. 1830թ. ապրիլի 6-ին մոտ 60 մարդ եկան հատուկ ժողովի: Ջոզեֆ Սմիթը պաշտոնապես կազմակերպեց Եկեղեցին, հաղորդությունն օրհնվեց և բաժանվեց: Դա հաղորդության առաջին ժողովն էր:

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ԱՅԺՄ

11-ամյա Մեգին և 9-ամյա Լիլին մկրտվեցին ավազանում այն վայրի մոտ, որտեղ Եկեղեցու առաջին անդամներն էին մկրտվել:

Երկու աղջիկներն էլ ոգևորված էին մկրտությամբ: Երբ Լիլիի մկրտվելու հերթն էր, նա հարցազրույց անցավ իր եպիսկոպոսի հետ: «Նա հարցրեց ինձ, արդյոք ես վկայություն ունեի մարգարեի մասին և արդյոք վճարում էի իմ տասանորդը»,- պատմում է Լիլին:

Աղջիկները երկուսն էլ լավ հիշողություններ ունեն իրենց մկրտության օրից: «Երբ ես դուրս եկա ջրից, ինձ թվում էր, կարող եմ ամեն ինչ անել»,- ասում է Մեգին:

Աղջիկներն օրագրեր են պահում, որտեղ գրում են իրենց կյանքի հատուկ օրերի մասին իրենց զգացողությունները:

4. Ժողովից անմիջապես հետո Ջոզեֆ Սմիթի ծնողները և մի քանի այլ մարդիկ դրսում մկրտվեցին:

Մաքսն ու Միան փրկեցին օրը

Քրիս Դիվեր, Տեխաս, ԱՄՆ



Մաքսը պատրաստ էր սուպերհերոս խաղալուն: Նա հագավ իր կարմիր վերնաշապիկը, դրեց սուպերհերոսի գլխարկը և գնաց իր քույրիկի սենյակը:

«Միա, արի գնանք փրկելու օրը»,- ասում է Մաքսը:

ՆԿԱՐՉՈՒՄ՝ ԷՄՍԲԵԳԻՐ

Մաքսը և Միան, մտնելով հյուրասենյակ, տեսան շորերով լի զամբյուղը:

«Ինձ կօգնե՞ք»,- հարցրեց մայրիկը:

«Լավ, դրանից հետո կգնանք օրը փրկելու», -ասաց Մաքսը:

Մաքսն ու Միան օգնեցին մայրիկին բոլոր շորերը ծալել և դասավորել իրենց տեղերում:

Ապա Մաքսն աղբ տեսավ գետնի վրա: «Արի հավաքենք ամբողջ աղբը,- ասաց Մաքսը,- դրանից հետո կգնանք փրկելու օրը»:

Մաքսը և Միան տնով մեկ վազելով հավաքեցին ամբողջ աղբը:

Նրանք տեսան, որ մայրիկն ավլում է խոհանոցի հատակը: «Մենք կարող ենք օգնել քեզ»,- ասաց Մաքսը:

Միան պահեց գոգաթիակը, իսկ Մաքսն ավլեց հատակը:

«Այժմ, արի գնանք փրկելու օրը»,– ասաց Մաքսը:

Մայրիկը նայեց շուրջը և տեսավ, որ ամբողջ տունը մաքուր է: Ապա նա գրկեց Մաքսին և Միային, ասելով. «Կարծում եմ, դուք արդեն փրկել եք օրը»: ■

ՀԻՍՈՒՍԸ ՔԱՅԼՈՒՄ Է ՋՐԻ ՎՐԱՅՈՎ

«Եվ աշակերտներն երբոր տեսան նորան ծովի վերայ գնալիս, շփոթուեցան եւ ասեցին, թէ աչքի երեւոյթ բան է, եւ վախից աղաղակեցին։

Եվ Հիսուսը շուտով խոսեց նորանց հետ և ասեց. Քաջ եղեք, ես եմ՝ մի վախենաք» (Մատթեոս 14.26–27)։

ՆԱՄՈՒԵՐԸ՝ ՋԵՐԾԴ ԹԵՔՍՏՈՒՆԴԻ

ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այցելեք news.lds.org կայքէջը Եկեղեցու նորություններին ու իրադարձություններին ծանոթանալու համար

Ղեկավարների համաշխարհային ուսուցում - նոր մոտեցում

Երեց Լ. Թոմ Փերին, Երեց Դոնալդ Լ. Հոլսթրոմը և Եպիսկոպոս Դին Մ. Դեվիեսը կվարեն խմբակային քննարկումը՝ քահանայության բանալիների օգտագործման կարևորության մասին:

Գալիք ամիսներին Եկեղեցու անդամները ողջ աշխարհում կմասնակցեն ղեկավարների համաշխարհային ուսուցման նոր ոգեշնչող մոտեցմանը:

Ի տարբերություն նախորդ ուսուցման հավաքներին, այս տարի ղեկավարների համաշխարհային ուսուցումը չի հեռարձակվի որպես առանձին ծրագիր ծխի և ցցի ղեկավարների համար: Փոխարենը, այս տարվանից սկսած այն բաժանված է ինը կարճ հատվածների՝ DVD-ով և LDS.org-ում, որը քննարկում է խրախուսում բոլոր ղեկավարների, անդամների և ընտանիքների կողմից:

Ուսուցման թեման է՝ «Քահանայության միջոցով ամրացնել ընտանիքը և Եկեղեցին»: Ուսուցանման ընթացքում Առաջին Նախագահության և Տասներկու Աքայլների Քվորումի անդամները՝ Բարձրագույն մյուս Իշխանությունների և գերագույն պաշտոնյաների հետ միասին ոգեշնչված հրահանգում կտան հետևյալի վերաբերյալ.

- Ինչպես կարող են ընտանիքները ուժ և խաղաղություն գտնել քահանայության զորության միջոցով:
- Ինչպես օգնել յուրաքանչյուր ընտանիքի զգալ քահանայության օրհնությունները:
- Ինչպես են քահանայության բանալիներ կրողներն ամրացնում տները և ընտանիքները:
- Ինչպես ծառայել Քրիստոսանման ճանապարհով:
- Ինչպես մեծացնել երեխաներին լույսի և ճշմարտության մեջ:

Եկեղեցու բոլոր միավորները կստանան DVD-ի օրինակներ, ծխերի և ցցերի խորհուրդներին առաջարկվում է դիտել այն ամբողջությամբ: Նրանք այնուհետև պետք է միասին խորհրդակցեն՝ օգնելու համար ծխի և ցցի անդամներին օգուտ քաղել ուսուցումից:

Ժողովների և դասերի ժամանակ անդամները կարող են դիտել և քննարկել DVD-ի առանձին հատվածները: Ընտանիքները և անհատները կարող են դիտել հատվածները լրացուցիչ նյութերի հետ մեկտեղ wwlt.lds.org կայքում՝ իրենց ուսանումը խորացնելու համար:

Բոլոր դեպքերում, ուսուցման առավել ամրացնող մասը տեղի կունենա տվյալ հատվածի դիտումից հետո, երբ մեկնարկի քննարկումը: Երբ ղեկավարները, անդամները և ընտանիքները խորհեն իրենց լսածի և զգացածի շուրջ, կիսվեն դրանցով և վկայեն դրանց մասին, Սուրբ Հոգին կոգեշնչի և կուսուցանի նրանց կիրառել հրահանգները իրենց անձնական իրավիճակներում: Այդ փորձառությունների միջոցով ղեկավարների համաշխարհային այս ուսուցումը կօգնի ամրացնել ընտանիքները և Եկեղեցին ողջ աշխարհում: ■

Սա է Տեղը Հերիթեջ Այգում Մերի Ֆիլդինգ Սմիթի տան բակում կանգնած Երեց Մ. Ռասսել Բալլարդը, Լինդա Կ. Բըրթընը, Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդը, Էլեյն Ս. Դալտոնը, Ռոզմարի Մ. Վիքսոմը և Եպիսկոպոս Գարի Ե. Սթիվենսոնը քննարկում են քահանայությունը յուրաքանչյուր տանն ունենալու օրհնությունները:

ԱՐՁԱԳԱՆՔԵԼՈՎ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐ ԿԱՆՉԻՆ.

Զարգացնել միսիոներական մոտեցում տանը և Եկեղեցում

Հիթեր Վիթլ Ռիգլի
Եկեղեցու նորությունները և իրադարձությունները

Եպիսկոպոս Վիկտոր Նոգալեսը՝ Փարք Չակաբուկո ծխից, Բուենոս Այրես Արգենտինա Կոնգրեսո ցցից, նստած է տեղեկատու ցուցանակի դիմաց, որտեղ փակցված են նրա ծխի 37 երիտասարդ տղամարդկանց և կանանց լուսանկարները: Երբ նրանցից մեկը մեկնում է միսիայի, նա երկտող է գրում նկարի վրա:

«Իմ երիտասարդները շատ ոգևորվում են, երբ գալիս են իմ գրասենյակ և տեսնում են նկարները և երկտողերը», - ասում է նա: «Դա մղում է նրանց պատրաստվել իրենց սեփական միսիային»:

Բուենոս Այրեսի այս ծուխը մարմնավորում է միսիոներական աշխատանքի ոգին: 2012թ. առաջին վեց ամիսներին 19 երիտասարդներ, որոնցից 14 նորադարձներ էին, թողեցին իրենց տները՝ ութ երկրներում լիաժամկետ միսիաներ ծառայելու համար: Ունակ երիտասարդների ավելի քան 80 տոկոսը պարտավորվել են ծառայել միսիայում:

Վերջին տարիներին Եկեղեցու ղեկավարները մի քանի անգամ կոչ են արել, որպեսզի միսիայում ավելի մեծ թվով երիտասարդներ ծառայեն:

2005թ. ապրիլի գերագույն համաժողովին, նրանից հետո, երբ Եկեղեցին թողարկեց *Քարոզիր Իմ Ավետարանը. Միսիոներական ծառայության ուղեցույցը,* Երեց Մ. Ռասսել Բալլարդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, կոչ արեց ընտանիքներին և ղեկավարներին միսիոներական ոգի զարգացնել և պատրաստել թվով ավելի շատ երիտասարդ տղամարդկանց և կանանց պատվարժան ծառայության, օգնելով նրանց հասկանալ, թե ովքեր են իրենք, և ուսուցանելով նրանց վարդապետությունը (տես "One More," *Liahona*, May 2005, 69):

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հայտարարությունը 2012թ. հոկտեմբերի գերագույն համաժողովին միսիոներների տարիքային սահմանափակման նվազեցման մասին մեկ այլ հիշեցում է, որ Տերը արագացնում է Իր աշխատանքը:

Այսօր շատ ընտանիքներ և Եկեղեցու ղեկավարներ որդեգրում են այդ ուղերձներն իրենց սրտերում և հիմնում են իրենց տարածքներում միսիոներական ծառայության հարուստ ավանդույթներ:

Օգնել երիտասարդներին հասկանալ, թե ովքեր են իրենք

«Ինչպե՞ս եք կարողացել ձեր երիտասարդներից այդքան շատերի մոտ ծառայելու ցանկություն առաջացնել» հարցին, եպիսկոպոս Նոգալեսը պատասխանել է. «Երբ ես կանչվեցի որպես եպիսկոպոս, իմ առաջին մտահոգությունը իմ ծխի երիտասարդներն էին, և ես հստակ բացատրեցի ծխի մյուս ղեկավարներին, որ մենք պետք է դառնայինք երիտասարդների կյանքի մասը»:

Օրինակ, Չակաբուկոյի բոլոր միսիոներները մինչև իրենց մեկնելը ծխում կոչումներ ունեին: Հաճախ նորադարձները և ավելի քիչ ակտիվ անդամները հրավիրվում էին ծառայելու որպես ուսուցիչներ, ինչն օգնում էր նրանց պատրաստվել ուսուցանել ավետարանը:

Եպիսկոպոս Նոգալեսը նաև կազմակերպել է երիտասարդների հոգևոր նախապատրաստումը միսիային՝ հնարավորություն տալով նրանց աշխատել տեղական լիաժամկետ միսիոներների հետ:

Նվիրելով իրենց ծխի երիտասարդներին, Եկեղեցու տեղական ղեկավարները և անդամները փոխհատուցվեցին, տեսնելով, թե ինչպես մեծապես աճեց միսիոներական ոգին:

Միսիոներական մտածելակերպ ընտանիքում

Գարթ և Էլոյս Անդրուսները՝ Դրեյֆերից, Յուտա, ԱՄՆ, գիտեն, ինչ է նշանակում ունենալ միսիոներական մտածելակերպ ընտանիքում: Նրանք ունեն 17 թոռներ, որոնք ծառայել են միսիաներում, իսկ հենց իրենք ծառայել են վեց անգամ:

Ձեր ընտանիքում միսիոներական ծառայության ոգի զարգացնելը պետք է սկսվի նրանց վաղ տարիքից, ասել է Եղբայր Անդրուսը:

Քույր Անդրուսը համաձայն է. «Դուք չպետք է միսիայում ծառայելը թողնեք որպես մի լուռ ակնկալիք, այլ պետք է խոսեք այդ մասին ձեր երեխաների և թոռների հետ այնպես, որ *երբ* կամ *եթե* հարցեր չառաջանան»:

Երիտասարդներին ուսուցանելը, թե ովքեր են իրենք, միսիոներական ծառայության օրինակ ցույց տալով, նույնպես կարևոր է: Եղբայր և Քույր Անդրուսները ընդունել են իրենց առաջին կանչը 1980թ.՝ երբ իրենց ամենափոքր տղան մեկնում էր իր միսիային:

Թոռներից մեկը գրեց նրանց, երբ ստացավ նրանց նվերը, որը պետք է օգներ իրեն պատրաստվել իր միսիային: «Նա շնորհակալություն հայտնեց մեզ նվերի համար, սակայն ասաց. «Շատ ավելի կարևոր է շնորհակալություն հայտնել ձեզ ձեր օրինակի համար»», - ասել է քույր Անդրուսը:

ՍՈՒՆԼԱՆԻՆԻ ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ՖՈՒԼ. ԶԱՐԿԻՆՈ

Եպիսկոպոս Վիկտոր Նոգալեսը կանգնած է տեղեկատու ցուցանակի մոտ, որտեղ փակցված են նրա ծխի բոլոր երիտասարդների, ներառյալ ներկայումս միսիաներում ծառայողների լուսանկարները:

Վարդապետությունն ուսուցանելը

«Մեր երիտասարդները իրավունք ունեն ակնկալելու, որ իրենց ծնողները և Եկեղեցու ղեկավարները և ուսուցիչները կտեսնեն, որ իրենք գիտեն և հասկանում են Հիսուս Քրիստոսի ավետարանը», - ասել է Երեց Բալլարդը: «Սուրբ Հոգին կհաստատի ճշմարտությունը նրանց սրտերում և կվառի Քրիստոսի Լույսը նրանց հոգիներում: Եվ այդ ժամանակ դուք կունենաք *ևս մեկ* լիովին պատրաստված միսիոներ» (M. Russell Ballard, “One More,” 71):

Բուենոս Այրեսից մոտ 9600 կմ. Հեռավորության վրա գտնվող գյուղական Հորզշու Բենդ ճյուղում, Բոյզի հարևանությամբ, Այդահո, ԱՄՆ, նույնպես գրանցվել է միսիոներական ծառայության կտրուկ աճ, որովհետև ընտանիքները և ղեկավարները էլ ավելի են հզորացրել իրենց երիտասարդներին ավետարանն ուսուցանելու իրենց ջանքերը:

75 հոգուց բաղկացած փոքր ճյուղից ինը երիտասարդներ ծառայում են միսիաներում:

Երեց Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, շեշտել է ծառայելու պատճառները և օգուտները. «Բոլոր միսիոներները . . . ծառայում են միակ հույսով, որ դարձնում են մյուս մարդկանց կյանքն ավելի լավը: Միսիայում ծառայելու որոշումը կշտկի միսիոների, նրա ամուսնու և նրանց զավակների հոգևոր ճակատագիրը սերունդներ շարունակ: Ծառայելու ցանկությունը անձի դարձի գալու, արժանավորության և նախապատրաստության բնական արդյունք է» («Խնդրեք միսիոներներին: Նրանք կարող են օգնել ձեզ», *Լիահոնա,* նոյ. 2012, 18):

Մարտին Վոքերը՝ Էմերեթ Այդահո ցցի նախագահը, համաձայնվում է. «Միսիայում ծառայելը երիտասարդին այնպիսի ուղու վրա է դնում, որը կազդի սերունդների վրա: Ցցում մենք անում ենք հնարավը ամեն-ինչ՝ պատրաստելու համար երիտասարդներին միսիոներական ծառայությանը»:

Այդ պատրաստության մասն է կազմում երիտասարդներին վարդապետությունն ուսուցանելը: Հորզշու Բենդ ճյուղի երիտասարդները կարող են օգտվել միսիոներների նախապատրաստության շաբաթական դասերից, որոնք ուսուցանում է միսիայի նախկին նախագահը: Այդ ուսուցումը լրացնում է միսիոներների ուսուցմանը, որը անց է կացվում ցցի երիտասարդների միսիոներական պատրաստման ամենամսյա ժողովին, և Ահարոնյան Քահանայության ամենամյա ճամբարին:

Լառեն Ադամը, Եղբայր և Քույր Անդրուսների վեց երեխաներից մեկը, իր ամուսնու՝ Ջիմի հետ միասին 2007–2009թթ. ծառայել է Կոպենհագեն Դանիա միսիայում: Նա վկայել է տանը երեխաներին ավետարանն ուսուցանելու կարևորության մասին:

«Ամենամեծ բաներից, որ դուք կարող եք անել՝ օգնելու համար ձեր երեխաներին վկայություն զարգացնել միսիոներական աշխատանքի մասին, դա ձեր ընտանեկան երեկոները և ընտանիքով սուրբ գրությունների ուսումնասիրությունն անցկացնելն է», - ասել է նա: «Եթե դուք նրանց տաք ավետարանի ուսումնասիրության և ավետարանական գիտելիքի այդ ամուր հիմքը, նրանք շատ ավելի լավ պատրաստված կլինեն և շատ ավելին կիմանան ավետարանի մասին»: ■

Եկեղեցում ծառայող երիտասարդ միսիոներները ուրախություն են գտնում իրենց ծառայության մեջ

Քերոլայն Քարթեր
Եկեղեցու նորությունները և իրադարձությունները

Երեց Էռնեստո Սարաբիան ամեն օր իր միսիայի ժամանակ կրում էր միսիոներական սև կրծքանշանը: Սակայն միսիոներական նրա հանձնարարությունը յուրահատուկ էր. Երեց Սարաբիան ծառայում էր որպես Եկեղեցում ծառայող երիտասարդ միսիոներ (ԵԾԵՄ) Մեքսիկա Հերմոսիլլո միսիայի գրասենյակում:

«Մենք հասկանում ենք, որ մեր երիտասարդ տղամարդկանցից և կանանցից ոմանց համար ճիշտ չի լինի դիմակայել լիաժամկետ միսիոներական ծառայության բարդություններին և խնդիրներին», - ասել է Երեց Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից; Բայց դա, նրա խոսքերով, չի նշանակում, որ նրանք չեն կարող մասնակցել միսիոներական ծառայության օրհնություններին (“One More,” *Liahona*, May 2005, 69):



Երեց Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, ասել է. «Միսիան Աստծուն և մարդկությանը ծառայելու կամավոր աշխատանք է» («Խնդրեք միսիոներներին: Նրանք կարող են օգնել ձեզ», *Լիահոնա,* նոյ. 2012, 18), և կան այդ ծառայությունը մատուցելու շատ ճանապարհներ:

Նրանց համար, ովքեր հարգալից պատճառներով ազատված են լիաժամկետ միսիոներական ծառայությունից, կամ ովքեր ստիպված են ավելի շուտ վերադառնալ տուն, ԵԾԵՄ ծրագիրը իմաստալից միսիոներական ծառայության հնարավորություն է ընձեռում:

Ծառայելու պահանջները

ԵԾԵՄ-ը պետք է լինեն ֆիզիկապես, մտավոր, հոգևոր և էմոցիոնալ առումով ունակ կատարելու իրենց կոչման պարտականությունները, որոնց համար ընտրվում են:

ԵԾԵՄ-ի հանձնարարությունները տևում են 6-ից 24 ամիս և կարող են ներառել շաբաթական մի քանի օրից մինչև լրիվ դրույքով աշխատանք: Կան հնարավորություններ ծառայելու համայնքներում, ինչպես նաև տնից: Պոտենցիալ ԵԾԵՄ-ի հանձնարարությունները կարող են ընդգրկել ընտանեկան պատմության հետազոտություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, օգնականների աշխատանք միսիաների գրասենյակներում, եպիսկոպոսի պահեստներում և այլն:

Ընտանիքի և Քահանայության աջակցությունը

Ծնողները, քահանայության ղեկավարները և Եկեղեցու անդամները կարող են օգնել պոտենցիալ ԵԾԵՄ-ին պատրաստվել ծառայելուն:

Քույր Էլիզա Ջոյ Յանգի ընտանիքը ամուր աջակցություն է եղել իր համար, մեքենայով հասցնելով նրան Եկեղեցու գրասենյակներ և բերելով ետ՝ տուն, Սիդնեյում, Ավստրալիա:

Երեց Մայքլ Հիլամը, որն աշխատում է Հոնգ Կոնգի Բաշխման կենտրոնում, ասել է. «Վաղ առավոտյան սեմինարիայի իմ ուսուցիչները և Երիտասարդ Տղամարդկանց ղեկավարները օգնել են ինձ պատրաստվել»:

Զոհաբերությունը օրհնություններ է բերում

Քույր Յանգը զոհաբերել է կեսդրույքով աշխատանքից ազատ իր օրերը՝ Եկեղեցում միսիա ծառայելու համար: Նա ասել է. «Ես ինձ ավելի մոտ եմ զգում իմ Երկնային Հորը, իմանալով, որ օգնում եմ Նրան»:

Բացի հոգևոր օրհնություններից, Եկեղեցում միսիա ծառայելը երիտասարդ միսիոներներին արժեքավոր հասարակական և մասնագիտական հնարավորություններ է տալիս: «Իմ միսիան ցույց տվեց ինձ, որ ես կարող եմ աշխատել սովորական աշխատավայրում», - ասել է Քույր Յանգը: (Նախկինում նա աշխատել է միայն այնպիսի աշխատավայրում, որտեղ իրեն օգնել են:)

Թեև ոչ բոլոր երիտասարդ չափահասները, որոնք ծառայելու ցանկություն ունեն, կարող են ծառայել, մեծ ջանքեր են գործադրվում, որպեսզի հնարավորություն ստեղծվի յուրաքանչյուրի համար: Երիտասարդ տղամարդիկ և կանայք, ովքեր ցանկանում են ծառայել այս ճանապարհով, կարող են զրուցել իրենց եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ, որը համապատասխան հնարավորություններ կգտնի նրանց համար:

Կարդացեք ավելին news.lds.org կայքում, որոնում կատարելով «եկեղեցում ծառայող երիտասարդ միսիոներներ» բառերով: ■

Երիտասարդ Կանանց և Սփոփող Միության գերագույն ղեկավարները շրջագայում են Ասիայի տարածքով

Բրենդա Ֆրանդսեն, Ասիայի տարածքի լրատվական մասնագետ
Դեյվիդ Օ. Հիփսի, Փոլ Սթիվենսի և Լինդա Ռեյ Փոնդ Սմիթի մասնակցությամբ

2012թ. նոյեմբերին ինը օր Մերի Ն. Քուքը՝ Երիտասարդ Կանանց գերագույն նախագահության առաջին խորհրդականը, և Լինդա Ս. Ռիվսը՝ Սփոփող Միության գերագույն նախագահության երկրորդ խորհրդականը, ուսուցանեցին և ոգեշնչեցին երիտասարդ և մեծահասակ քույրերին ողջ Ասիայի տարածքից:

Ուղևորությունը համընկավ *Ինձ հետևիր* երիտասարդների փոփոխված ուսումնական ծրագրի հայտարարության հետ, որը Երիտասարդ Տղամարդիկ, Երիտասարդ Կանայք և Կիրակնօրյա Դպրոցի երիտասարդների դասարանները կսկսեն օգտագործել 2013թ. հունվարին: Նոր ուսումնական ծրագիրը միտված է օգնելու ուսուցիչներին ուսուցանել ավելի նման Փրկչի ուսուցանելու ձևին և զարգացնել ավելի ամուր կապեր դասարանի անդամների միջև:

Ասիայի տարածք Քույր Քուքի և Քույր Ռիվսի այցելությունից հետո Ասիայի շատ երիտասարդներ և նրանց ծնողները նշեցին, որ այժմ ավելի հետաքրքրված են մաքրելու և վերակենտրոնացնելու իրենց կյանքը և դառնալու օրինակներ իրենց տեղական համայնքների համար:

Տայվանում Մերի Ն. Քուքը և Լինդա Ս. Ռիվսը հանդիպեցին տարածքային իշխանություններին և Տայվանի քահանայության ղեկավարներին և անդամներին:

ՀՈՆԳ ԿՈՆԳՈՒՄ՝ ՅՈՆԳ ՉԵՆ-ՎԵՆԻ

Հոնգ Կոնգում Քույր Ռիվսը խոստացավ երիտասարդներին. «Եթե դուք մաքուր մնաք ձեր կյանքում, դուք կարող եք վստահությամբ կանգնել ցանկացած մարդու առաջ»:

Ոգեշնչված նրա խոսքերով 12-ամյա Թանգ Կակ Կեյը ժողովից հետո ասաց. «Ես գիտեմ, որ պետք է կարդամ Մորմոնի Գիրքն ամեն օր: Ապաշխարել սովորելը և արդար ապրելը այն է, ինչ ինձ սովորեցնում է անել *Երիտասարդներին ամրացնելու համար* գրքույկը, որպեսզի Քրիստոսի Լույսը և իրական երջանկությունը կարողանան ճառագայթել իմ միջոցով»:

Հնդկաստանում Քույր Քուքը հանդիպեց անդամների հետ նոր հավաքատանը Չենայ Հնդկաստան Շրջանում և նոր Հայդերաբադ Հնդկաստան Ցցում, և հորդորեց երիտասարդ չափահասներին պատրաստվել ապագային: «Որակավորում ձեռք բերեք կրթության միջոցով, որպեսզի այդ հմտություններն օգնեն ձեզ կառուցել արքայությունը: Կենտրոնացեք ձեր ընտանիքի և նրա վրա, ինչ կարող եք անել, որպեսզի օրհնեք ձեր ընտանիքի անդամներին, ինչպես նաև ձեր հոգևոր պատրաստվածության վրա, որպեսզի արժանի լինեք հոգևոր հուշումներին և իմանաք, ուր գնաք և ինչ անեք», - կոչ արեց նա:

Ինդոնեզիայում Քույր Ռիվսը մասնակցեց նոր Սուրակարտա Ինդոնեզիա ցցի առաջին համաժողովին: «Մենք զգացինք նրանց խոնարհ և սիրող հոգիները: Ինչպիսի~ հավատարիմ անդամներ», - ասաց նա:

Այնուհետև Քույր Ռիվսն այցելեց Մալազիա, որտեղ Սփոփող Միության մի խումբ քույրերի հետ քննարկեց Սփոփող Միության՝ որպես Մալազիայում մի կազմակերպության հրատապ խնդիրները և թե ինչպես կարող է Եկեղեցին ուղղություն և ոգեշնչում տրամադրել:

Տայվանում Քույր Ռիվսը նշեց տեղի անդամների ուժն ու նվիրումը: «Մենք այնքան ուրախ ենք իմանալով նրանց հավատարիմ կյանքի և տաճարային հետևողական հաճախելիության մասին:. . . Անդամները սիրո օրինակներ են իրենց ընկերների և հարևանների համար», - ասաց նա: ■

Ողջ աշխարհում երիտասարդները ցույց են տալիս, որ կանգնած են սուրբ տեղերում:

Երիտասարդների լուսանկարների հայտարարություն

Այս տարվա Միացյալի թեման է՝ «Կանգնեք սուրբ տեղերում, և մի շարժվեք» (ՎԱՈՒ 87.8): Երիտասարդ տղամարդիկ և կանայք, *Լիահոնան* սպասում է ձեր լուսանկարներին, որոնցում դուք կանգնած կլինեք սուրբ տեղերում: Լուսանկարները կարող են ցուցադրել ձեզ ժամանակ անցկացնելիս ընտանիքի հետ, ծառայելիս, միսիոներական աշխատանք կատարելիս, արվեստով զբաղվելիս, ավետարանն ուսումնասիրելիս, բնությունը բացահայտելիս և այլն: Ահա, թե ինչպես կարող եք ներկայացնել ձեր լուսանկարը.

- Խնդրեք որևէ մեկին լուսանկարել ձեզ սուրբ տեղում գտնվելիս:
- Է-փոստով ուղարկեք բարձրորակ լուսանկարը հետևյալ հասցեով. liahona@ldschurch.org:
- Ավելացրեք մի գրություն, թե ինչու է այդ վայրը սուրբ ձեզ համար:
- Ձեր է-նամակում ընդգրկեք ձեր լրիվ անունը, ծննդյան ամսաթիվը, ծուխը և ցիցը (կամ ճյուղը և շրջանը), և ձեր ծնողների է-փոստի հասցեները:

Ամբողջ աշխարհից երիտասարդների լուսանկարները կտպագրվեն գալիք համարում:

Առաքյալն այցելում է Մարոկո

2012թ. դեկտեմբերին, Արևմտյան Աֆրիկայի Սիերա Լեոնե քաղաքում Եկեղեցու 3000-րդ ցցի ստեղծումից հետո, Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, հատուկ այց կատարեց Մարոկոյի Ռաբաթում գտնվող Եկեղեցու հեռավոր և փոքրիկ ճյուղին:

Կիրակի օրը տեղի ունեցած հատուկ հոգևոր երեկոյի ժամանակ Երեց Հոլլանդը կիսվեց այն սիրով, որ Եկեղեցու ղեկավարները տածում են Եկեղեցու յուրաքանչյուր անդամի հանդեպ ողջ աշխարհով մեկ, անկախ նրանից, թե որքան սակավ են նրանք քանակով կամ որտեղ են գտնվում:

«Դուք մոռացված չեք, և դուք հրաշալի աշխատանքի մաս եք կազմում, երբ Տերն արագացնում է Իսրայելի հավաքումը այս վերջին և կարևոր տնտեսությունում», - ասաց նա:

Նվիրագործվել է Թեգուսիգալպա Հոնդուրաս Տաճարը

2013թ. մարտի 17-ին, կիրակի օրը, մշակութային տոնակատարությունից և երեքշաբթյա բաց դռներից հետո, Թեգուսիգալպա Հոնդուրաս Տաճարը նվիրագործվեց երեք նիստերով, որոնք հեռարձակվեցին Եկեղեցու բոլոր միավորներին Հոնդուրասում և Նիկարագուայում:

Հոնդուրասի անդամները, ովքեր սովորաբար մի քանի ժամ ճանապարհ էին անցնում Գվատեմալա Սիթի Գվատեմալա Տաճար հասնելու համար, ուրախ են տեսնելու երկրում նվիրագործված առաջին տաճարը: Տաճարն առաջինն էր, որի մասին Առաջին Նախագահությունը հայտարարեց իր նամակում 2006թ. հունիսի 9-ին, իսկ կառուցման աշխատանքները ներկա վայրում մեկնարկեցին 2009թ. սեպտեմբերի 12-ին:

Նախագահ Մոնսոնն այցելում է Գերմանիա

2012թ. վերջում Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը ճանապարհորդեց Գերմանիա՝ հանդիպելու Եկեղեցու անդամներին Համբուրգում, Բեռլինում, Մյունխենում և Ֆրանկֆուրտում, և հորդորելու նրանց հետևել Հիսուս Քրիստոսին:

«Նա ուսուցանեց ներողամտություն՝ ներելով», - ասաց նա անդամներին Ֆրանկֆուրտում: «Նա ուսուցանեց կարեկցանք՝ լինելով կարեկցող: Նա ուսուցանեց նվիրում՝ նվիրաբերելով Իրեն»:

Սուրբ Հոգին ուսուցանում է ինձ

Այն ժամանակից ի վեր, երբ իմ ընտանիքը միացավ Եկեղեցուն, ես տեսել եմ այն զորությունը, որը գալիս է *Լիահոնան* կարդալու արդյունքում: Այդ խորաթափանց խոսքերի միջոցով է, որ ես ոգեշնչվել եմ ծառայել միսիայում: Շատ թեմաներ են քննարկվում ամսագրում, սակայն ինձ համար ամենակարևորն այն է, ինչ Սուրբ Հոգին է ուսուցանում ինձ ամեն անգամ, երբ ես կարդում եմ: Իսկապես, մենք ազատ կլինենք, անգամ «թշնամու տարածքում» (տես Բոյդ Ք. Փաքեր, «Ինչպես գոյատևել թշնամու տարածքում», *Լիահոնա,* հոկտ. 2012, 24), եթե ուսումնասիրենք, կարդանք և կիրառենք ուսուցանվող սկզբունքները: Փրկիչն ապրում է, քահանայությունն երկրի վրա է, և Աստվածն երկնքում է:

Նյութը՝ Տ. Սենյանջ, Ուգանդա

Ուղղումներ

2012թ. հոկտեմբերի *Լիահոնայում* սխալ հղում էր կատարվել լուսանկարներին, որոնք ուղեկցում էին «Հիմնել առաջին ցիցը Հնդկաստանում» պատմությունը, էջեր 76–77: Լուսանկարները արվել են Քույր Գլեդիս Վիգի կողմից: Մենք ներողություն ենք հայցում սխալի համար:

2012թ. դեկտեմբերի *Լիահոնայում* Վիջիլների ընտանիքը, որի մասին պատմում է «Սուրբ փոխակերպումներ» հոդվածը, էջ 36, մկրտվել է 2010թ. հուլիսին, ոչ թե 2011թ. հունիսին: Նաև, Անդրեա Վիջիլը ծնվել է 2012թ. հուլիսին, ոչ թե օգոստոսին:

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Լորենզո Սնոու -ի մեջ էջ 2-ի նկարը սխալ անվանում է ստացել: Դա Նախագահ Սնոուի որդու՝ Օլիվեր Գոդարդ Սնոուի նկարն է: Նաև, էջ 28-ի նկարում Բրիգամ Յանգ Կրտսերի և Ֆրենսիս Մ. Լիմանի անունները պետք է տեղերով փոխվեն:

ԽՄԵԼ ՑԱՅՏԱՂԲՅՈՒՐԻՑ

Ահարոն Լ. Վեսթ
Խմբագիր, Եկեղեցու Հրատարակչություն

Տաճարների գեղեցկության մասին խոսելիս մենք սովորաբար հիշատակում ենք սրաձողերի, պատուհանների և որմնանկարների մասին: Ակնածանքով ենք խոսում մկրտության ավազանների, օժտման, կնքման և սելեստիալ սենյակների մասին:

Բայց երբ մարգարեն Տիրոջն է նվիրագործում տաճարը, նա նվիրագործում է ոչ միայն գեղեցիկ մասերը, որ բոլորը նկատում են, այլ ամբողջ շինությունը: Կանզաս Սիթի Միսսուրի Տաճարի նվիրագործման աղոթքում Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասաց. «Մենք նվիրագործում ենք այն հողը, որի վրա կանգնած է այս տաճարը: Մենք նվիրագործում ենք այս գեղեցիկ կառույցի բոլոր մասերը՝ անտեսանելի հիմքից մինչև Մորոնիի հրաշալի արձանը, որը պսակում է այս կառուցի ամենաբարձր կետը»:[1] Երբ Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասաց Օգդեն Յուտա Տաճարի նվիրագործման աղոթքը, նա նվիրագործեց «հիմքը, պատերը, հատակը, առաստաղը, աշտարակը և կառույցի բոլոր մասերը», և աղոթեց «բոլոր մեխանիկական մասերի, լուսավորման լարերի և հարմարանքների, հովացման համակարգի, վերելակների և այդ գեղեցիկ կառույցին պատկանող բոլոր բաների» պաշտպանության համար:[2]

Ես երախտապարտ եմ, որ Տերը ոգեշնչել է Իր մարգարեներին՝ նվիրագործել տաճարների բոլոր մասերը: Թեպետ դռան սոնակը կամ լուսամփոփը ավելի քիչ նպատակ ունեն, քան կնքման սենյակի զոհասեղանը, այդ փոքր մասերը ևս ծառայում են տաճարի առավելագույն, վեհ նպատակին:

Հիսուս Քրիստոսը կենդանի ջրի աղբյուր է:

Այդ փոքր մասերից մեկն օգնեց ինձ կարևոր դաս քաղել: Մի օր Սոլթ Լեյքի Տաճարում էի, և մահացածների համար ծեսին մասնակցելուց հետո պատրաստվում էի դուրս գալ հանդերձարանից: Նկատելով խմելու ցայտաղբյուրը, զգացի, որ ծարավ եմ և խոնարհվեցի, որ մի կում ջուր խմեմ: Մի հուշում եկավ միտքս.

Դու ջուր ես խմում տաճարում, բայց արդյո՞ք խմում ես այստեղ առկա կենդանի ջուրը:

Դա ոչ թե ծանր կշտամբանք էր, այլ պարզապես թեթև հանդիմանություն և հոգու խորքը ներթափանցող հարց:

Իմ պատասխանն էր՝ ոչ: Ես լիարժեք չէի խմում տաճարի կենդանի ջրից: Ես պետք է ընդունեի, որ մի քանի րոպե առաջ միտքս թափառում էր, երբ մահացածների համար ծեսեր էի ստանում: Թեպետ լավ էի աշխատել այն մարդկանց համար, ովքեր իմ օգնության կարիքն ունեին, ես թույլ չէի տվել ստանալ ինձ անհրաժեշտ ողջ օգնությունը:

Այժմ ամեն անգամ տաճար գնալիս ես փնտրում եմ ցայտաղբյուրը և մոտենում եմ, որ խմեմ: Ես հարցնում եմ ինքս ինձ՝ արդյո՞ք լիարժեք խմում եմ կենդանի ջրի աղբյուրից: Իմ պատասխանն է՝ ոչ այնքան լիարժեք: Իսկ իմ ծարավը սաստկանում է: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Thomas S. Monson, in “Kansas City Missouri Temple: ‘Beacon of Divine Light’—an Offering of Hands and Hearts,” *Church News,* May 12, 2012, ldschurchnews.com.
2. Joseph Fielding Smith, in “Ogden Temple Dedicatory Prayer,” *Ensign,* Mar. 1972, 12.

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ © ISTOCKPHOTO.COM/AMPHOTORA

ՆԿԱՐԸԸՆ՝ ՌՈԲԵՐՏ Թ. ԲԱՐԵՏԻ

ՎԻԼՖՈՐԴ ՎՈՒԴՐՈՒՖ

Վիլֆորդ Վուդրուֆը միսիա է ծառայել Մեծ Բրիտանիայում 1840-ականներին: Իր ծառայության շնորհիվ ավելի քան 1000 մարդիկ են **մկրտվել:** Վիլֆորդ Վուդրուֆն ավելի ուշ ծառայել է որպես **Մենթ Ջորջ Յուտա Տաճարի** նախագահ: Երբ Եկեղեցու Նախագահն էր, նա ջանքեր չխնայեց, որպեսզի **Յուտան** դառնա նահանգ: Նա նաև հայտնություն ստացավ և հրատարակեց **Պաշտոնական հայտարարություն 1**-ը՝ Սրբերին հրահանգելով, որ դադարեցնեն բազմակնությունը:

Դերասանները ներկայացնում են տեսարաններ Հիսուս Քրիստոսի կյանքից առցանց տեսանյութերում՝ biblevideos.lds.org կայքում; Փրկչի կյանքից անցած շաբաթվա մի քանի տեսարաններ տրված են էջ 26-ի հոդվածում: «Հիսուս Քրիստոսի առաքելությունը և ծառայությունը» հոդվածում (էջ 18), Երեց Ռասսել Մ. Նելսոնը ուսուցանում է Փրկչի ծառայության չորս ուղղությունները, որոնք մենք կարող ենք կիրառել մեր կյանքում:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 021078420 1 7